

Բ. ՎԵՐՆՈՎԵԼ

ԱՌԱԽԱՏԱՆ  
ԻՎԱՆ ԱՀԵՂԻ  
ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ  
ԺԱՄԱՆԱԿ



9(47)

4-50

2684

ԿԵՐՊԻՆՈՒՅՆ, P.:

Խոհանորությունը բնակչ  
ամեր քաջանոր. ճամանակ.

9(47).13

ԳՐԱԴԱՏԱՐԱՆԻ ԹԱՂՈՔ ՏԱՐԿԱՐԱՆԻ, ՄԻԱՅՆԻ

Բ. ՎԵՐԽՈՎԵՆ  
Համարված է 1901 թ.

ՌՈՒՍԱՍՏԱՆԸ  
ԻՎԱՆ ԱՀԵՂԻ

ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿ

Հ 326/5



Б. ВЕРХОВЕНЬ  
РОССИЯ В ЦАРСТВОВАНИЕ  
ИВАНА ГРОЗНОГО

Государственное издательство полит. литературы  
Ереван • 1939

ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԵԿՈՆՈՄԻԿԱՆ ԽVI ԴԱՐԻ ԱՌԱՋԻՆ  
ԿԵՍՈՒՄ



դարը Արեմտյան Յեղրոպայի պատմության մեջ մտել է վորպես կապիտալի այսպես կոչված նախասկզբնական կուտակման ժամանակաշրջանի սկիզբ: 1492 թ. Քրիստոֆոր Կոլումբոսը հայտնագործեց Ամերիկան: Դրան հետևեցին աշխարհագրական մի շարք ուրիշ մեծ հայտնագործություններ: Բացվեցին նոր ճանապարհներ դեպի Հնդկաստան՝ յեղրոպացիների յերեակայության մեջ հեքիաթացին հարստություններ ունեցող յերկիրը: «Վոսկին մի զարգանալի առարկա յէ: Ով նրան տիրում է, նա տեր է այն ամենի, ինչ նա ուզում է»—գրում եր Կոլումբոսն իր նամակներից մեկում:

Մինչև աշխարհագրական մեծ հայտնագործությունները, Արեմտյան Յեղրոպայի կապն Արենլը հետ իրականացվում եր Միջերկրական ծովի վրայով: XII—XIII դարերում Արենլը հետ տեղի ունեցող առևտրի զարգացման կապակցությամբ առանձնահատուկ նշանակություն ձեռք բերին իտալական քաղաքներ Վենետիկը, Ճենովան և ուր: Նրանք առևտրական մոնոպոլիստներ դարձան Միջերկրական ծովի վրա և XIII դարում փոխարկվեցին ամենահարուստ առևտրական քաղաք—հանրապետությունների: Թուրքերի կողմից 1463 թ. Բյուզանդիայի գրավումից և նրանց կողմից իրենց տիրապետության հաստատումից հետո Վենետիկն ու Ճենովան կորցրին իրենց առևտրական նշանակությունը: Թուրքերն իրենց տիրապետությունը տարածեցին ամբողջ Փոքր Ասիա-

լը, Սիրիայի, Պաղեստինի և Հյուսիսային Աֆրիկայի վրա: Թուրքական տիբապետության հաստատումը Մերձավոր Արևել-քում քայլայեց յելրոպական և, առաջին հերթին, խորակական առևտուրը: Առևտրական վաղեմի ճանապարհներն անկման հասան: Թուրքերը սկսեցին բարձր մաքսեր դնել արևելյան ապրանքների վրա: Այդ վոսկու և արծաթի արտահոսում առաջացրեց գեպի Ասիա: Յելրոպական յերկրները հարկադրված ենին վոսկու և արծաթի նոր աղբյուրներ վնասուել:

Յելրոպական միջերկրածովային առևտուրի ճգնաժամի այս իրադրության մեջ ե՛լ ամելի յին ուժեղանում գեղի Արևելք տանող նոր առևտրական ճանապարհների տենչպատին վորոնումները: Այդ վորոնումների մեջ մեծ նախաձեռնություն յերևան քերին Պորտուգալիան և Խսափնիան, վորոնք ընկած եյին գեպի Հնդկաստան և գեպի վերստին հայտնագործված Ամերիկան տանող նոր ճանապարհների հատման տեղում: Հենց այդ բանն ել նրանց առաջ քաշեց ԽVI դարում առաջին տեղը յելրոպական մյուս յերկրների մեջ:

Վոսկի վորոնելու նպատակով բազմաթիվ արկածախնդիրներ և վաստակի սիրահարներ հաղարներով նետմեցին գեպի նոր յերկրները և գեպի հին յերկրները նոր ճանապարհներով: «Ավագակությունն ու ալվարառությունը—խսպանական արկածախնդիրների միակ նպատակն է Ամերիկայում . . .», —գրում և Մարքսն իր ժամանակագրական քաղվածքներում: Ամերիկայում, Հնդկաստանում, Աֆրիկայում պորտուգալական, խսպանական, հոլանդական և մյուս վաճառականներն ու աղնվականները կողոպտում եյին տեղական բնակչությանը, Փիզիկապես բնաջնջում եյին հարյուր հազարավոր մարդկանց: Կողոպտված հարստությունը փոխադրվում եր Յելրոպա և բազա յեր ծառայում Արևմտյան Յելրոպայի կամիսալիստական զարգացման հիմնադրման համար:

«Լոսկու և արծաթի հանքավայրերի հայտնագործումն Ամերիկայում, —գրում եր Մարքսը «Կապիտալ»-ի I հատորում, — բնիկ ազգարնակության արմատախրումն, սուրկացումն ու հանգարաններում վողջ-վողջ թագելը, Արևելյան Հնդկաստանի նոր սկսվող նվաճումն ու կողոպտումը, Աֆրիկան սկամորթների առևտրային վորսի արգելոց դարձնելն արտադրության կապիտալական զարագլեսի արշալույսն են նշում»<sup>1</sup>:

<sup>1</sup> Մարքս, Կապիտալ, I հատ., XXIV դւ., էջ 722, Հայկուսհրատ, 1933 թ.:

Կապիտալիզմի պատմությունը՝ յերբեք չի յեղել խաղաղ իշխանության պատմության մէջ մուծված-գրպած և, Մարքսի արտահայտությամբ՝ հրի ու սրի բոցավառող լեզվով:

Ցեմել Արևմտյան Յելլոպայում սկզբում եր կապիտալիստական արտադրության արշալույսը, ապա XIX դարի առաջին կեսի Ռուսաստանը իր զարգացմամբ հետ եր մուտք արևմտա-յելլոպական առաջավոր յերկրներից։ Այդ հետամնացությունը բացատրվում եր ամենից առաջ նրանով, վոր Ռուսաստանը 240 տարվա ընթացքում գտնվում եր թաթարական լծի ծանրության տակ։ Թաթարական խաները կողովտում եյին ոռուս ժողովրդին, այրում եյին քաղաքներն ու գյուղերը, գերի եյին տանում տղամարդկանց ու կանանց, ոռուսական յերկրներից հալաքում եյին ծանր հարկ, արդելակում եյին ոռուսական միասնական կենտրոնացված պետության ստեղծմանը, կասեցնում եյին Ռուսաստանի անտեսական զարգացումը։ Միայն Ռուսաստանի ազատադրումը թաթարական լծից XIX դարի վերջին ու ոռուսական ազգային պետության ստեղծումն առահօռվեցին առեւտրի և արհեստային արտադրության համեմատաբար արագ զարգացումը։

Իվան Կալիտան, վոր իշխում եր Մոսկվայում XIX դարի առաջին կեսում, ոռուսական հողերը հավաքելու ու միացնելու և Մոսկվայի իշխանությունն ամրապնդելու իր քաղաքականությամբ սկիզբ դրեց ոռուսական ազգային պետության գոյացմանը։ Բայց ոռուսական ազգային պետության ստեղծողը, ինչպես ընդգծում ե Մարքսն իր «XVIII դարի զարգանի դիվանագիտականությունը» աշխատության մէջ, Մոսկվայի մէծ իշխան Իվան III-ն եր, վոր իշխել է 1462-ից մինչև 1505 թ.։ Իր իշխանության սկզբում իշխան III-ը թաթարական հարկատու յեր։ Նրա իշխանությունը վիճարկվում եր Տիկերի, Ռյազանի, Նիժնի-Նովգորոդի և այլ ուղելային իշխանների կողմից։ Նովգորոդն իշխում եր հյուսիսում վորպես ինքնուրույն քաղաք, իսկ լեհ-լիտվական պետությունը ձգտում եր նվաճել Մոսկվային և Մերձբալտիկան։

Լեհ-լիտվական պետության հետ մեկտեղ առանձնապես Մոսկվայի վտանգավոր հակառակորդներն եյին թաթարական իշխանը։ Թաթարական լծի դեմ մղված պայքարը կարևորագույն գործոն եր XIX դարի Ռուսաստանում հզոր կենարոնացված պետություն ստեղծելու։ Այդ մոմենտն ընդգծված ե ընկեր Ստալինի կողմից նիկ(ր)կ Խ համագումարին արված իր՝ «կուսակցության հերթական ինդիբները ազգային հարցում» գեկուցման մէջ։

Հնկեր Ստալինն ասում եր «...թուրքերի, մոնղոլների և Արևելցի այլ ժողովուրդների արշավանքից պաշտպանվելու շահերը պահանջում եյին անհապաղ կենտրոնացված պետություններ կազմեն, վորոնք ընդունակ են սահմահարելու արշավանքի դրուցը»:

Իր պետության կենտրոնացումն ուժեղացնելու համար իվան III-ը պայքարում եր Փետրալական բաժան-բաժանվածության վերջնական լիկվիդացիայի համար։ Հենվելով Նովգորոդի բնակչության ներքնախավերի վրա, վորոնք կողմնակից եյին Մոսկվային միանալուն, իվան III-ը ջախջախեց Լեհաստանի և Լիտվայի կողմից սահարսփող Նովգորոդի բոյարությանը և 1478 թ. Նովգորոդը մայրեց Մոսկվայի պետության կազմի մեջ։ Իվան III-ը 1505 թ., Վեդրոչա գետի վրա ջախջախելով լիհ-լիտվական զորքը, Լիտվայից հետ խեց ոռոսական Ֆիշ շարք նախկին իշխանություններ, վոր նա զալթել եր XIX դարում և XX դարի սկզբին։ Մոսկվային միացվեցին նմանապես Տվերի, Ռյազանի, Նիժնի-Նովգորոդի և այլ իշխանություններ։

Վորպես արդյունք՝ Մոսկվայն պետությունը նշանակելիորեն աճեց։ Ֆեոդալական ինքնուրույն իշխանությունների տեղ ստեղծվեց ոռոսական միանական ազգային պետություն, իսկ Մոսկվայի մեծ իշխան իվան III-ը ընդունեց «Թագավոր համայն թուսիո» տիտղոսը։ Թուսական ազգային պետությունն աճում ու ամրանում եր։ Նա այժմ բռնում եր հարյուր հաղարավոր քառակուսի կիլոմետր տարածություն։ Նույն այդ ժամանակ թուլանում եյին նրա հարևանները, և մյուսներից ավելի թուլանում եր Վոսկե Հորդան։

«Գաղտնի դիմանադիտության» մեջ Մարքսը հետեւյալ կերպ ե բանաձեռում Վոսկե Հորդայի անկման պատճառները ԽV դարում։

«Բնանի գահակալությունից դեռ չառ առաջ, —դրում է Մարքսը, — Վոսկե Հորդան արգեն թուլացած եր, —ինչպես ներսից՝ չնորհիվ կատաղի յերկարակությունների, այնպես ել դժուից՝ չնորհիվ նողայան թաթարներից անջատվելու, թեմուրի (Թամերլանի) ներխուժման, կաղակության ուժեղացման և Ղրիմի թաթարների թշնամության»։

1480 թ. իվան III-ը հրաժարվեց հարկ վճարել Վոսկե Հորդայի խանին։ Վերջինս պատերազմի զնաց Մոսկվիայի դեմ։ Վոսկե Հորդայի զորքն արգեն գտնվում եր Ոկա գետի ափին, բայց,

աեղեկություն ստանալով Հորդայում տեղի ունեցած հուզումների մասին, խանը հետ զարձալ: Այսպիսով, Իվան III-ը առանց արյուն թափելու մնաց «Հաղթով»: Ծուսական պետությունն ազատվեց Վոսկե Հորդայի լծից:

Ծուսական ազգային պետության ստեղծումը, Ֆեոդալական բաժան-բաժանվածության լիկվիդացիան Իվան III-ի թագալուրության հիմնական արդյունքն եր: «Թաղավորության վերջերքին, —գրում է Մարքսը «Գաղտնի գիւղանադիտության» մեջ, — Իվան III-ին մենք տեսնում ենք անկախութեն դաշին նստած՝ ձեռքձեռքի տված բյուզանդական վերջին կայսրի դուռը հետ: Նովգորոդը հնագանդված է նրան: Վոսկե Հորդայի մնացորդները խոնավում են նրա գոների մոտ: Լիսովան հլու դործիք է նրա ձեռքում»:

«Զարմանքից աղջած Յելբուզան, —նշում և այնուհետեւ Մարքսը, —գրուն Իվան III-ի թագավորության սկզբում Հաղիսի թե նույնիսկ յենթագրում եր Լիսովայի և թաթարների միջև տեղափոխված Մոսկովյայի գոյության մասին, —շշմեց իր արեելյան սահմաններում մի վիթիսարի կայսրության անակնկալ յերեսն գալուվ»:

Ծուսական ազգային պետության ամբացման համար արտաքին թշնամիների գեմ մղած պայքարում և իր սեփական իշխանության ուժեղացման հստար իվան III-ը հենքում եր իր ծառայող զինվորականների—ճորտ գյուղացիներին շահաղործող կալվածատերերի վրա: XV դարում կարմածատերեր կամ ազնվականներ սկսեցին կոչվել այն զինվորականները, վարոնք զինվորական ծառայության մեջ ելին Մոսկովյան ցարի զորքերում: Իրենց ծառայության ժամանակամիջոցում իրենց ծառայության համար նրանք ստանում ելին Հովային սեփականություններ, կամ «կալվածներ»: Կալվածների տերերն սկսեցին կոչվել կալվածատերեր:

Իվան III-ն ուժեղացրեց գյուղացիների Փեոդալական կախվածությունը կալվածատերերից: Առաջ գյուղացիներն իրավունք ունեցին մեկ տիրողից մյուսի մոտ անցնելու: Իվան III-ը 1497 թ. մի որենք հրատարակեց, վարի համաձայն անցնելու իրավունքը սահմանվում եր գյուղատնտեսական տարվա վերջանալուց հետո, միայն Յուրիի որը, մի շարաթվա ընթացքում նրանից հուած և մի շարաթվա ընթացքում նրանից հետո: Գյուղացիները կալվածատերոջը վճարում ելին բահրա, մշակում ելին նրա հողերը, հավաքում բիբը, հնձում խոտը, նրա համար կառուցում ապարանք և այլն: Նրանց, ովքեր բահրա չելին վճարում կամ

իուսափում եյին «կոռ»-ից (այսպէս եր կոչվում կալվածտոիրոջ համար կատարվող աշխատանքը), «տանջաղանձման» եյին յենթարկում, այսինքն՝ գաղանակներով կամ մտրակով սաստիկ ծեծում և բանտ գցում:

Ուուսական ազդային պետության գոյացումը արագացնում է յերկրի տնտեսական զարգացումը, նպաստում ապրանքա-փողային հարաբերությունների արագ աճմանը: Ուուսաստանի տնտեսական զարգացման մեջ տեղի ունեցող այդ տեղաշարժելուն առանձնապես նկատելի յեն դառնում XVII դարի կեսերին:

XVII դարի առաջին կեսին Ռուսաստանում նկատվում եր քաղաքների թվի վեթիարի աճում, քաղաքային բնակչության ավելացում, արհեստային արտադրության զարգացում, վերջինիս անջատումը գյուղատնտեսությունից և արհեստավորների կենտրոնացումը քաղաքներում: Աճում ու զարգանում է ներքին և արտաքին առևտուրը:

XVII դարի սկզբին Ռուսաստանում հաշվվում եր 96 քաղաք, իսկ XVII դարի յերկորդ կեսին՝ մոտ 170 քաղաք: Նրանց մեջ նովգորոդը, Սմոլենսկը, Պսկովը, Նիժնի-Նովգորոդը, Մոժայսկը և ուրիշ: Այդ քաղաքներից յուրաքանչյուրում հաշվվում եր քաղաքային բնակչության ավելի քան հազար տուն: XVII դարում Մոսկվան ուներ միքանի հազար տուն և Յեվրոպայի խոշորագույն քաղաքներից մեկն եր: Անգլիական ճանապարհորդ Զենալորի միայնությամբ, փորն այցելել և Մոսկվան XVII դարի կեսերին, Մոսկվան այն ժամանակ ամելի լայնածավալ եր, քան Լոնդոնն իր արվարձանների հետ մեկտեղ վերցրած:

Ուուսական մի շաբք քաղաքներում արհեստավորները կաղմում եյին բնակչության զգալի տոկոսը: Որինակ, Տորոսցա քաղաքում արհեստավորները կազմում եյին բնակչության 12%-ը, իսկ Ռուսոյուժնայում՝ 27%-ը: Միքանի քաղաքներում այդ տոկոսը բարձրանում եր մինչև 40%-ի: Արհեստավորների մի մասը աշխատում եր հավաքադնորդների համար, փորոնք միջնորդներ եյին հանդիսանում արհեստավորների և սպառողների միջև: Բայց նրանց մեծ մասն ինքն եր վաճառում իր շինվածքները: Կիտայգորոդում, վորն առևտրային Մոսկվայի սիրտն եր, կային հարյուրավոր կրպակներ, տաղավարներ, նստարաններ, ուր Մոսկվայի արհեստավորներն իրենք եյին վաճառում իրենց շինվածքները:

Մոսկովյան պետության միքանի քաղաքներ այն ժամանակ-ներում վերածվել եյին խոչոք արհեստային արտադրության

կենտրոնների, վորոնք իրենց շինվածքներով սպառաբկում եյին ամբողջ յերկիրը: Այսպես որինակ, Խոլմոգորը հոչակիված եր վորկի կաշվից պատրաստած իրենց շինվածքներով: Վոլոգդան արտադրում եր մեխ, խարիսխ, կացին և գերանդի: Նովգորոդն ու Պոկովը զանդ եյին ձուլում: Վյազմայի սահնակները և Կալուգայի փայտե գղալները տարածված եյին ամբողջ ռուսական պետության մեջ:

Արհեստի զարգացումն արտահայտվում եր նաև նրա մասնագիտացմամբ—նոր, արհեստային ամելի նեղ մասնագիտությունների առաջացմամբ: Մոսկովյան պետության քաղաքներում այն ժամանակ հաշվվում եր մինչև 210 արհեստային մասնագիտություն: Գերակշռում եյին ուտելեղեննի արտադրությամբ զբաղվող մասնագետները՝ հացագործները, կարկանդակագործները, կվաս պատրաստողները և ուրիշ: Այսուհետեւ գալիս եյին առորյա կենցաղի առարկաներ արտադրող արհեստավորները՝ կաշեգործները, մաշկակարները, զերծակները, մուշտակ կարողները և ուրիշ:

Մեծ նշանակություն ուներ մետաղի մշակությամբ և նրանից գենք պատրաստելու արտադրությամբ զբաղված արհեստավորների խումբը՝ սուսերագործները, զրահագործները և ուրիշ:

Արհեստավորները ճխտված եյին «մրոտած» խրճիթներում, փորոնք վոչ լուսամուտ ունեյին, վոչ տախտակե հատակ, վոչ ել ծիսնելույդ, քաղաքների ծայրամասերում, փորեւ տեղ Բոլվանովկայում (այսպես եր կոչվում XVII դարի Մոսկվայում արհեստավորական արվարձաններից մեկը): Մայում եյին, ինչպես ժողովրդական առածն և պառմ, «ձիթի կծեալից պատրաստած ապուրով»: Շատերին արհեստը բնակ չեր ապրեցնում: Յեկ, չունենալով «սեփական կյանքը», այսինքն՝ գույքը, նրանք մուրացկանություն եյին անում:

Անդիմական ճանապարհորդ Ալիշարդ Զենսկորն իր հուշիկներում խոսում ե Մոսկովիայի քաղաքների աշխատավոր բնակչության արտասովոր չքաղորության մասին: Նա գրում է. «Այստեղ անհամար քանակի չքաղորներ կան, և նրանք ապրում են ամենախղճուկ ձեռվ: Յես տեսա, թե ինչպես նրանք ուտում են ծովատառեիսի աղաջուր և ամեն տեսակի նեխած ձկներ»:

Արհեստի հետ կողք-կողքի ԽVII դարում յերեան եյին գալիս նաև ամելի խոշոր ձեռնարկություններ, հիմնված ճորտ գյուղացիների աշխատանքի վրա: Զարգանում և աղադրությունը, պոտաչի արտադրությունը և հանքային գործը: Այդ արտադրու-

թյունները պահանջում եյին զգալի քանակությամբ աշխատող ձեռք:

Կարելիայում և Ուրալում արդյունահանվում եր բավական մեծ քանակությամբ յերկաթ: Հյուսիսում, Սովորված գտնվում եյին Ստրոգանովներ վաճառականների աղի խոչոր յեփարանները:

Արհեստի գարգացումն ու քաղաքների աճումը ընդլայնում եյին ներքին առևտուրը: Միքանի քաղաքներ վերածվեցին առևտրական խաչոր կենտրոնների: Առևտրային շրջանառության մեծությամբ XVII դարում առաջին տեղը բռնում եր Մոսկվան, վորի վրայով եյին անցնում բոլոր առևտրական ճանապարհները: Մոսկվայի առևտրային շրջանառությունը կազմում եր յերկը ամբողջ շրջանառության ½-ը:

Անգլիական ճանապարհորդ Ջենսլորն իր հուշիկներում, վորոնք վերաբերում են XV դարի կեսերին, գրում եր, թե ամեն առավոտ միայն Յարոսլավի ճանապարհով Մոսկվա եյին գալիս հացով, ձկնով և այլ բաներով բեռնավորված 700—800 սահնակներ:

Մոսկվայից հետո, ըստ ապրանքաշրջանառության ժհծության, գալիս եյին Նովգորոդը, Կաղանը, Նիժնի-Նովգորոդը, Յարոսլավի, Կոստրոման, Պոկովը, Տվերը, Վոլոգդան, Վելիկի Ռուստուգը: Հարավում նոր-նոր աճել սկսած քաղաքներ Տուլան, Կալուգան, Սերպուխովն ու մյուսն. դարձան առևտրական կարեվոր կետեր:

Յարոսլավի մասին նույն Ջենսլորը գրում ե, վոր «դա շատ մեծ քաղաք ե: Այստեղի ապրանքները—կաշին, ճարպը և հացը—շատ մեծ քանակությամբ են և վորոշ քանակությամբ մեղրամոմկա, բայց այն այսպես շատ չե, ինչպես մյուս քաղաքներում»:

Բազմաթիվ մանր առևտրականների հետ կողք-կողքի, վորոնցով վխտում եյին Մոսկվան և մյուս քաղաքները, հայտնիցին ևաև խոչոր վաճառականներ, այսպես կոչված «հյուրերը», վորոնք զբաղվում եյին վիթխարի կապիտալների շրջանառություններով: «Հյուրերը» Մոսկվայում մոտ 30 հոգի եյին: Մոսկվայի այնպիսի «հյուրերը», ինչպես Նիկիտնիկովը, Վորոնինը, ունեյին տասնյակ սեփական գյուղեր, ձկնորսարաններ ու աղահանքեր, միլիոնների շրջանառություններ:

XVII դարի ամենաանվանի առևտրականներ Ստրոգանովները առևտուր եյին անում ամբողջ Ռուսաստանով մեկ—Պերմից մին-

չե Մոսկվա և Արխանգելսկից մինչև Ռյազան։ Նրանք վաճառում եյին իրենց յնփարանների աղը, ձկնորսարանների ճռեկը, Սիբիրի ժողովուրդների կողովովիլելու հետևանքով ստացված մորթիները։ Ստրուգանովներն առաջինը կազմակերպեցին հանքային խոշոր արտադրություն Ուրալում։

Զարդանում եր նաև արտաքին առևտուրը։ Այդ առևտրում առաջին տեղը բռնում եյին մորթիները։ Մորթիները վաճառում եյին Արևմուտքի վաճառականներին և Արևելքին տարեկան մեքանի հարյուր հազար վոսկի ոռուրլու։ Թանգ արժեք սեադորչ աղվեսը և առանձնապես բարձր եր գնահատվում սամույրի գեղեցիկ մորթին։ Մեղրամոմ արտահանվում եր տարեկան մոտ 50 հազար փութ։

Արտահանվում եյին և այնպիսի ապրանքներ, ինչպես ճարպը, Ամունսկի, Յարովավլի, Նովգորոդի, Տվերի յերկրներից մեղրը՝ Ռյազանի և Մուրոմի յերկրներից. վուշը՝ Պսկովից և կանհերից՝ Ամունսկից և Վյազմայից. աղն ու ծյութը մեծ պահանջարկ եյին գտնում արտասահմանյան շուկայում։ Ճուկն ու ձկնիթը դնում եյին Խոսկանիա ու Խոտալիա. արտահանվում եյին նմանապես փայլարը, բորակը, ծծումբն ու յերկաթը։

Յելրովական վաճառականները թուաստան եյին ներմուծում ճուլածու արծաթ, պղինձ, մահուդ, հայելի, ժանյակ, կաշի, ասեղ, գինի ու միրդ։

Ասիական վաճառականները վաճառում եյին մետաքսյա գործվածքներ, գորգեր, թանդաղին քարեր։ Մոսկվայի պետությունն առևտուր եր անում Լիտվայի, Լեհաստանի, Իրանի և այլ յերկրների հետ։

Ալյոնքա-փողային հարաբերությունների աճումը Մասկովյան պետության մեջ XVII դարում հասցրեց ճորտ գյուղացիության շահագործման հետազա ուժեղացմանը։ Միաժամանակ սըրվում եր պայքարը Փեղալիների դաստիարգի ներսում՝ կարմատուերի և բոյարների միջև։ Վոտչիննիկ<sup>1</sup> (ժառանգական կալվածատերներ)՝ բոյարներն ամենից ավելի խոշոր հողային սեփականատեր-Փեղալիներն եյին։ Նրանցից շատերը, առաջներում ինքնուրույն, այսպես կոչված ուղելային իշխանները, XV—XVII դարերում հանդիսանում եյին ցարերի ժերմակոր սպասավորները։ Կայ-

<sup>1</sup> Բայարները վատչիննիկներ եյին կոչվում այն պատճառով, վոր հազը նրանց սեփականությունն եր և անցնում եր հորից վորդուն զպապենական ափրատեսությանց որենքներով։

վածատերերը, ծառայող զենվորականները հարց ելին դնում խո-  
չոր վուտչիննիկ-բոյաների արտոնությունները լիկվիդացիայի  
յենթարկելու մասին և հողն ու ճորտերն հողուա իրենց վերաբա-  
ժանելու մասին:

Մոսկովյան ցարերը կենտրոնացված իշխանության համար  
բոյարների ու իշխանների դեմ մղած պայքարում հենվում ելին  
աղնվական-կալվածատերերի վրա: Մոսկովյան ցարերի՝ կենտրո-  
նական իշխանության ամբատղմանն ուղղված քաղաքականու-  
թյունը պաշտպանում եր նաև պոսագի (վաճառավայրի) բնակ-  
չությունը, այսինքն արհեստավորներն ու քաղաքների մանր  
վաճառականները:

Պոսագը խոշոր քաղաքական դեր եր խաղում XVII դարում:  
Հենվելով կարվածատերերի ու պոսագի վրա Մոսկովյան ցարերը  
ստեղծում ելին կենտրոնացված ուժեղ պետություն: Այսպիս եր  
այն իրադրությունը, վոր կազմավորվեց Մոսկովյան պետության  
մեջ XVII դարի 30-ական թվականների մոտերքը:

### ԲՈՅԱՐԱԿԱՆ ԻՆՔՈՒԻԹՅԱՆ ՏԱՐԻՆԵՐԸ

Վասիլի III ցարի մահից հետո, վոր տեղի ունեցավ 1533 թ.  
գեկտեմբերին, Մոսկովյան դահի ժառանդ դարձալ նրա յերե-  
քամյա վորդին, Իվան III-ի թոռը, Իվան Վասիլյևիչը, կամ  
Իվան IV-ը, վորը հետագայում կոչվեց Սակ: Նա ծնվել է  
1530 թ. ողոսոսի 25-ին Վասիլի III-ի յերկրորդ կնոջից՝ Միտ-  
վական իշխանուհի Յելենա Գլինսկայայից, վորը դրավեց Մոսկ-  
վայի պետության կառավարչուհու տեղը: Պետության վաստա-  
կան կառավարիչը դարձալ նրա սիրելի Իվան Ռուլենսկին:

Իվան Ռուլենսկու՝ պետության միանձնյա կառավարումը գի-  
քաղբություն առաջացրեց բոյարների կողմից և ամենից առաջ  
Վասիլի III-ի մերձավորների՝ Վասիլի և Իվան Շույսկիների,  
Բելոկու և այլ իշխանների ու բոյարների կողմից:

Դիմացը պետությունն արտահայտվում եր տարբեր ձեերով և  
մասնավորապես՝ Յելենա Գլինսկայային վոչնչացնելու ձգտու-  
մով: Վերջապես 1538 թ. դարնան այլ Հաջողվեց նրանց: Յելե-  
նա Գլինսկայային թունավորեցին: Միքանի որ անց բոյարները  
բռնեցին Իվան Ռուլենսկուն և դատաստան տեսան նրա ովկին:  
Տարեգրության մեջ այլ առթիվ ասված և «Յել արդելին զնա  
ի պայտան հանկույս ասպարանից առ ախոռով և մեռուցին զնա  
սովով և բռնությամբ յերկաթյա»: Այսպիսով քաղցի ու բռնու-  
թյունների ողնությամբ նրանք մեռցին Իվան Ռուլենսկուն:

Իվան Ռոբունսկու անկումից հետո սկսվեց բոյարական ինք-նիշխանության ժամանակաշրջանը, վորը տևեց 10 տարի: Բոյար-ները շատ ելին, և նրանց միջև մշտական իերկպառակություններ ելին տեղի ունենում պետական իշխանության համար: Նա, ով իշխանություն ուներ իր ձեռքում, ուներ և պետական գանձարա-նի բանալին:

Վասիլի Ա-ի որով դանձաբանը բավականին մեծ եր: Այդ գանձարանից սուտվել ցանկանում ելին բոլորը՝ թե Շույսկիները՝ իվանն ու Վասիլին, թե Իվան Բելսկին, թե Գլինսկիները և թե ուրիշները: Նրանցից յուրաքանչյուրը ջանում եր իր զիրքն ոգ-տապործել անձնական շահերի համար:

Ժամանակակիցներից մեկն այդ առթիվ նկատում եւ «ամենայն վոք վասն յուր հողա, և վոչ վասն թափավորության և վոչ վասն ժողովրդյան», այսինքն՝ ամեն մեկն իր սեփականի, անձ-նականի մասին և հողում:

Ժամանակակիցների վկայությամբ, բոյարները մեկը մյուսին բանտ ելին գցում և նույնիսկ մահվան մատնում: Յերկպառակ-չական գաման պայքարը տեղի յի ունենում նաև պետության ժամանակալոր կառավարիչների միջև:

Սկզբում իշխանությունը հավիշտակեց Վասիլի Շույսկին և բանտ դցեց Իվան Բելսկուն: Հետո Վասիլի Շույսկին «մեռավ», ինչպես առված և տարեկրության մեջ և նրա տեղը բռնեց Իվան Շույսկին, վորը հոչակվեց նցանով, վոր, լինելով մեծ իշխա-նի փոխանորդը Պակովում, այստեղ վայրագություն եր անում, տարեկը արտահայտությամբ, «Պարզիս առյուծ»: Այդ գաման բոյարը թալանում եր պետական գանձարանը և իշխան միջանի տարի: Նրան փոխարինելու յեկալ նոր իշխող՝ իշխան Անդրեյ Շույսկին: Վերջապես, իշխանության բաժանման մեջ մասնակ-ցություն ունեցան ապագա ցար Իվան Ա-ի աղջականները՝ նրա մորական աղջականները՝ Գլինսկի իշխանները:

Ինչ եր տեղի ունենում բոյարական ինքնիշխանության հե-տեանքով, մեկ բռնացողի ու կողոպտիչի շարունակ մյուսով փո-խարինվելու հետեանքով: Ուռուիայում դրանից ամենից առաջ և ամենից շատ տուժում ելին գյուղացիներն ու քաղաքացին ներք-նախավիերը:

Ցուրաքանչյուր կառավարիչ իշխանության գլուխ եր կանգ-նում վոչ թե մենակ, այլ «հանդերձ աղջատոհմիվ յուրով»: Կա-ռավարիչը բերում եր մի ամբողջ գունդ բոյարներ, վորոնք

գրավում եյին զորավարների, կռուսակալների տեղերը և այլն։ Այդ բոլոր տեղերը արվում եյին պետության նոր ժամանակավոր կառավարչի ազգականներին կամ բարեկամներին։ Այդ իշխանավորներից ամեն մեկը գործում եր հար ու նման իրեն տիրոջ, այսինքն՝ վութաջանորեն կողովտում եր աշխատալորական ժամաներին։

Այդ ժամանակավոր կառավարիչները առանձին ուշադրություն եյին դարձնում պետական գանձարանի վրա։ Իվան ԱՀԵՂԸ Սոսկվայի իշխաններից մեկին՝ Անդրեյ Կուրբակուն գրած նամակում այսպես է նկարագրում այդ փաստը։ «Ի՞նչ ասեմ ծնողներին զանձարանի մասին։ Ամեն ինչ հափշտակեցին նենող դիտավորությամբ, երբ թե վորպես ոռնիկ բոյարների զավակներին, այնինչ բոլորն իրենց համար վերցրին, և բոյարների զավակներին պարզւատրում եյին վոչ զործի համար, կալվածներ եյին չնորհում, վոչ ըստ արժանիքի, մեր հոր և պապի զանձարանից իրենց համար վոսկե ու արծաթե անոթներ նախշազարդեցին և նրանց վրա իրենց ծնողների անունները գրեցին, կարծես թե այդ ժառանդական դույք յեղած լիներ»։

Այնուհետեւ իվան ԱՀԵՂԸ գրում եր. «Մեր հորյեղբայրների աները, գյուղերը և կարլածները վերցրեցին, իրեն համար ընակություն հաստատեցին նրանցում... Յեկ ինչքա՞ն չարիք գործեցին նրանք։ Քանի՞-քանի՞ բոյարների ու զորավարների, մեր հոր բարյացակամներին մեոցըն...։ Ժամանակավոր կառավարիչները պետական գանձարանը կողովաեցին-տարան, իսկ հոր շատ բարյացակամներին, այսինքն նրա հայր Վասիլի III-ի կողմակիցներին, սպանեցին։

Ցեմե գյուղացիությունն առանձնապես խիստ եր տուժում բոյարական ինքնիշխանությունից, ապա վատ զրություն եր տոեղծվում նաև շարքային ազնվականության համար, այսինքն՝ ֆեոդալական իշխող դաստիարակի ամենաբարձրամարդ խմբի համար։ Գյուղացիների առիթով տարեգիրը շատ հակիրճ գիտողություն ե անում, թե այդ իշխանները, բոյարները եյին «վայրագք, վորպես առյօնծք, հանդես ուամկաց»։ Բայց ազնվականներն ել խիստ շատ եյին տուժում բոյարական ինքնիշխանությունից, վորովհետեւ, հենց վոր փոխիրում եր ժամանակավոր կառավարիչը, տեղի յեր ունենում ծառայող զինվորականների փոխումը։

Առանձնապես տուժում եյին այն ազնվականները, վորոնք իրենց զինվորական ծառայությունների համար նոր եյին ազնվական դարձել։ Ինչո՞ւ եյին նրանք տուժում։ Վորովհետեւ բոլոր

իշխան—ժամանակավոր կառավարիչները ուղելային իշխանների սերունդներն եյին: Նրանք ունեյին իրենց սեփական զինվորականները: Ժամանակավորապես իշխանության հասած նոր կառավարիչն իր հետ բերում եր մի ամբողջ գունդ յուրայիններ, վորոնց և ջանում եր օլարգեատրել ու տեղալորել: Իվան III-ի և Վասիլի III-ի ջանքերով ստեղծված Մոսկովիայի ազնվականությունն արհամարհելի գրության մեջ ընկալ: Բայարարվում եյին միայն այն աղնվականության շահերը, վորը զինվորական տարր եր յեզել նախկին ուղելային իշխանների մոտ:

Ժամանակավոր կառավարիչների ծանր հարկահանություններից խիստ տուժում եյին նմանապես և վաճառականները: Այդ պատճառով վաճառականությունը նույնպես շահագրգռված եր, վոր բոյարական ինքնիշխանությունը վերջանար: Բոյարական ընքնիշխանության համեմատությամբ, վորը թուլացնում եր ուսական պետությունը, ցարական ինքնակալությունը պրոդրեսիվ եր, վորովհետեւ ինքնակալ ցարը պայքարում եր կենարոնացված պետության համար, ընդունմ բոյարական ինքնակալիսության ու կամայականության: Ցարական իշխանության պրոդրեսիվությունը ընդգծում եր Ենգելար. «Փեոդալիզմի քայլայման և բուրժուազիայի գարդացման մասին» հոդվածում: Ենդեւաը զրում է. «...Թագավորական իշխանությունը (das Königtum) պրոդրեսիվ տարր եր, —այդ միանգամայն ակներեւ ե: Նա կարգի ներկայացուցիչն եր՝ անկարգության մեջ, կազմավորվող ազգի ներկայացուցիչը՝ ի հակագրություն ապստամբող վասսալական պետությունների բաժան-բաժան լինելուն: Այն բոլոր հեղափոխական տարրերը, վորոնք գոյանում եյին Փեոդալիզմի մակերևութիւնակ, հակվում եյին թագավորական իշխանության կողմը, ինչ-պես և թագավորական իշխանությունն եր հակվում նրանց կողմը»<sup>1</sup>:

Ինչ վերաբերում ե փոքրահասակ ցար Իվան IV-ի և ժամանակավոր կառավարիչների միջև յեղած փոխհարաբերություններին, ապա նրանք կազմվում եյին բավականին յուրակերպ: Ժամանակավոր կառավարիչները հաճախ հաջի չելին առնում ցարին: Իսկ նա հրաշալի հասկանում եր, վոր բոյարները վոտնագություն են անում իր շահերի դեմ և թալանում են, ինչպես ինքն եր արտահայտվում, իր հոր և պապի ջանքերով կուտակված դանձը:

<sup>1</sup> К. Маркс и Ф. Энгельс, с. XVI, д. I, № 445:

Անդրեյ Կուբբսկուն գրած նամակներում Իվան Ահեղը մատ-  
նանշում եր.

«Փնձ ու յեղբորս՝ Գյորգիյին սկսեցին դաստիարակել, վոր-  
պես ոտարերկացիների կամ վորպիս մուրացկանների: Հաղուստի  
և մնունդի ի՞նչ կարուտություն ասես վոր չենք քաշել. վոչ մի  
բան մեր կամքով չեր լինում, վոչ մի բանում մեզ հետ այնպես  
չերին վարվում, ինչպես հարկավոր եր վարվել յերեխաների  
չետ: Մի բան հիշեցնեմ. պատահում եր մենք խաղում ենք, իսկ  
իշխան Իվան Վասիլյեվիչ Շույսկին նստած ե նստարանի վրա,  
արմունկով հենված մեր հոր անկողնուն և վոտները նրա վրա  
գրած»:

Մեծ իշխանի անկողինը—Վասիլի ԱՆ-ի անկողինը, իսկ այժմ,  
ըստ ժառանգության, Իվան ԱՆ-ինը, անձեռնմխելի առարկա յեր:  
Յեկատերինա այդ պատճառով Վասիլի Շույսկու նման վերաբերմունքը  
դեպի Իվանի անկողինը ակնհայտ վերավորանք եր ապագա ցա-  
րին:

Իվան ԱՆ-ի մեջ աստիճանաբար ատելություն եր կուտակ-  
վում դեպի իշխաններն ու բոյարները: Այդ ատելությունն ուժե-  
ղանում եր Իվանի դաստիարակության ծանր պայմանների հե-  
տևանքով: Նրա աչքի առջև տեղի ելին ունենում սովանություն-  
ներ, հաճախ՝ նրա սիրելի մարդկանց մասսայական սպանու-  
թյուններ: Այդ արդեն պատանեկական հասակում Իվանին հաս-  
ցրեց խիստ գաֆանության՝ ընդդեմ ժամանակավոր կառավարիչ-  
ների: Յերր 1543 թ. սպանեցին նրա սիրելի բոյարին, վորին նա-  
ամեն կերպ պաշտպանում եր մահից, Իվանը հավաքեց բոյարնե-  
րին և նրանց բավական հաստատորեն հայտարարեց, վոր նրանք,  
և չար գործածէրելով նրա պատանեկությունը, անորինություններ  
են գործում և վոր նա մահապատճի կենթարկի նրանց պարա-  
գվին: Այդ պարագլուխը կառավարիչ Անդրեյ Շույսկին եր:  
Իվանը հրամայեց բռնել Անդրեյ Շույսկուն և, ինչպես ասում ե-  
տարելիքը, «Հրամայաց մատնել զնա ի ձեռս շնապանաց, և շնա-  
պանք առին և սպանին զնա»:

Սակայն դրանից հետո ել գլությունը չփոխվեց: Իշխանու-  
թյան դրւելս կանդնեցին Գլինուկիները, այսինքն դեռահաս ցարի  
մորական պահականները: Նրանք ցարին դաստիարակում ելին  
նույն վողակով, զարդացնելով նրա բոլոր վատ գծերը: Գլինուկիներն  
ամեն կերպ խրախուսում ելին նրա անկարգությունները: Ապա-  
գա ցարը հաճախ ձի նստած իր ընկերների հետ միասին սրանում

Եր Մոսկվայի փողոցներով, ձիու տակ գցում անցորդներին և  
ուրախանում դրանով: Փօխանակ պախաբակելու պատանի ինչ—  
նի այդ արարքները, Գլխնութիւններն, ընդհակառակը, դրանք խրա-  
խուսում եյին: Նրանք ասում եյին: «Ահա թե ինչպիսի քաջ, արի  
շար և մեծանում»: Նրանք դրդում եյին նրան մահապատճի յեն-  
թարկել իրենց համար անցանկալի մարդկանց:

Միակ լուսավոր շողը Ահեղի մանկության ու պատանեկու-  
թյան մեջ—այդ նրա կրթությունն եր, վոր նա ստացավ մետրո-  
պոլիտ Մակարիի ղեկավարությամբ:

Մետրոպոլիտ Մակարին շատ կրթված մարդ եր, XVII դարի  
Ռուսաստանի ամենակրթված մարդկանցից մեկը: Նա Իվան Ահե-  
ղին դաստիարակում եր ինքնակալ միապետի վոգով: Նա ման-  
կությունից յուրացնել եր տալիս նրան ինքնակալության դադա-  
փարը, պետական ամուռ իշխանության գաղափարը, իշխանու-  
թյուն, վորն անրաժաննելիունն գանվում ե ցարի ձեռքում: Դրա  
հետ միասին նա նրան տալիս եր գիտության այն հիմունքները,  
վորոնք կարելի յեր տալ XVII դարի պայմաններում, այսինքն՝  
առանձնակի ուշադրությունն եր հատկացնում ավետարանական  
տեքստերի ուսումնասիրությանը, աստվածաշնչի ուսումնասիրու-  
թյանը: Իվան IV-ը, բացի զրանից, ծանոթ եր հունական դիցա-  
րանությանը, հունական, հունական և բյուզանդական դրոդների  
առանձին ստեղծագործություններին: Նա XVII դարի համար բա-  
վականին պատկառելի կրթություն ստացավ: Ինչպես ընդգծում ե  
ժամանակակիցը, «Հուսմանն զբոց ճոխ և հույժ ճարտարա-  
րան...», այսինքն՝ բայլականին պատրաստված եր այն ժամա-  
նակվա գիտության տեսակետից:

1546 թ. ղեկանմբերին Իվանը կանգնեց պետությունը ինք-  
նուրույնաբար կառավարելու ճանապարհին:

1547 թ. հունվարին տասնյոթամյա Իվանը հանդիսավոր կեր-  
պով թագաղբյուղ, հայտարարեց իրեն ինքնակալ ցար:

Այդ ժամանակից սկսվեց նրա՝ պետության ինքնիշխան կա-  
ռավարումը: Բայց սկզբում դեռ ուժեղ եր բոյարական ինքնիշ-  
խանությունը: Կոնսունդնուպոլսի պատրիարքն իր որհնու-  
թյունն ուղարկեց Իվան IV-ին և նրան ճանաչեց որինական ցար:  
Այդ շատ բարձրացրեց ուսուական ցարի հեղինակությունը: Հեն-  
վելով ազնվականության վրա, Իվանը վճռական կոիլ սկսեց բո-  
յարների գնմ՝ իր իշխանությունն ամբացնելու համար: Նրա ամ-  
բողջ ներքին քաղաքականության նպատակն ե ուժեղացնել աղն-

վականության տնտեսական ու քաղաքական դերը ոռոսական պետության մեջ և ամբացնել ինքնակալության կենորոնացված իշխանությունը:

ՄՈՍԿՎՅԻ ՊՈՍՏԻ ԱՊՍՏԱՐԲՈՒԹՅՈՒՆԸ 1547 ԹՎ.ԻՆ ՅԵՎ. ԻՎ.ԱՆ Խ-Ի ՌԵՖՈՐՄՆԵՐԸ

1547 թ. Մոսկվայում մեծ հրդեհ յեղավ: Մոսկվան այն ժամանակ, բացառությամբ կրեմլի հիմնական շենքերի, փայտաշեն եր, և այդ պատճառով այրվում եր շատ հաճախ: Բայց այնպիսի ավերիչ հրդեհ, վորպիսին 1547 թ. ամռան հրդեհն եր, դեռ յերբեք չեր յեղել: Վիթխարի քանակությամբ շենքեր այրվեցին Մոսկվայի կարեռագույն փողոցներում—Ռոժդեստվենկայում, Պոկրովկայում, Վարվարիայում: Այրվում եր կիսայդորոդը, կրեմլը՝ ցարական պալատով, բոյարական տներով ու տաճարներով: Քիչ եր մնում այրվեր ինքը մետրոպոլիտը: Տարեդիրն առում ե, վոր այրվեցին մոտ յերկու հազար բնակիչներ: «...Յեկամինայն այգիք խանձեցան և ի բանջարանոց»՝ ամենայն բանջար և խոռո»: Հրդեհից հետո Մոսկվայի բնակիչների զբեթե կեսը մնաց առանց տունուտեղի և գույքի: Այդ արագացեց ժողովրդական զայրույթի պոռթկումն ընդունվեց բոյարների ինքնիշխան կառավարման:

1547 թ. հունիսի վերջին տեղի ունեցավ Մոսկվա քաղաքի պոստամբությունն ընդգեմ բոյարական ինքնիշխանության: Ժողովուրդն սպանեց Գլխակիներից մեկին, իշխան Յուրիին և իրեն ատելի ուրիշ բոյարների: Շատ բոյարներ Միխայիլ Գլխակու գլխավորությամբ, տարեկը արտահայտությամբ, «Հոսեցան», այսինքն՝ փախան Մոսկվայից:

Ինքն Իվան Նոր Մոսկվայից փախավ մերձմոսկովյան Վորոբյան գյուղը: Վերջապես, բոլոր կողմերից զորքեր հավաքելով և մի տեղում կենարոնացնելով նա ճնշեց ժողովրդական ապօստամբությունը: Բայց մասսաների դժոհությունը ցարին ստիպեց վորոշ զիջումներ անել, ստիպեց մասձել ներքին ուժորմներ անցկացնելու մասին:

1547 թ. ապօստամբությունից հետո իվան Նոր իրեն մոտեց նոր մարդկանց—ազնվականության միջից յելածներին—Փեռդալների դասակարգի ստորին խալերին, վորոնք նրա համար հենարան հանդիսացան բոյարական ինքնիշխանության դեմ ուղղված քաղաքականության մեջ:

Նրա նոր խորհրդականների մեջ մենք տեսնում ենք հոգեորականության ստորին խալերից յելած Սիլվեստր տերտերին։ Նրա կողքին տեսնում ենք Կոստրոմայի ազնվականության միջից յելած Ալեքսեյ Ֆեռդորովիչ Ադաշևին։

Ալեքսեյ Ադաշևը ցարի սպասավորներից մեկն եր գեռես նրա ժանկության տարիներին։ Իվանի թագավորության հենց սկզբից Ալեքսեյ Ադաշևը բարձր աստիճան և գրավում։ Սկզբում նա ստացավ սենեկապետի պաշտոնը։ Այն ժամանակ սենեկապետի տատիճանը համարվում եր ամենաբարձր պաշտոններական աստիճաններից մեկը։ Սենեկապետների մոտ եր պահպան ցարական կնիքը, վոր ծառայում եր «Նրա ցարական շտապ ու գաղտնի գործերի համար»։ Նրանք եյին վարում պետական ամեն տեսակ գործերը՝ թէ՛ գանձարանը, թէ՛ արտաքին քաղաքականությունը (գեսպահական պրիկազ) և այլն։

Իվանը ստեղծում է նոր Զելորիտնի (խնդրագրերի) պրիկազ<sup>1</sup>, վորը պետք է ընդուներ այս կոմ այն անձի գեմ ուղարկված գանգատաները Այդ գանգատաները պետք է քննվեյին Զելորիտնի պրիկազում և հետ ուղարկվեյին ցարին։ Զելորիտնի պրիկազը իվանը հանձնեց Ալեքսեյ Ադաշևին։ Հենց նրան եր նու տալիս մեծ խելտմառություն, հաստատակամություն և հմտություն պահանջող հանձնարարություններ։

Կուրբակուն գրած իր նամակում իվանը մատնանշում եր, թէ ինչու համար եր իրեն հարկավոր Ալեքսեյ Ադաշևը. «Տեսնելով ազնվատում իշխանների կողմից կատարվող դավաճանությունները, մենք վերցրինք... Ալեքսեյ Ադաշևին աղբակույտից և նրան հավասարեցրինք ազնվատում իշխանների հետ, նրանից շիտակ ծառայություն ակնկալելով»։

Ստեղծվեց ընտրովի ուղար, այսինքն՝ ցարական խորհրդականների այն խումբը, վորն անց եր կացնում բոյարական ինքնիշխանությունը սահմանափակելու քաղաքականություն։ Բարդացի կազմի մեջ եյին մտնում՝ մետրոպոլիտ Մակարին, Սիլվեստրը, Ադաշևը և ուրիշ։

40-ական թվականներին յերեան յեկան բոյարության ղեմ ուղղված ազնվականներական գրվածքներ։ Առանձին ազնվականներ չելորիտնիաներ, այսինքն՝ խնդրագրեր եյին ներկայացնում իվան ԱՌ-ի անունով։ Այդ խնդրագրերում դժուռ ազնվականներն իրենց

<sup>1</sup> Այն ժամանակվա Ռուսիան կառավարում եյին պրիկազների (գերատեսչությունների) միջոցով։

տեսակետն էլլին շարադրում ներքին ու արտաքին քաղաքականության մի շարք հարցերի նկատմամբ։ Այդպիսի գրվածքներից, այսինքն՝ ազնվականական հրապարակախոսական յելույթներից, ազնվականական պահանջներից ու ծրագրերից մեկն և հանդիսանում վոմն իվաշկա Պերեսվետովի 1547—1549 թ. թ. Հռչակավոր ինդըագիլը։

Իսկ ո՞վ եր այդ իվաշկա Պերեսվետովը, կամ իվան Սեմյոնվիչ Պերեսվետովը։ Ծագումով նա լիտվացի երև և առաջ ծառայել երև մի քանի թագավորների։ Նա յեղել երև զանազան յերկրներում՝ ծառայել երև հունգարական թագավորին, չեխական թագավորին, յեղել երև լեհական թագավորի մոտ։

Իվան Պերեսվետովը յեղել երև նաև Թուրքիայում, լավ գիտեր թուրքական կարգերը։ Եր գրվածքներում նա բազմիցս վկայակում էր թուրքական կարգերի որինակը։ Նա կարդացած ու աշխարհ տեսած մարդ երև, այն ժամանակի համեմատ կրթված։ Պերեսվետովը Մոսկվայ յեկավ գետես 1538 թ. և այստեղ առաջարկեց մի առանձին տեսակ, իր հնարած վահանը զինվորների համար, և այդ վահանի համար, վորը ճանաչվեց շատ լավ, նրան կարգածք տվին, այսինքն՝ նրան փոխարկեցին ազնվականի։ Նույտարձավ Մոսկվայի մանր ազնվական։

Իվան Սեմյոնվիչ Պերեսվետովը, ազնվականական այդ առաջին գրողը, թողել և պատմական խիստ հետաքրքրական շատ փաստաթղթեր։ Նա մի խնդրագիր գրեց իվան ցարին։ Պատասխան չստանալով, նա գրեց յերկրորդը։ Բացի դրանից նա գրեց միքանի գրական աշխատություններ, որինակ, «Сказание о царе турецком Магомете, како хоте сожеши книги греческие...» («Պատմություն վասն թագավորին թուրքաց Մահմեդի, թե վորովես կամեր այրել զգույնս հունականս»)։ Այդ աշխատությունները չափազանց հետաքրքրական են։ Դրանք հրապարակախոսական աշխատություններ են, վորոնց մեջ չոչափում ելին քաղաքական մի շարք կարեւրագույն հարցեր, արվում երև Մոսկվայան պետության ներքին գրաւթյան խիստ նըրամիտ և մանրամասն ու չիմսավոր վելլուծությունը, առաջ ելին քաշվում ներքին ու արտաքին քաղաքականության հարցերի վերաբերյալ բավականին մեծ պահանջներ։

Վորոնք ելին նրանց պահանջները։ Խնդրագրի առաջին նախագծում, այն մոմենտին, յերբ իվան Ահեղը գարձավ պետության ինքնառկալ կառավարիչ, Պերեսվետովը ամենից առաջ չարձակեց աղովառուհը իշխանների վրա, վորոնք, իշխանու-

թյան գլուխ կանգնելով, —կողոպտել են զանձարանը և վատթարցրել հասարակ ուղղմիկների, այսինքն՝ ազնվականության մասսաների դրությունը: Իր աշխատություններից մեկում նա վրում էր, թե այն ազնվատոհմ իշխանները, վորոնք կառավարել են մինչև ցարի չափահաս դառնալը, քայլայել են պետությունը, թուլացրել են կենտրոնացված իշխանությունը և այլն: Մասնավորապես, նա ասում էր, վոր ազնվատոհմ իշխանները ծաղր ու ծանակի եյին յենթարկում հասարակ մարդկանց, վորոնց ներկայացուցիչն և համարում նա իրեն: Նա դրում էր՝ «Յես, ճորտդիվացիա» տուժեցի նրանցից: «Իսկ այժմ, թագավոր, վիրավորանքներից ու քաշքուկից մերկ ու բորիկ և հւարատ եմ»:

Այնուհետև նա դրում էր, վոր այդ՝ «ուռասական ցարի ազնվատոհմ իշխաններն իրենք հարստանում են ու ծուլանում, իսկ նրա թագավորությունը աղքատացնում... իսկ քրիստոնեական հավատն ամուր կերպով չեն պաշտպանում և թշնամու դեմ կատաղորեն մահու խաղ չեն. խաղում, զբանով ստում են աստծուն ու թագավորին», այսինքն՝ նա ուղղակի մեղադրում էր ֆեոդալական վերսախամի բոլոր ներկայացուցիչներին այն բանում, վոր նրանք որավուր՝ ցարին խարելով հարստանում են ու ծուլանում, իսկ թշնամիների գեմ վատ են կռվում: Նրանք պատերազմի ժամանակ բանակ են կործանում, իսկ խաղաղ ժամանակ պետությունն են կործանում. պետության կառավարման մեջ հետապնդում են միայն իրենց անձնական շահերը և թալանում են թագավորի գանձարանը:

Իսկ ի՞նչ եր առաջարկում Պերեսվետովը: Նա մատնանշում էր, վոր «ուղղմիկներով ցարն ուժեղ և ու անվանի» և այդ պատճառով պետք ե հոգ տանել հասարակ ուղղմիկների մասին: Խոսք վոչ թե գյուղացիների մասին էր, այլ ծառայող զինվորականների մասին, ազնվականության մասին եր: «Զզինլորն պահյա վորպես դպազն խնամյալ և հանապազ ուրախ արա զիրտ նորա և վոչ իվիք ածյաց ի վերա նորտ զիթախիծ», —գրում էր Պերեսվետովը:

Հետաքրքրական և նշել, վոր Պերեսվետովը բոլոր ուղղմիկների նկատմամբ միատեսակ վերաբերմունք ունենալու կոչ չեր անում: Նա ասում էր, վոր հարկավոր և հատուկ ուշադրություն յերեան բերել այն ուղղմիկների նկատմամբ, վորոնք ցարի շահերն են պաշտպանում: «Զզինլորն զայնոսիկ, ույք քաջարար մարտընչին ընդդեմ թշնամյաց թագավորության ի գործ պատերազ-

մի և աննկում զորավիր լիցին քրիստոնեյական հավատույն, դանվանս զինվորաց այսպիսյաց բարձրացո և զիրտաս նոցաւրախացո և զոռճիկո ի գանձարանն արքունիո հավելք։ Պերեսվետովը հասկանում եր, վոր «ուրախացուցանել զիրտն» կարելի յէ գլխավորապես թագավորական գանձարանից տրվող սոճիկն ավելացնելով։

Այնուհետեւ նա հարց եր դնում ազնվականության դերն ուժեղացնելու մասին։ «Զնոսա (այսինքն հասարակ ուղղմիկների) մերձեսցես առ քեզ և համենայնի հավատացես նոցա և գանդատաց նոցա ունկն դիցես համենայնի և սիրեսցես զնոսա, վորպես հայրն զորդիս յուր, և յեղիցիս առ նոսա առատաձեռն, զի սուատաձեռնությունն վոչ ումեք աղքատացուցանե, այլ զիառս թագավորին բազմացուցանե...»։ Այլ խոսքով՝ հենց սազմիկների հանդեպ ցուցաբերվող արքայական առատաձեռնությունն ենթա քաղաքականության խմատությունը։

Ի՞նչ հիմնական յեղակացություն պետք է հանել Պերեսվետովի այս սսածներից։ Նա ազնվականության անոնչից պահանջում եր, վոր հասարակ ուղղմիկները լինեն Աւեղի ուշադրության կենարոնում։ Վերջիններս պետք է լինեն ցարի հենարանը՝ նրա ինքնակալ իշխանության ամրացման մեջ։ Դրա համար հարկավոր և սազմիկներին ամեն ինչում աջակցել՝ և սոճիկը բարձրացնել, և իրեն մոտեցնել, և վոր ցարը նրանց համար լինի վորովես հարազատ հայր։

Ի՞նչ եր առաջարկում իվաշկա Պերեսվետովն արտաքին քաղաքականության ընագավառում։ Նա խորհուրդ և աալիս՝ վորպեսզի չժիշարդի այս մեծ ոռնիկը, վորը նա պահանջում եր հասարակ ուղղմիկների համար, անհրաժեշտ և զորք ուղարկել նոր շրջաններ նվաճելու համար, —մասնավորապես կազմել նվաճելու համար։ Պերեսվետովը ընդգծում եր, վոր «Առաքյալ զորս ի վերա կազմնի, աճեցուցես զիրտաս զինվորաց քոյով արքայական սոճիկը և գգվանոք և բարիոք վոզդունիվ... և յերկիրն անդ հույժ բարերեր...»։

Պերեսվետովի և այն բոլոր ազնվական սազմիկների հիմնական պահանջները, վորոնց շահերը նա արտահայտում եր, հանդում եյին բոյարության դեմ մղվող պայքարի ուժեղացմանը, բոյարական ինքնիշխանության վակատար լիկվիդացիային, բայ վորում՝ բաշտական վճռական միջոցներով կատարվող լիկվիդացիային, հասարակ սազմիկների նշանակության ուժեղացմանը և

ակտիվ արտաքին քաղաքականության զարգացմանը : Իվան Պերե-  
սլեսովը պահանջում եր բոյարության նկատմամբ վճռուկան մի-  
ջոցների դիմել : Նա ասում եր, վոր այն բոյարներին, վորոնք  
ցարին մերձեցել են վոչ թե իրենց զինվորական ծառայություն-  
ների, այլ իրենց մեծազարմության շնորհիվ, վորոնք ամեն ին-  
չում հակածառում են նրան, դիմադրում են նրա քաղաքականու-  
թյանը և ճնշում են հասարակ ու զմբիկներին, «վայել և հրով այ-  
րիլ և այլ դաժան մահու մատնել զնոսա, զի մի բազմացի չա-  
րիքն» :

Պերեսլեսովի այդ պահանջը համընկնում էր Իվան Ահեղի  
ներքին և արտաքին ապագա քաղաքականությանը :

Ի պատասխան ազնվականության այն պահանջներին, վորոնք  
մասնավորապես արտահայտված են Իվաշկա Պերեսլեսովի գըր-  
փած քններում, Իվան Ահեղն իր թագավորության սկզբում ձեռ-  
նամբկեց մի շարք ներքին ու ֆորմներ մտցնել, վորոնց նպատակն  
եր ամբացնել ինքնակալությունը և վոչնչացնել բոյարական ինք-  
նիշխանության մնացորդները :

Ի՞նչ կար մինչև Իվան Ահեղի սեփորմները, ինչպես եր կա-  
ռավարվում Մոսկվովյան պետությունը :

Ռուգելային իշխանների սերուզներն ունեցին իրենց դորքը և  
իրենց ծառայող զինվորականները, բաշխում ելին հողը վասար-  
ներին և հաճախ հանդիպում ելին իրենց նույնիսկ թագավոր կո-  
չել: Այդ իշխանները հաճախ հայտարարում ելին՝ «Մենք ևս  
Ռուսութիկի սերուզներն ենք, մենք ցարին հավասար ենք, ուստի  
և կարող ենք այնպես գործել, ինչպես ցարը» :

Պետությունը բաժանվում եր գավառների: Գավառները բա-  
ժանվում ելին վարսանների: Բայց իշխաններին, բոյարներին  
պատկանող խոչը վուչինները (հայրենական կարգածները)  
կառավարվում ելին չենց իրենց տերերի կողմից, ցարերը դա-  
վառների և վոլոստների կառավարման մեջ չելին խառնվում:  
Յարը գավառներում նշանակում եր փոխանորդներ, իսկ վոլոստ-  
ներում—վոլոստի պետեր: Թագավորի ներկայացուցիչը, թագա-  
վորի փոխանորդը, իսկ վոլոստում վոլոստի պետը զեկավարում  
ելին գավառի այն մասի կառավարումը և դատ ու դատաստանը,  
վորը չեր մտնում իշխանների ու խոջր բոյարների վուչինների  
մեջ: Իրենց գործունեյության համար, կառավարման համար,  
դատ ու դատաստանի համար փոխանորդն ու վոլոստի պետը տե-  
ղական բնակչությունից ստանում ելին առծիկ՝ փողով կամ բնա-  
գարձով, վորը կոչվում եր «կեր»: Այդպիսի սովորությունը կաշ-

վում եր «կերակրում», իսկ իրենք չինովնէները կոչվում եյին «կերակրողներ»:

Իրականում կերակրումները գառնում եյին չորթում, մշտական հարկահանություններ, կաշառքներ և այլն: Հենց կաշառքները ապրուստի աղբյուր եյին ծառայում փոխանորդների ու փոլսաի պիտերի համար: Ամեն մի փոխանորդ աշխատում եր վերջնել վորքան կարելի յի շատ: Ամեն մեկը, վոր նրա մոտ գտնի յեր գնում, աշխատում եր նրան ալելի շատ տալ, վորպեսի գործը շահի, վորովհետեւ գործը շահում եր վոչ թե նա, ով արդար եր, այլ նա, ով ալելի մեծ կաշառք եր տալիս:

Այդ կամայականությունը չափազանց ծանր եր անդրադառնում տեղական բնակչության վրա, ամենից առաջ զյուղացիության ու պոսադի բնակչության վրա, և նրա մեջ մեծ դժուհություն եր առաջացնում:

Սովորաբար, յերբ «կերակրվողը» մի այլ տեղ եր գնում, կամ ինչպես այն ժամանակ արտահայտվում եյին՝ «կերակրումից ընկնում եր», Զելորիանի պրիկազում նրա վրա հարյուրավոր գանգատներ եյին տեղում: Իսկ յերբ նա տեղում նստած եր, նրա վրա գանգատ անելն անհնարին եր, վորովհետեւ բոլոր գանգատները հենց նրա ձեռքն եյին ընկնում: Ահա թե ինչու տարեգիրն առում ե. «Աղնվատում իշխանները հարստանում են քրիստոնյա ազգի արցունքներից ու արյունից քամված անմաքուրհավաքումով», այսինքն՝ հարստանում են կեղտոտ ճանապարհով, աշխատավոր բնակչության արյան և արտասութի հաշվին:

1556թ. «կերակրումները» վոչնչացվեցին և տեղերում բոլոր պաշտոնատար անձինք անցան գանձարանից արվող ոռնիկի: Այդ, առաջին, թուլացնում եր բոյարների իշխանությունը և վորոշչափով դրկում նրանց կողմից ցուցաբերվող ինքնագլխության ու կամայականության հարավորությունից: յերկրորդ, կենարունացնում եր ապարատը, վորովհետեւ յերբ փոխանորդը կամ զորավարը ոռնիկը պետական գանձարանից եր ստանում, նա ամբողջովին կախված եր լինում ցարից և նրա մերձավոր ոգնականներից: Ուստի «կերակրումների» լիկվեղացիան նշանակում եր պետական ազգարտության կենտրոնացում, և հանդիսանում եր ֆեոդալների դասակարգի ինքնակալ պետությունն ամրացնող ժիջոց:

Կառավարման սխտեմի յերկրորդ առանձնահատկությունը այսպես կոչված գահերեցությունն եր: Բայ այդ առանձնահատկության յուրաքանչյուր իշխանի, բոյարի գիրքը հասարակու-

թյան մեջ վորոշվում եր նրա՝ ըստ ծագման, ըստ մեծագարմության բռնած այս կամ այն տեղով և վոչ թե ըստ արժանիքների: Բոյաբներից ամեն մեկը ձգտում էր ապացուցել, վոր նրա ծագումը ավելի բարձր է, և դրանք համապատասխան պետական կառավարման մեջ տեղ էր գրավում: Յեթե բոյարը անվանի իշխանական տոհմից էր, ապա նա, անկախ իր ընդունակություններից, կարող էր ամենաականավոր պաշտոնը գրավել: Ընդհակառակը, «վատառոհմ ազնվականը» վոչ մի տեղ չեր ստանում: Բոյարը համաձայնվում էր պաշտոն գրավել միայն այն գեղգում, յերբ համոզվում էր, վոր իր բոլոր պետերը ծագումով իրենից բարձր էն: Յեթե պարզվում էր, վոր նրա մերձավորագույն պետն իր ծագումով ավելի ցածր է կանգնած քան ինքը, —որինակ նրա պապը յեղել ե բոյար, իսկ այդ պետի պապը յեղել է այդ բոյարի ժոտ ազնվական, —ապա նա հրաժարվում էր պաշտոնից և իրնդրագիր եր տալիս, թե իրեն «վայել չե» ծառայել այդ պետի հետ:

Գահերեցության ժամանակ ազնվականները յերբեք չեյին կարող առաջ դնալ: Այդ պատճառով Փեղալական դասակարգի այդ ստորին խառն եր առանձնապես տուժում գահերեցության կարգերից: Գահերեցությունը հաճախ մազալու բաների յեր հասցնում: Որինակ, արքայական հացկերույթի ժամանակ կրիվ եր սկսվում, բոյարներից վորեե մեկը գոռում եր, թե իր նախապապը ծագումով ավելի բարձր է յեղել, քան իր սեղանակից կողքի հարեանի նախապապը և իրեն համար տեղ եր պահանջում ցարի գահին ավելի մոտ: Կանայք, որինակ, յեկեղեցում տեղի համարթե ով պետք է ավելի մոտ կանգնի, նայած իրենց ամուսիների դիրքին—կրիվ եյին սկսում: Գոյություն ունի մի պատմություն, թե պատերազմի ժամանակ յերկու առաջնորդներ գահերեցության վեճ են սկսել ուղղակի թշնամու աչքի առաջ, և այս պատճառով, իհարկե, մարտը տանուլ են տվել:

Գահերեցությունը մեծ խոչընդուռ եր բարձր պաշտոնների հանելու ճանապարհին այն մարդկանց համար, վորոնք, չնորհիվ իրենց խելքի, չնորհիվ իրենց ուազմական քաջության և ընդունակությունների, կարող եյին առաջ քաշվել: Դա, իհարկե, խանգարում եր նաև պետության ամրացմանը: Աւստի գահերեցության գեմ մղվազ պայքարը ձեռնոտու յեր կենտրոնացված ինքնակարական պետության ամրացման համար:

1550 թ. Հոկտեմբերին ցարի հրամանով կազմվեց ազնվականական հատուկ «Հաղարյակ», վորը կոչվում էր «կարգածատերեցի», բոյարների յերեխաների, լավագույն սպասավորների հաղու

**բյակի:** Թուսական ցարի լավագույն սպասավորներից ընտրվեցին ամենալավագույնները, թվով հազար հոգի: Այդ «Հազարյակը» գրանցվեց հատուեկ «Հազարամատյանում»: Իվան Ահեղի «Հազարականները» ստացան մերձմոսկովյան լավագույն կալվածներ: Նրանց գորպես իր հավատարիմ սպասավորների, իվան Ահեղը տվեց 180 հազար դեսյատին լավագույն հող, յուրաքանչյուր «Հազարական» ստացավ 150-ից մինչև 300 դեսյատին: Նրանցից կազմվեց մայրաքաղաքի ազնվականության ընտրյալ մասը: Այդ «Հազարականները» կազմում ելին ցարի անձնական դվարդիան: Նրանք անմիջաբար յենթարկվում ելին ցարին և արշավանքի ժամանակ կազմում ելին այսպես կոչված «ցարի գունդը»: Հենց նրանք եւ գրավում ելին պետության հիմնական պաշտոնները՝ դորավարների, փոխանորդների, պրիկազների ղեկավարների և այլն:

Այժմ արդեն հաշվի ելին առնում վոչ թե ֆեոդալի մեծագարմությունը, այլ հաշվի ելին առնում, զլսավորապես, այն, թե նա արդյոք գրանցված և «Հազարյակ»-ում, թե վոչ: Այդ «Հազարյակի» ստեղծումն ուղղակի հարգած եր գահերեցությանը, բոյարության ինքնագլխությանը և ուժեղացրեց իվան IV-ի կենտրոնացված իշխանությունը:

Այժմ ողաշտոններ գրավում ելին առավելապես նրանք, վորոնք մանում ելին այդ հազարյակի մեջ՝ Մոսկվալի ընտիր ազնվականությունը:

1551 թ., յերր զորք եր ստեղծվում կազմնի վրա արշավելու համար, չարյուրյակների դլուխ գրվեցին ղեկավարներ «ռազմական գործին հմտու» մարդկանց թիվը: Այդ դարձյալ հարգած եր գահերեցությանը ամենից ավելի կարեոր ապարատում՝ ռազմական ապարատում:

Իվան Ահեղի ոեֆորմների շարքը պետք է դասել ամենից առաջ նոր դատաստանադրքի հրատարակումը 1550 թ.: Դատաստանադրքի հիմնական հոգսը՝ ցարական ինքնակալության ամրացումն ու կալվածատիրոջ շահերի պաշտպանությունն է: 1550 թիվի դատաստանադրքում ամենից առաջ ընդդեմ եր, զոր ազնվականները հանվում են ազնվատուհմ փոխանորդների անմիջական ազգեցության վոլորտից: Դատաստանադրքի կետերից մեկում ամփում եր. «Համենայն քաղաքն յերկրին Մոսկվոն կուսակալք ամեններն մի իշխանցեն դատել զորդին բոյարաց...», այսինքն՝ բոյարի յերեխանները ցարական փոխանորդների իրավառությանը յենթակա չեն:

Բացի գրանից, աղնվականներին ու վաճառականներին թույլատրվում եր ցելովալնիկների<sup>1</sup> ընտրել՝ փոխանորդի դատարանում մասնակցություն ունենալու համար:

Դրա հետ միասին ստեղծվում եր սիրած անձերի, կուօպտած ավագների ընսահտուա, վորը զբաղվում եր հարկերի գանձումով և դրանով իսկ գարձյալ սահմանափակվում եր փոխանորդների կամայականությունը:

Բացի գրանից, աղնվականների մասին յեղած հոդացողությունը դատաստանագրքի մեջ իր արտահայտությունը գտավ նրանով, վոր հատուկ էիտ մտցվեց բոյարի վորդուն, այսինքն պղնմականին ճորտ գարձնելու անկարելիության մասին։ Առաջ, յիշը աղնվականը բայց արում եր ծառայելուց, նա կարող եր ճորտ դառնալ։ Այժմ 1550 թ. դատաստանագիրքն այդ խոտիվ արգելում եր. «Իսկ զորդիս բոյարաց ծառայողաց, և զբրդիս այնոցին, ույշ վոչ են ծառայալ, մի վոք իշխեցն ի ճորտություն գարձուցանել»։

Վերջապես, դատաստանագրքի մեջ անցկացվեցին Պերեսվատովի առաջարկներն արտահայտող մի շարք պահանջներ՝ բարելավել գործավարությունն ու վոչնչացնել կաշառակերությունը, վորի վրա եյին հիմնված այն ժամանակի դատարանները։ Դատաստանագրքում կար մի այսպիսի մատնանշում. յեթե դատական պրիստավը, այսպես կոչված «նեղեւալլիկը», այսինքն այն ժարդը, վորը դատարան եր կանչում, կաշառք վերցնի, ապա նրան հարկ եր «մտրակով ծեծել և կաշառքը հետ ալնել յեռակի չափով» և, վերջապես, հանել պաշտոնից։

Դատաստանագրքի այս առաջարկները, սակայն, չեյին կարող միշտ գացիայի յենթարկել գյուղացիների և քաղաքային վերնախառների նկատմամբ դատարաններում ու պրիկազներում տեղի ունեցող կաշառակերությունն ու կամայականությունը։

Դատաստանագրքը հաստատվեց զեմսիի ժողովում, վորը կազմված եր բոյարների, աղնվականների, հարուստ վաճառականների և բարձրաստիճան հոգեորականության ներկայացուցիչներից։

1551 թ. տեղի ունեցավ յեկեղեցական ժողովը («Ստողլավ»), վորին ներկա յեր ամբողջ բարձրաստիճան հոգեորականություն-

<sup>1</sup> Յերդվալներ (ցելովանիկներ) կոչվում եյին տեղական աղնվականական ու վաճառականական դասերի, այսինքն՝ հասարակության վերնախառի ներկայացւցիչները, վորսոք իսպան եյին համբուրում (այսինքն յերդվում եյին) և նշան այն ըստի, վոր իրենք արդարությամբ կդատեն։

նը, սկսած մետրոպոլիտ Մակարիից մինչև վարդապետները։ Նրան կրկին քննարկման ներկայացրին իվան Ահեղի գատաստանագիրքը։ Դատաստանագիրքը հավանություն դատավ։

Այսուհետեւ այլ յեկեղեցական ժողովում քննարկվում եր յեկեղեցու կանոնադրությունը, վորը կոչվում եր «Ստողլալ»։ «Ստողլալ» հիման վրա յեկեղեցու բնագավառում անցկացվեց ուժորմ, վորը համապատասխանում եր յեկեղեցու կառավարման կենտրոնացման քաղաքականությանը և պայքար եր մզում արքեպիսկոպոսների ու յեպիսկոպոսների գահերեցության դեմ։

Իվան Խ-ը, անցկացնելով մի շարք ուժորմներ, ամրացնելով իր ուժն ու իշխանությունը, շարունակեց իր պատ իվան Ա-ի և իր հայր Վասիլի Ա-ի նվաճողական քաղաքականությունը։

### ԿԱԶԱԿԻ ՅԵԼ ԱՅՏՐԱԽՈԱՆԻ ՆՎԱՆԱՅ

Իվան Խ-ն իր նվաճողական քաղաքականությունն սկսեց երականացնել Վոլգայի թաթարական խանության զավթումից։

Խ- գարում թաթարական Վոսկի Հորդան վերջնականապես բաժան-բաժան յեղավ մի շարք խանությունների։ Կազմվեցին Կազանի, Աստրախանի, Ղրիմի խանությունները, զատվեց Սիրի-րի թաթավորությունը։

Վոսկի Հորդայում տեղի ելին ունենում մշտական, շրնդհատ-վող ներքին պատեցագմներ, մշտական կովմներ խաների միջև, վորոնք համակնություն ունելին Վոսկի Հորդայի խանական գա-հը ժառանգելու։

1437 թ. Վոսկի Հորդայի խաներից մեկը, Ռուս-Մահմեդը, պաշընկեց արվեց։ Փախչելով Վոսկի Հորդայից, նա զավթեց այս աերիստրիան, վորն անցյալում դրավել եր Բուլղարական պետու-թյունը, և այսուղ հիմնեց Կազանի խանությունը, կենտրոն ունենալով Կազան քաղաքը։

Կազանի խանությունը ներքին կազմակերպության իմաստով Վոսկի Հորդայի պատճենն էր։ Խանության գլուխ եր կանգնած խանը, նրանից հետո գալիս ելին եմիրը (առանձնապես մեծա-զարմ Փեոդալը), բեյերը (նման ուստական իշխաններին), այնու-հետև գալիս ելին մուրզաները և այլն։ Ֆեոդալական դաստիար-գի այս բոլոր բարձր խմբերը կազմված ելին այն մարդկանցից, վորոնք հարկեր ելին ստանում բնակչությունից, այսինքն, հար-կեր ելին համարում թաթարական բնակչությունից և թաթարների կողմից կեղեցիող այլ ազգությունների—մարիների, մորդվանե-րի, չուվաշների, բաշկիրների, ուգմուրանների բնակչությունից։

իրենք Փեռդալներն ազատ եյին հարկերից : Ծառայության համար նբանք ստանում եյին հողային մեծ տիրապետություններ , սորուկներ , ճորտեր : Կազմանի խանը ընակչությունից հավաքում եր շատ հարկեր , վորոնք հաշվում եյին մոտավորապես մինչև 13 : Կար ընամթերքով տրվող հարկ (յասակ) , գոյություն ուներ հողային հարկ , ծխահարկ և այլն : Ծնդհանուր առմամբ , հարկային գործում կազմանի խաները մեծ հնարամառություն եյին յերեան թերում : Գլխավոր հարկը—յասակը կազմում եր աշխատավոր ընակչության յեկամուտի 10 %-ը : Յեթե այստեղ ամերացները զետ 12 տեսակի այլ հարկեր ել , ասդա հասկանալի կդառնա , վոր աշխատավոր թաթաբները և խանությանը հպատակ մյուս բոլոր ճնշված ժողովուրդները ծանր լուծ եյին քաշում :

Կազմանի խանության տիրապետությունները բավական ընդարձակ եյին :

Ֆեոդալներին ունեցին մոտ մեկուկես միլիոն գեայատին լավագույն հող : Այդ հողի ընակիւմ եյին կամ սորուկների աշխատանքով , կամ ճորտերի աշխատանքով :

Կաղանն առնարական խոչը կենարոն եր : Այստեղ ամեն տարի տոնավաճառներ եյին սարքում , ուր վաճառականներ եյին գալիս Խիմիայի ու Բուխարայի խանություններից , Իրանից , Աստրախանի վաճառականները և ուրիշ :

Այստեղ թերում եյին աղ , կտավ , վուշ Ռուսաստանից , մըրզեր ու գինի կովկասից ու Անդրկովկասից : Կաղանի խանությունն արագորեն հարստանում եր և այստեղ եր գրավում ընակչություն մյուս խանություններից՝ Դրիմից , Աստրախանից և այլն :

Կաղանի խանության արտաքին քաղաքականության հիմնական ուղղությունը Մոսկվայի դեմ պայքարելն եր : Կաղանի խաները արշավանքներ եյին կազմակերպում Ռուսիայի վրա : Ժամանակակիցը զրում ե , վոր Կաղանի խանությունը Ռուսիային թատից ել ավելի շատ եր նեղում : Խաներն առանձնապես աշխատում եյին զերեներ ձեռք բերել , վորոնք ստրուկ եյին գարձնում և խիստ արժեքավոր ապրանք եյին հանդիսանում Արևելքի համար :

Բայց արդեն XX դարի վերջում , սուսական պետության ածոց հզորության կազմակցությամբ Կաղանում Կաղանի Փնողալեների մեջ կազմվում է մասկովայի կուսակցություն : Ստեղծվեց և մի ուրիշ կուսակցություն , Կաղանի խանի անսահմանափակ իշխանության կողմնակիցների կուսակցությունը , վորը կողմնորշվում եր գլխավորապես դեպի Դրիմ , վորտեղ թաղավորում եր Գիրեների խանական դինաստիան : Մոսկվայի կողմնակիցների և

Նըմի կողմնակիցների միջև դաժան պայքար եր զնում զնուս  
իվան Ա-ի որով: Յերբ 1479 թ. մեռավ Կաղանի խաներից մեկը—  
Իրահիմը, Աւլու-Մահմեդ խանի թոռը, նրա յերկու վորդինե-  
րի միջև յերկպառակությունն ուժեղացավ: Նրանցից մեկը—Մա-  
հմամեդ-Եմինը Մոսկվյան պետությանը յենթարկվելու կողմ-  
նակից եր, իսկ մյուսը—Ալին: Նըմի խանին յենթարկվելու կողմ-  
նակից: Այդ յերկպառակչական պատերազմում փորձում ելին  
խառնվել թաթարա-սիրիական ու Նըմի խաները:

Թուքքիան, վորն այն ժամանակ Յելլոպայի հղոր, պետու-  
թյուններից մեկն եր, փորձում եր խառնվել նաև Կաղանի խանի.  
գործերում, մանավանդ ՀՎԼ դարի սկզբին, յերբ խանական գահի  
վրա նստեցը ին գիրեյներից մեկին—Սաֆա-Գիրեյին (1524 թ.):  
Սաֆա Գիրեյը ուռաւական պետության սաստիկ թշնամի յեր: Նրա  
որով ուժեղացան հարձակումները Մոսկվյան յերկրի վրա: Նա  
չափարիւմ եր, ինչպես ասում են թաթարական տարեզիրները,  
թաթարական ամենից ավելի հղոր ու մեծ թագավորը: Բայց այս  
խանը, վորը ձգառում եր ուռաւական պետությունից անկախ լինել,  
մեռավ 1549 թ.: Նրանց հետո մնաց նրա կինը և յերեքամյա  
վորդի Ուգեմիշ-Գիրեյը:

Կաղանի տեղական բարձր դասը, ողտիւլով փաստական խո-  
նի բաշակայությունից և գահաժառանգի փոքրահասակությու-  
նից, ոգուտ քաղեց գրանից: Կաղանի խանի ախոյաններից մեկը—  
Շահ-Ալին, հենվելով Մոսկվյայի աջակցության վրա, 1551 թ.  
ամբոց խանական գահին: Բայց Սիրիրի խանի ողնությամբ, Նո-  
ղայան Հորդայի խանի հետ միասին, Մոսկվյայի կռւսակցության  
հակառակորդները դավագրություն կազմակերպեցին, տապալե-  
ցին Շահ-Ալիին և թագավորելու հրավիրեցին Աստրախանի խա-  
նության, ներկայացուցչին, Աստրախանի խանի ժառանգներից  
մեկին—Ցեղեգերին (1552 թ. սկիզբը): Այդ ժամանակ իվան  
IV-ն իր զորքերն ուղարկեց Կաղանի գեմ: Ծուսական զորքը  
կազմված ելին միքանի հարյուր ստրելեցներից (աղեղնաձիզներ)  
և ամբողջովին կոտորվեցին Յեղիգերի կողմից: Այդ պարտու-  
թյունն իվան IV-ին ստիպեց ավելի բավ նախապարաստվել և  
ավելի շատ զորք ուղարկել Կաղանի խանության գեմ: Կաղանի  
վրա արշավանքներ կատարվել են առաջ ել, որինակ, 1506 թ.,  
1524 թ., 1530 թ.: Հենց ինքը իվան Աշեղը նույնպես փորձել և  
միքանի անդամ արշավանքներ կազմակերպել Կաղանի վրա: Առա-  
ջին արշավանքը կատարվեց 1548 թ., այսինքն՝ յերբ նա գահ  
բարձրացավ: Բայց արշավանքի համար ժամանակն անհաջող եք

ընտրվել: Ինչպես տարեդիքն և ասում, եր զջերմություն մեծ և խոնավություն բարձրամ: Շուտով վրա հասավ ձնհալքը: Վոլոգայի սառցաշարժն սկսվեց, իսկ ուրիշ ճանաղարհներ չկային: Իվան Ահեղն ստիպված եր հետ դառնալ:

1550 թ. Իվան Ահեղնը կազմակերպեց յերկրորդ արշավանքը: Բայց Կազանը գրոհով վերցնելու փորձը չհաջողվեց: Հետո գարձյալ սկսվեց ձնհալքը և նորից կարիք յեղալ նահանջելու:

Իվան Ահեղի՝ Կազանի դեմ կազմակերպած առաջին յերկու արշավանքների ճախողման դլխալոր պատճառն այն եր, վորուտները կազանի տակ չունեցին ուղղմական ու պարհային բառա: Յեզ ահա յերկրորդ արշավանքից հետո Իվան Ահեղնը աշխատում և սեղծել այլպիսի մի բազա:

1551 թ. Կազանից 30 կիլոմետր հեռավորության վրա հիմնադրվեց Սվիյաժսկ ամրոցը: Սվիյաժսկ ամրոցի կառուցումը Հանձնարարվեց ուուն ինքնեներ Իվան Գրիգորյեվիչ, Վիբորդիովին, ուղղմական տեսակետից անսպայման տաղանդավոր մի մարդու:

Ուղիւչի անտառներում Վիբորդիովը նախարձն գերաններ սղառքաստեց, և 1550 թ. զարնանն այդ գերանները վորդայով լուղարկվեցին Սվիյաժսկ: Մայիսին ամրոցը հիմնադրվեց, իսկ չորս շաբաթ անց նա արդեն պատրաստ եր: Տարեզրության մեջ այդպես եղ գրած և «Յեզ ալֆարեցին զքաղաքն յընթացը չուրից չարաթուց»: Ամրոցի պատերը կերտված եյին մեկ-մեկու լրցած կտղնե գերաններից: Այսպէս հիմնադրվեց բազան Կազանի գեմ պայքարելու համար: Հենցելով այդ բազայի վրա, Իվան Ահեղնը 1552 թ. սկսում է յերրորդ արշավանքն ընդդեմ Կազանի խանության:

Կազանի տակ ուղարկվեց 150 հազար զորք, 150 ծանր պաշտողական հրանոթներ, այսինքն՝ այն ժամանակի ծանր, հրետանին: Արշավանքին մասնակցում եյին յոթ գնդեր՝ Մեծը, Առաջապնդը, Պահպահականը, Արքայականը՝ զունդը և այլն: Կազանի զրայիման մեջ դիմավոր դերը խաղաց հետեւակը: Այն կազմում եյին սուրելեցները:

Սորելեցները մշտական զորքի սկիզբն եյին, հենց այն մշտական զորքի, վորին հատուկ նշանակություն եր տակիս Ենդելուը «Ֆեոդալիզմի քայլայումն, ու կառիտալիզմի զարդացումն» անտառը կրող հողվածում, վորի մեջ նա տառամ և, թե ինքնակալության ամրանդման համար, Արևմուտքում կենտրոնացված թագավորական իշխանության, իսկ Թուսաստանում, հետեւարտր,

ցարական իշխանության ուժեղացման համար անհրաժեշտ եր մշտական գործ:

Հենց այդ ել իրագործում եր իվան Աւեղը: Նա ստեղծեց կանոնավոր հետեւակ, ստրելեցների բանակը: Ստրելեցները հավաքագրվում եյին ազատ մարդկանցից, պոսաղայիններից, այսինքն՝ արհեստագորներից, մանր առեւտրականներից և այլն: Ստրելեցները վրոշ սոճիկ եյին ստանում: սովորաբար նրանք ստանում եյին 1 սուբլի փաղով՝ տան կառուցման համար և 1 սուբլի տարեկան սոճիկ: Բացի այդ 2 սուբլուց նըանք ստանում եյին հագուստ, ալյուր, կրուստ և ամեն տեսակի բնամատակարարում: Ծառայության ժամանակամիջոցներ նրանց մանր հողակտորներ եյին տրվում և թույլատրվում եր զրադիել արհեստով ու առեւտրով:

Հետեւակը մեծ գեր խաղաց Կազանի առման մեջ, վորովհետեւ նա լավ եր գինված: Նա ունեն ձեռքի հրազեն ձևոքնարկ-պիչչալների ձեռվ: Ճիշտ և, այդ գենքը պակաս կատարյալ եր և խիստ ծանր: Այդ հրացանները կամ պիչչալները կրակում եյին մոտավորապես 200 քայլի վրա: Նրանց նշանոցային հասողությունը շափականց փոքր եր:

Ինչ վերաբերում է հրետանուն («նարյագին», ինչպես նա կոչվում եր այն ժամանակ) ազատ նա բաժանվում եր թեթևի ու ծանրի: Այն ժամանակից թեթև հրետանին ներկայացնում եյին մեկուկեսանց և այլ պիչչալները: Նրանք բավականին դիպուի իրակում եյին յերկաթե ուումբերով: Նրանց հրաձգության հասուցությունը սովորաբար մոտ մեկ կիլոմետր եր, և նրանք ծառայում եյին հակառակորդի հրետանին և կենդանի ուժը վոչչացնելու համար:

Փայտյա, գերանակապ կամ քարե պարիսպը խորտակելու համար ծառայում եր այն ժամանակից պաշարողական կամ ծանր հրետանին: Դրանք պարապահար թնդանոթներ եյին, փորոնք սովորաբար կրակում եյին քարե ուումբերով: Ուումբերի քաշը 40—50 ֆունտ եր, բայց յերեմն կշռում եյին նաև 6 փութ:

Կային նաև հատուկ, բարձրաբակ թնդանոթներ, փորոնք սովորաբար կրակում եյին զագաթնահար կրակով, «հրեղեն ուումբերով», այսինքն՝ այնպիսի ուումբերով, վորոնք ըջածնփոված եյին հրակ բաղադրությամբ: Այդպիսի ուումբերը այրում եյին բերդապարսպի հետևում յեղած շենքերը:

Թուսական զորքերի գլուխ եյին կանգնած իվան Աւեղի լավագույն զորավարներ՝ Վորտափինսկին, Շերեմետյանիվը, Մորո-

դովը և ուրիշ։ Նրանց մեջ եր նաև հետագայում հայտնի դավա-  
ձան Անդրեյ Կուբբակին։

1552թ. ոգոստոսին իվան Աչեղի զորքերը հավաքվեցին  
Մվիյաժակում և շարժվեցին կազանի վրա։

Կազանն այն ժամանակվա համար բավական ուժեղ ամրոց  
էր։ Քաղաքը շուրջանակի պատում եր գերաններից շինված կաղ-  
նե պարիսպը, 5 կիլոմետր յերկարությամբ։ Նրա բարձրությու-  
նը 7 մետր էր, լայնությունը—6 մետր։ Այդ պարիսպի մի մասը  
չըջապատռում եր մի խոր փոս, վորը նախանշված եր այն բանի  
համար, վորպեսզի հարձակվողներին խանդարեր պարսպին մոռե-  
նալու։ Այդ պարիսպի հյուսիսային մասում կրեմին եր՝ գերանա-  
կապ պատերով և խանական քարե պալատով։ Հենց այստեղ,  
խանական պալատի մոտ, դտնդում եր մի գաղտնի աղբյուր, վո-  
րը հետարավորություն եր տալիս քաղաքի համար աղբյուրի ջուր  
ստանալու, վորովհետեւ քաղաքի միջով հոսող Բուլակ գետակը  
վատորակ ջուր եր տալիս։ Կայազորը կազմված եր 30 հազար  
ընտիր զինվորներից՝ հենց իրեն՝ խան Յեղիգերի հրամանադրա-  
րությամբ։

Դրանից զատ, քաղաքից մոտավորապես 20 կիլոմետր հեռու,  
անստառներում թագնվել ելին թաթարական 20 հազար ուլան։ Պա-  
րիսպների վրա կար հրեանի, բայց շատ վատը։ Այդ գլխավո-  
րապես յերկաթով պատած փայտյա թնդանոթներ ելին։ Թաթար-  
ները ձեռքի հրազեն չունեցին։ Տեխնիկական տեսակետից ոռւսա-  
կան զորքերը շատ առավելություններ ունեցին թաթարների հան-  
գեպ։

Կազանի պաշարումը սկսվեց քաղաքի շուրջը պաշարողական  
ողակի ստեղծումով։ Մոտավորապես յոթ կիլոմետր յերկարու-  
թյամբ կառուցվեցին հատուկ մեծ տուրեր, այսինքն գլանաձև  
հողակողովներ՝ 3 մետր բարձրությամբ։ Նրանք միանում ելին մի  
շլթայի մեջ և կազմում ելին տեղաշարժվող պատ։ Պաշարողա-  
կան այդպիսի կառուցվածքները տեղափոխվեցին քաղաքի պա-  
րիսպներից 100 մետր հեռավորության վրա։

Հետաքրքրական է, վոր կազանի պաշարման ժամանակ ոռւ-  
սական ուղարկան արմեստի պատմության մեջ առաջին անդամ  
կիրարկում են ականահատություններ։ Այդ բանի համար իվան  
Աչեղն արտասահմանից բերել տվեց սապյորական գործի մասնա-  
գետներ, մասնավորապես մի ինժեներ, վորը, ինչպես տարեգիրն  
և ասում, եր «Հույժ վարժյալ հավերածություն քաղաքաց», այ-  
սինքն քաղաքներ կործանելու մասնագետ եր։ Այդ մասնագետին

Համեմնաբարեցին ամենից առաջ ավերել ջրի գաղանաբանը։ Նրա  
տակը 60 մետր յերկարությամբ ականային ստորանցք փորձեց և  
սեպտեմբերի սկզբին աղբյուրը ջրով մեկտեղ քարուքանդ արլեց։  
Այսպիսով քաղաքը զրկվեց ջրից և ստիպված եր ջուր վերցնել  
կեզտոտ գետակից։

Թաթարները խիստ ուժեղ դիմադրություն եյին ցույց տա-  
լիս ոռուսական զորքերին։ Կովին մասնակցում եյին նույնիսկ կա-  
նայք ու յերեխաները։

Սեպտեմբերին ոռուսական զորքերը նոր միջոցներ ձեռնարկե-  
ցին Կաղանի պաշարումը ուժեղացնելու համար։ Ձեռնարկվեց մի-  
մեծ ական փորել, պատրաստվում եր վճռական հրետակոծու-  
թյուն։ Մեզ ծանոթ ինժեներ Վիրոդկովի զեկավարությամբ ոռո-  
ւսական զորքերը կառուցում եյին պաշարողական համուկ մի աշ-  
տարակ։ Աշտարակը բերվեց ջրով՝ մասնիք բաժանված վիճա-  
կում։ Նա Կաղանի բերդապարապից 5 մետրով բարձր եր։ Այդ  
վիթխարի աշտարակի վրա, վորը բացի այդ կարսդ եր անզա-  
շարժվել, զրին հրետանի՝ 10 ծանր պիչչալներ, մոտ 50 մեկու-  
կեսանոց պիչչալներ, և նատեցրին հրացանավոր ստրելեցներ։  
Աշտարակը մեծ վնաս պատճառեց թաթարներին։ Նրա պաշտպա-  
նության տակ առաջ շարժեցրին ամրությունները, և ոռուսական  
զորքերը միքանի տասնյակ մետրի վրա դանալեցին ամրոցի պա-  
րիսպներից։

Հոկտեմբերի 1-ին ուժեղ կրակ բացվեց սրաբստահար թնդա-  
նությունից, այսինքն՝ ծանր հրետանուց, միաժամանակ պատրաստ-  
վում եր վիթխարի ստորանցք։ Գետնի տակ գրվեցին յերկու  
ական։ Ականների վրա դնաց 240-ական փութ վառող։ Հոկտեմ-  
բերի 2-ին տեղի ունեցավ ականի պայմանը։ Կաղանի բերդա-  
պարիսպը վճռական տեղերում պայմանը և պատերի մեջ առա-  
ջացած այդ բացվածքներով ոռուսական բանակի հիմնական ուժերն  
1552 թ. հոկտեմբերի 2-ին առաջ նետվեցին։ Իսկապես, այդ ել  
վճռեց Կաղանի բախտը։ Բայց մարտերը տեղի եյին ունենում  
նաև հենց բուն քաղաքի մեջ։ Թաթարներն ուժեղ դիմադրություն  
եյին ցույց տալիս, ամեն մի փողոց մարտով եր գրավվում։ Կա-  
զանը կողովավեց և հրղեհվեց։ Այսուհետեւ նորից կառուցված  
քաղաքում վերաբնակեցրին ոռուսական շատ ծառայող զինվորա-  
կանների՝ ազնվականների ու վաճառականների, իսկ թաթարնե-  
րին թույլարվեց ալրել միայն մերձքաղաքային արվարձաննում։

Բայց այդ Կաղանի խանության հպատակեցման միայն սկզբն  
եր։

Թաթարական բնակչությունը միքանի տարի դիմադրություն  
եր ցույց տալիս ցարական զորքերին: Դեռ 3—4 տարի պայքար եր  
տեղի ունենում Կաղանի շրջակայքում: 1552—1556 թ., թ. ժամա-  
նակաշրջանում կաղանի հողի վրա միքանի ազգամքները բություններ  
յեղան ընդդեմ ուստական նվաճողների: Ապստամբները բնաշնչե-  
ցին ցարական միքանի ջոկատներ: 1554 թ. թաթարների աղջո-  
տամբությունը ճնշելու համար ուստական ցարին հարկ յեղակ  
իշխան կուրքակու զիսավորությամբ կաղանի նախկին խանությու-  
նը շարժել մոտ 30 հազար զորք: Միայն միքանի տարի անց Խվան  
Ահեղին վերջնականապես հաջողվեց տիրել կաղանի խանությանը  
և իրեն յենթարկել այդ ուստանում բնակվող բոլոր ժողովուրդ-  
ներին,—թաթարներին, մորդվաներին, չուվաչներին; մարիններին,  
բաշկերներին, ուղմուրտներին և այլ ժողովուրդների: Կաղան քա-  
ռաքը վերածվեց ուստական բնարդի՛ և դարձավ ուստական Փետրա-  
ների տիրապետության պատվարը: Գրավված հողերը տրվում  
եյին կարևածատերերին, կառուցվում եյին Զերսկարի (1556 թ.)  
Նովկուկայսկ (1573 թ.) Տեսյուշի (1578 թ.) և ուրիշ բնարդի-  
րը, վորոնց մեջ ոթեանում եյին Մոսկովյան զորքերը: Այդ մի-  
ջոցներն ապահովեցին ուստական կարվածատերերի վերջնական-  
ամբացումը նվաճված շրջաններում:

Իվան Ահեղն առանձին ուշադրություն հատկացրեց բաշկերու-  
կան տերիստրիաների զալթմանը: Մասնավորապես, այդ նպա-  
տակով 1574 թ. նա Հիմնադրեց Ռուֆա բնարդը: Նույն այդ ժամանակ  
ակ այլ տիղերում հիմնադրվեցին մի շաքը ավելի մանր քաղաք-  
ներ, այդ թվում Ռուբում քաղաքը: Բնարդերը ծառայում եյին  
զորպես բազա ուստաների առաջնադաշտան համար, այդ շրջանների  
վերջնական նվաճման և ուստական Փետրաների կողմից առա-  
կան բնակչության ճնշման համար:

Կաղանի և կաղանի խանության նվաճման հետևանքով ուս-  
տական կարվածատերերը ստացան մոտ մեկուկես միլիոն դեռյա-  
տին հրաշալի, Պերսկավետովի արտահայտությամբ «հույժ պիտա-  
նի» հոդ: Վաճառականները ստացան առևտրական շահավետ ճա-  
նապարհ, վորը վոլտայի ու կասպից ծովի վրայով նուստաստանը  
կտպում եր Արևելքի տարրեր շրջանների հետ:

Այդ ժամանակ Սասրախանի թաթարական խանության մեջ  
տեղի յեր ունենում ներքին մեծ յերկարակություն: Խաները  
ծեծկուում եյին մեկ մեկու: Թաթարական խաների մի մասը  
ուստական բանակատեղում եր: Սասրախանի Փետրաների մեջ գո-  
յություն ուներ յերկու կուսակցություն՝ Մոսկվայինը և Ղրի-

թուրքականը։ Կազմանի առումից հետո հաղթում և Մոսկվայի կուսակցությունը։ Աստրախանին հարեւան Նողայան Հորդայում դեկավարությունը պատկանում եր Մոսկվայի կողմնակիցներին։ Աստրախանում այդ ժամանակ նատած եր Յամգուրչեյ խանը, Մոսկվայի հակառակորդը։ Մոսկվայի կուսակցությունը, հենվելով նողայինների ոգնության վրա, վորոշեց տապալել Յամգուրչեյին և նրա տեղը նստեցնել Մոսկվայի կողմնակցին։ Նրանց ողության յեկավ իվան IV-ը։

1554 թ. իվան ԱՀեղի առաջին արշավանքին 30 հազար զորք ուղարկվեց բնդգեմ Ասրախանի, բնդգեմ Յամգուրչեյ խանի։ Դետք և ասել, վոր աստրախանցիները չպաշտպանեցին իրենց մայրաքաղաքը՝ նրանք փախան։ Ինքը Յամգուրչեյն իր հպատակներից ամենի առաջ փախավ Ազով՝ թուրքական ուղղվանության ներքո։ Ռուսները ցար նշանակեցին Դերբիշ-Ալիին, Աստրախանի՝ յերբեմնի տապալված մի ցարի, Մոսկվայի կողմնակցին, նրա մոտ թողին կազմակների մի ջնկատ՝ պաշտպանության համար, և նրանից յերգում առան, վոր նա ամեն տարի հարկ կիֆարի ուղօսական ցարին՝ 40 հազար ալթին գրամով (ալթինը համասար և յերեք կոպեկի) և 3 հազար մեծ ձուկ։ Բացի գրանից, Մոսկվայն զորավարն առաջ քաշեց այսպիսի մի պահանջ։ յեթե այդ խանը մեռնի, ապա աստրախանցիները նոր ցարը պիտի վերցնեն Մոսկվայն ցարից։

Բայց 1556 թ. գարնանը Դերբիշ-Ալին անցավ Դրիմի խանի կազմը, վորին հովանավորում եր թուրքական սուլթանը։ Ռուսական պետության դեմ կատարված այդ յերույթը տուիթ ծառայեց, վոր իվան ԱՀեղը ստրելցների նոր ջնկատներ ուղարկեր, վորոնք վերջնականապես նվաճեցին Աստրախանը։ Այսպիսով, Վոլգայի ամբողջ մեծ ձանապարհը անցավ Մոսկվայն պետության ձևուքը։ Կասպիականի ավերի նվաճումը ապահովում եր հետապա առաջխաղացումը դեպի իրան, Անդրկոսկաս և գեղի Հյուսիսայինը։

Զգտելով առաջ շարժվել գեպի արեւելք, իվան ԱՀեղն աշխատում եր, և բավական հաջող, իրեն յենթարկել Հյուսիսային Կովկասի տերթառորիսն։ Այստեղ կային շատ մանր իշխանիկներ, վորոնք կովկասում եցին իրար հետ։ Այդ իշխանիկները կախման մեջ ելին գտնվում Դրիմի խանից։ Յեր իվան IV-ը գրամեց կազման ու Աստրախանը, նրանք բոլորն աշխատում եյին ստանալ նրա ողությունը՝ Դրիմի Գիբեյներից պաշտպանվելու համար։ XV

դարի կեսերին չերքեզական և կարարդինական մի շարք իշխան-ներ ծառայության անցան իվան IV-ի, Ահեղի ժոտ։ Հետագայում՝ 1560 թ. իվան IV ցարը նույնիսկ ամուսնացավ՝ կարարդինական մի իշխանի աղջկա—Մարիյա Տեմրյուկովնայի հետ։

Իր աներոջը, այսինքն Մարիյա Տեմրյուկովնայի հորը պաշտ-պանելու պատրիարքի իվան IV-ը՝ Ահեղը թէրեքի վրա կառու-ցեց մի շարք բերդեր, վորոնք Հյուսիսային Կովկասում Ռուսա-կան պետության հետագա ծագալման բազա եյնն ծառայում։

Այսպիսով, թաթարների, մարիների, չուվաչների, բաշկիր-ների և Պովոլժյայի ու Հյուսիսային Կովկասի մյուս ժողովուրդ-ների հպատակեցմամբ Ռուսական արգային պետությունը սկսում է վերածվել բալթալլ, այսինքն՝ ինքնակալության կողմից կե-ղեքիող զանազան ժողովուրդներից կազմված պետության։

Իվան Ահեղը փորձում եր առաջ խաղալ գեպի արևելք, դրա-վել իրանի տերիտորիան, բայց ստիպված եր նահանջնել։

Պարսկական տերիտորիան նվաճելու փորձերը ցույց են տա-լիս, քար Մոսկովյան պետությունն արգեն այն ժամանակ այնքան ուժեղ եր, քար իր առաջ խնդիր եր դնում. նվաճել այսպիսի մի հզոր հարեւնի, ինչպես պարսկական շահն եր։

## ԿԱՊԵՐԻ ԲՆԳԱՐՉԱԿՈՒՄՆ ԱՐՏԱԱՎԾՄԱՆԻ ՀԵՏ

XVI դարի կեսերին Ռուսական պետությունը ընդարձակում է իր կապերն Արևմյան Յեկրտպայի հետ։

XV դարի վերջի և XVI դ. սկզբի աշխարհագրական մեծ հայտնագործություններն առաջնության համաշխարհային պատ-մության թատերաբեմի վրա նոր տերությունների յենելը։

Իտալիայի փոխարքն առաջին տեղը գուրս յեկան հսկանիան ու Պորտուգալիան, վորոնք դրավիցին գեպի Ամերիկա տանող ուղին և գեպի Հնդկաստան տանող նոր ճանապարհները։ Համաշ-խարհային առևտրական ճանապարհների՝ գեպի Ատլանտյան ով-կիանոս կատարված տեղաշրջումն իրենց շահերին ծառայեցրին իսպանիան ու Պորտուգալիան։ Անգլիան նոր ճանապարհ և վորո-նում գեպի Արևելք—գեպի Հնդկաստան։ Անգլիական վաճառա-կանները նոր շուկաներ են վորոնում և փորձում են Հնդկաստան թափանցել Հյուսիսային ճանապարհով՝ Պորտուգալիայից ու Իս-պանիայից անկախ։

XVI դարի կեսերին հայտնի ծովագնաց Սերաստիան Կարոտի նախաձեռնությամբ Անգլիայում կազմվեց «Զեռնարկու-վաճառա-

Համեների ընկերություն՝ անհայտ և նույնիսկ ծովային ճանապարհով ցարդ չայցելմած յերկրներ, հողեր, կղզիներ, պետություններ և ալբանակառություններ հայտնապործելու համար»։ Անդիմացիները փորձում են անցնել այն ճանապարհով, վոր մեղանում կոչվում և հյուսիսային Մեծ ճանապարհ, այսինքն՝ այն ճանապարհով, վորը յուրացված և միայն բոլշևիկների կողմից այժմ, սոցիալիզմի դարաշրջանում։ Անդիմացիների հյուսիսային այդ ճանապարհը բացելու փորձերը վերջացան անհաջողությամբ։ Հյուսիսի աշխարհագրությունը բոլորին անհայտ եր նրանց անդիմացիներն, ինչպես հարկն ե, չղիտելին նույնիսկ նորվեգական ափերը։ Զնայած դրան, Լոնդոնի միքանի վաճառականներ 1553 թ. հավաքեցին Յ հազար Փունստ ատելիլոնով դումարի կապիտալ։ Այդ փողով պատրաստվեց մի արշավախումբ, բաղկացած յերեք նամակոց՝ «Բարի Հույս», «Լավ Ակնկալություն» և «Եղիարդ—Լավ Զեննարկություն»։ Արշավախմբի վրուխ եր կանոնած վոմն Խյու Ռելուուրի։ Նա մեծազարմ մի աղնվական եր, ուարմական գործին մեծ դիտակ։ «Եղիարդ—Լավ Զեննարկություն» նավի կապիտանն եր Ռիչարդ Զեննոլորը, շատ խելոք, մեծ հարգանք վայելող մի մարդ։ Վորպես փորձված ծովագնաց և մեխանիկացի ու առաջարաշխության գիտակ, Զեննոլորը նշանակվեց ամբողջ արշավախմբի ղեկավոր ղեկավար։ 1553 թ. մայիսի 11-ին արշավախումբն ուղևորվեց Հեռավոր ճանապարհորդության։ Արշավախմբին մասնակցում ելին 116 մարդ, այդ թվում 11 վաճառական։

1553 թ. ոգոսառոսի սկզբին փոթորկեր, ծովում ցաքուցրիվ արեց անդիմացիների խախուստ առաջաստանալակները։ Եերկու նավ խորտակվեցին Կուտ թերակղզու՝ Առուրմանի ափի մոտ։ Ամբողջ անձնակազմը, մոտ 100 մարդ, վոչնչացավ նորախոտից ու սունամանիքներից։ Արշավախմբի անհանուր որադիրը վարում եր մինչև 1554 թ. հունվարը։ Միայն հետեւալ ձմեռը ակնական բնակիչները գտան խորտակվածների հետքերը և տեսան, մոր, յերես նավ «խարիսխ են ձգել կանգառանում, իսկ նրա վրայի մարդիկ, բոլորը մեռած են, և նրանց վրա շատ ապրանք կա»։

1553 թ. ոգոսառոսի վերջին արշավախմբի վերջին նովը մասի Հյուսիսային Դիլինայի զետարերանը, մուսեցավ անհայտ ափերի վորտեղ գտավ իրեն անձանոթ ձկնորսների։ Այդ ձկնորսները գուրս յեկան Ռուսական պետության բնակիչներ։ Զեննոլորն իմացավ, վոր նա փոխանակ Հնդկաստանի, վորը դեսլի ինքն եր զրով գումար առևտրական շահերի մեջ անկշտում անդիմացիան վաճառական։

կաններին, ընկել և Մոսկովիա, վորի մասին անդմացիները բացական մշուչապատ պատկերացում ունեյին:

Իվան IV-ը, իմանալով, վոր ինչ-վոր ոտարերկրացիներ նավով Սպիտակ ծով են ցեկել, հրավիրեց նրանց իր մոտ Մոսկվա: 1553 թ. նոյեմբերին Զենոնորն ուղևորվեց Մոսկվա և այսուեղ մնաց միքանի ամիս: Նրան ընդունեց ցարը, և նա հայրենիք վերադարձավ ռուսական ցարի՝ անդմական թագուհի Մարիյա Արյունահեղին գրած բարեկամական նամակով:

Իր ճանապարհորդության արդյունքների մասին Զենոնորի արած՝ Հաղորդումից հետո «Ճեննարկու-վաճառականների» ընկերությունն անդմական թագուհուց սուացավ Ռուսական պիտույշյան հետ առկառուր անելու բացառիկ իրավունքի հատուկ հրաժարակալ: 1555 թ. սկզբին կազմվեց անդմական վաճառականների հատուկ «Մոսկովյան ընկերություն», վորն իր ճեռքում մենաշնորհի առաջիկա գարձրեց Ռուսաստանի հետ կատարվող առկառուրը: Նրա կազմի մեջ մտան 207 բաժնետերեր: Նրանց թիվը հետաքայլում արագուին աճում և և 1565 թ. հասնում և մինչև 400 մարդու: Առեւտրական ամուր կապեր են հաստատվում Ռուսաստանի և Անդմայի միջև: Ռուսաստանից Անդմայի են արտօնանվում կաչի, ճարպ, մեղրամում, ձյութ, մորթիներ, կանեփի, վուշ և այլն:

Անդմացիները փորձում ելին Մոսկովիայում գերմանական և Հոլանդական գործվածքները վախարինել իրենցով, անդմականով: Նրանց Ռուսաստան ելին բերում մահուդ, շաքար, թուղթ և զանազան ուազմամթերքներ: Իվան IV-ի թագավորության վերջում Հյուսիսային Դվինայի գետարերանում, ուր սովորաբար գալիս ելին անդմացիները, կառուցվեց ուուսական առաջին ծավալին նավահանգիստ Արխանգելսկը: Անդմացիներն իվան Ահեղից մեծ արտօնություններ ստացան: 1555 թ. անդմական առեւտրական ընկերությունը իվան IV-ից չնորհապիր ստացավ իրավունք ունենալու ամբողջ Ռուսաստանում աղաւ ու անմաքս առեւտրական մաքսիրից: Նրանց համար սահմանեցին հատուկ գատարան, լենթարկված հենց իրեն ցարին. Նրանք իրավունք ունեն ապբանքներ տեղափոխել ուր վոր ուղենային, ընդհում մինչև Սամարդանդ: Սովորաբար նրանց ճանապարհն այս եր՝ Աղիտակի ծովով, աղաւ Վոլոդոգայով գեպի Յարսուլավլ և այնաւողից Վոլգայի վրայով նավերով մինչև Կասպից ծովը: Այսպես ելին նրանք կապվում Արևելքի հետ:

1557թ. անգլիական վաճառականների մի ամբողջ արշավախումբ «Մոսկվայն ընկերության» գործակալ Անտոնի Զենկինունի գլխավորությամբ չորս նավերով անցավ Աստրախան։ Արշավախումբն այստեղից շարժվեց զեպի Արևելք, Խիվա ու Բուխարա, և այնտեղ վաճառեց իր ապրանքները։ 1562թ. նույն այդ Զենկինունը Վոլգայի ճանապարհով Իրան անցավ և պարսկական շահից մեծ արտնություններ ստացավ անգլիական վաճառականների համար։ 1558-ից մինչև 1581թ. ընկած ժամանակաշրջանում յոթ արշավախումբ պատրաստվեց զեպի Արևելք։ Նրանցից մեկը՝ Բուխարա և վեցը՝ Իրան։

Անգլիական վաճառականները Իրան ելին ներմուծում մահուգ, բրդէ գործվածքներ, կլայել, պղինձ, պղնձե անոթներ։ Իրանից նրանք արտածում ելին հում մետաքս, տախտեղ, խմբիր և այլ համեմունքներ, բրինձ մարդարիտ, թանգարին քարեր, դորդեր և այլն։ Անգլիացիներն իրենց ապրանքները վաճառում ելին շատ բարձր գնով։ Այդ առևտրի հետևանքով նրանք չափանց մեծ շահութներ ելին ստանում։ Անգլիական ընկերության գործակալներից մեկի զեկույցով մենք կարող ենք հաստատել, վոր այն մահուգը, վորը Անգլիայում կտորը վաճառվում եր 6 ֆունու ստերլինգով, Նիժնի-Նովգորոդում՝ գնահատվում եր 17 ֆունու ստերլինգով։ Դուրս և դաշիս, վոր անգլիացիները ստանում ելին համարյա 300% շահույթ։ Ռուսաստանում կատարած առևտրից անգլիացիները պակաս շահ չելին ստանում, քան իսպանացիները Հնդկաստանում կամ Ամերիկայում։

Ինչ վերաբերում ե Ռուսական պետության վրայով զեպի Ասիա տանող ճանապարհն, ապա այն բավական յերկար եր։ Հարկավոր եր անցնել մինչև Սպիտակ ծով, ինչ Սպիտակ ծովից—Աստրախան։ Սպիտակ ծովից մինչև Աստրախան տանող այդ ճանապարհը ձմեռը սովորաբար տևում եր 46 որ։ Բայց այդ ճանապարհն, այնուամենայնիվ, ավելի կարճ եր, քան թև խաղանացիների մինչև Հնդկաստան կամ Ամերիկա տանող ճանապարհը, վորն այն ժամանակվա հաղորդակցության միջոցների պայմանափում նրանցից խլում եր 2—3 ամիս։ Իրենք անգլիական վաճառականներն ըստդժում ելին, վոր իրենց համար բավականին հարմար ե Իրանի հետ առևտուր անել Մոսկվայի վրայով։ Նրանք ստում ելին, վոր ամերիկա արտազ կատ ունեն Արևելքի հետ, քան այն ունեն խաղանացիներն ու սրբուղալացիներ։ Անգլիացի Մ. Լոկի որագրում, վորը վերաբերում է 1575թ., սուանձնու-

պես ընդգծվում է Անդրկայի՝ Թուսաստանի հետ կատարած առելորի ոգութեալ:

1555 թ. մի ամբողջ նավատորմ ոռուսական առաջին դեսպան Բոխար Նեպեյայի հետ միասին ուզերորդից դեպի Անդրկա: Ծանր ճանապարհորդությունից հետո Ոսխար Նեպեյան վերջապես ընկապ Անդրկա: Նա համաձայնության յեկավ անդրկական թագուհու հետ, վոր ոռուս վաճառականներն իրավունք են ստանում անմաքս առևտուր անելու, տներ կառուցելու պահեստների համար, ստանում են շատ արտանություններ Անդրկայում: Այստեղից նա իր հետ բերեց զանազան վորակավորման շատ մասնագետներ: Գործելը՝ առևտրական ընկերության գործակալ, հետո անդրկական դեսպան Ռուսաստանում, իր «Հուշբիկներ» XVI գարի Մոսկովիայի մասին» գրքում է, վոր Իվան IV-ը «Անդրկայից բերել ավեց հմուտ շինարարներ, ճարտարապետներ, հյուսներ ու վորմաղերներ, վոսկերիչներ, բժիշկներ, գեղագործներ և այլն»:

Նույն այդ ժամանակ Անդրկայից Ռուսաստան յեկավ բժիշկ, մաթեմատիկոս և աստղաբաշխ Բոմենին: Ճարտար մարդ լինելով, նա բարձական արագործն առաջ դնաց Խլան ԱՀԵղի որով, իր համար հեղինակություն նվաճեց և գործում եր վորպես թույներ պատրաստող՝ թագավորին դավաճանողներին թունավորելու համար:

Հարկավոր են նկատել, վոր Իվան ԱՀԵղը, ինչպես ընդգծում են բոլոր ոտարերկրյա գրողները, շատ սիրավիր եր գեպի ոտարերկրացիները, չափազանց հոգ եր տանում, վոր ոտարերկրացիները գային Ռուսաստան, նրա հետ գործարար, առևտրական և ամեն տեսակի այլ կապեր ունենային, ծառայության մնային Ռուսաստանում: Նույնիսկ գերմանական լրահանձնությունը<sup>1</sup>, լինելով Իվան ԱՀԵղի թշնամին, ասում եր այդ մասին:

Շատենն ընդգծում եր, վոր Ռուսաստանում այլերկրացիները մեծ արտոնություններ են ստանում, նրանց մեծ ոսճիկ են տալիս, լավ տներ են հատկացնում Բոլվանովիկայում (արիարձոն՝

<sup>1</sup> Հենրիխ Շատենն, գերմանացի, Ռուսաստան յեկավ վորպես գերմանական կայսրի լրակա, նպատակ ունենալով պարզել Ռուսաստանի ոտղմական թուրությունները, Ռուսաստանի նվաճման ճանապարհները և այլն: XVI դարի Մոսկովիայի մասին գրած նրա գիրքը մի զնկուցակիր եր գերմանական կայսրին այն մասին, թե ինչպես կարիքի յև անձեւ Մոսկովյան պետությունը: Գրքի առաջին դրամիր ամբողջավին ամիրված և զբան: Յերկրորդ զլուխը կոչվում և «Մոսկովիան կայերակոն պրավինցիա գարմանու պլանը»: Շատենը մտերածան չարագրում եր, թե ինչքան հարկավոր է մարդ ուղարկել Սպիտակ ծովը

այլերը աց ինքների համար Յառագայի զետարերանում), տալիս են թանգաղին կաֆտաններ՝ տակը սամույրի մետաքս, հագուստ և այլն: Ողետները ցարական մենաշնորհ ենին, բայց ոտարերի լրացիներին թույլատրվում եր սեփական ողետներ պահել: Ամեն տեսակի մաքսատուրքերից նրանք ազատվում ենին: Դրա փոխարեն ոտարերի լրացիներին մահվան պատճիժ եր սպառնում, յեթե ոռուներն իմանային, վոր նրանք մտադրվում են հետ վերադառնալ իրենց հայրենիքը: Իվան Ահեղն ու ազնվականները յեկվոր ոտարերի լրացիներից պահանջում ենին Ռուսական պետությանը ծառայել հավատարելությամբ ու մինչև վերջը:

1548 թ. սկզբին Իվան Ահեղն արտասահման և ուղարկում մի վայր գերմանացի Շլիտտեյին, վորը նրա մոտ ծառայության մեջ եր գտնվում, վորակեսդի նա իր համար մարդկարերի՝ Ռուսաստանում ծառայելու: Շլիտտեն այսակ վարձում և 123 մարդ, վորոնց մեջ կային սազմական ինժեներներ, բժիշկներ և այլն: Բայց նրանց բոլորին ել Լիվոնիան թույլ չտվեց անցնել:

Լիվոնիան ամեն կերպ ջանում եր արգելակել ոռուների յեւքը դեպի Արևմուտք, խանգարում եր այլ յերկրների հետ հատատելիք նրանց կապերին: Այդ պատճառով նա Ռուսաստանի համար հավաքագրված մասնագետներին թույլ չտվեց անցնել:

### ԼԻՎՈՆԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ

Ռուսական արտասահմանյան տոկորի զարդացման հետ ուելու կապի մեջ և զտնվում նաև Լիվոնական պատերազմը: Դա Իվան Ահեղնի արտաքին քաղաքականության ամենախոշոր միջոցառումն էր:

Ռուսաստանին նավահանդիսատ եր հարկավոր Բալթիկ ծովի տփին, Փիննական ծոցում: Հենց դրան եւ ձգտում եր Իվան IV-ը, բայց միայն Պյատր I-ին հաջողվեց XVIII դարի սկզբին յեւք սունալ դեպի Բալթիկ ծովը: Ռուսաստանի՝ Արևմտյան Յելքոպայի հետ ունեցած կապն ուժեղացնելու համար, արտասահմանի հետ

---

Քրամիւու համար, ինչ ու պետք Պակուն ու Նովգորոդը դալթիւու համար: Նո Ռուսաստանում հայտնվեց 1564 թ.: Սկզբում աշխատում եր գորակես դեսպանական պրեկազի թարգման, յեղել և պանդոկապետ, այսուհետեւ դարձալ կարգածատեր, հետո ծառայության մտավ Խվան Ահեղի մոտ, յեղել և ուղարչների: Ուղարչներից պատվից, վորպեսդի հարտանակ ինչպէս պետքն եւ: Դրանից հետո դարձավ վաճառական և, վերջապես, հետ գնաց արտասահման: Այսուղ նո Ռուսաստանի նվաճման իր պլանը ներկայացրեց գերմանական կայսրին:

կատարվող ռուսական առևտուրն ընդլայնելու համար նավահանգիստ էր հարկավոր վոչ թե Սպիտակ ծովի, այլ Բալթիականի ափին։ Հենց դրա մեջ ել թաղնված և Լիվոնական պատերազմի պատճառը։

Լիվոնիան գտնվում էր Մոոկովիայից Արևմտյան Յելբուգա տանող ճանապարհների վրա։ Ֆիննական ծոցի հարավային ծովափը և Ռիգայի ամբողջ ծոցի անմիջականորեն սահմանակցում է յին Արեմտյան Յելբուգայի հետ։ Լիվոնիան չեր թույլատրում անցնել այն մարդկանց, զորոնց արտասահմանում հավաքագրում է յին Ռուսաստանի համար, նա խանդարում էր ռուսական առերին։ Նարվան ու Ռիգելլու և, վերջապես, Ռիգան, բայց առանձնապես Ռեվելն ու Նարվան՝ առևտուրական յերկու խոչըրագույն քաղաքներ, —ամեն կերպ ջանում է յին իրենց ձեռքը վերցնել Ռուսաստանի առեւտուրն արտասահմանում հետ և ոռու վաճառականներին հնարավորություն չելին տալիս, զոր ապրանքներն իրենք վաճառեն արտասահմանում։ Ռուս վաճառականները զրկվում է յին վոչ միայն ապրանքներից, այլ համախ նաև կյանքից։ Լիվոնցիներն ամեն կերպ կատեցնում է յին արտասահմանյան ապրանքների առաքումը գեպի Ռուսաստան և առանձնապես արգելակում է յին զենքի առաքումը, վորը Ռուսաստանն առանում էր Վնդլիայից։

Ի՞նչ էր ներկայացնում իրենից Լիվոնիան։ Լիվոնիան—այդ այժմյան եստոնիայի, Լատվիայի և մասնակիորեն Լիտվայի շրջանն է։ XII դարի վերջին այդ շրջանը՝ Ռիգայի և Ֆիննական ծոցերի ափերը մուտք գործեցին գերմանական շուն—ասպետները, ինչպես անվանում է նրանց Մարքսը։ Նրանք իրենց յենթարկեցին տեղական բնակչությանը՝ լիվերին, եստոներին, լատվերին և ուրիշ։ Նրանք հափշտակեցին Ռիգայի ծոցի ամբողջ ափը և Ֆիննական ծոցի հարավային մասը։ Զավթած հողերում նրանք կադարձերապեցին սուսերակիրների իրենց զինվորա—ասպետական որդենը և իրենց Լիվոնիա պետությունը։

Գերմանական ասպետ—աղնվականները համարվում է յին կուսակրոններ և միավորված է յին ավանայուրիստների ու կողոպտիչների կրօնա—ուղմական մի կազմակերպության մեջ, վորը կոչվում էր որդեն։ Մերձրալթյան հողերը հափշտակող գերմանական աղնվականների գիմասկոր որդենը կոչվում էր Տետոնիան։ Լիվոնիայի նվաճողները կազմեցին իրենց որդենը, վորը համարվում էր Տետոնականի բաժանմունք և ստացավ Սուսերակիրների որդեն անունը—նրանց խորհրդանիշը յերկու խոչածեված որդենն է յին։ 1237 թ. յերկու որդենները միավորվեցին։

Դերմանական ասպետները, դավթելով Մերձբալթյան հողերը, փորձում էին առաջ խաղալ դեպի ոռուսական տերիտորիան, բայց 1242 թ. Զուգ լճի սառուցների վրա իշխան Ալեքսանդր Նելսոնին կործանիչ Հարլված Հասցըրեց գերմանական անզգամներին և նրանց հետ չպրատեց ոռուսական հողից:

Լիվոնական դեսպանները 1554 թ. յեկան Մոսկովիա, վարպետի վերանորոգեն դեռ Իվան IV-ի նախորդների կողմից 1503 թ. կնքված զինադադարը: Իվան IV ցարը Լիվոնիայից պահանջում էր վճարել այն հարկը, վորը պետք է վճարելին ոռուսներին նովլորողցիների կողմից XIII դարում ջախջախված ասհմանամերձ Դերմատի մարդի գերմանական ասպետները: Նա պահանջում էր նաև Արևմտյան Յեվրոպայի հետ Բալթիկ ծովի վրայով ազգութ առևտուր անելու իրավունք Ռուսաստանի համար, — ոտարիերկրացիների ազատ անցկացում դեպի Մոսկովիա և Հրաժարում Լեհաստանին ու Լիտվային ողնելուց այն դեպքում, յեթե Ռուսաստանը պատերազմ սկսի նրանց դեմ:

Գերմանացիներն Իվան IV-ին խարեցին, նրանք խորամանկության դիմեցին: Համաձայնին ընդունել պահանջը, վորպետի ժամանակ չահեն, նրանք 1557 թ. ուղարկան դաշնութեացին կնքեցին Լեհաստանի հետ: Այն ժամանակ Իվան Ահեղը պատերազմ սկսեց Լիվոնիայի դեմ: Նա հույս ուներ հաջողություն ունենալու, լավ տեղյակ լինելով Լիվոնիայի ներքին թուլության ժամին: Լիվոնիայի ներքին թուլության պատճառն այն եր, զոր այնտեղ շատ ուժեղ եյին հակասությունները մի կողմից՝ Մերձբալթյան հողերը նվաճողների՝ գերմանական ֆեոդալների և մյուս կողմից՝ Հստոնական ու լատիշական ճնշված գյուղացիության միջև: Խորը ատելությունը դեպի շունչասպետները տարեցարի աճում էր նրանց կողմից տանջվող յերկրի բնիկ բնակչության մեջ: Դրանից զատ, Լիվոնիայում սուր հակասություններ գործություն ունեյին Փեոդալների և այնպիսի քաղաքների վաճառքների վաճառկանական վերնախապի միջև, ինչպես եյին Ռիգան, Ռեկելն ու ուրիշները:

1558 թ. հունվարին Իվան IV-ը ոռուսական զորքերը Պոկովի կողմից շարժեց դեպի Լիվոնիայի տերիտորիան:

Լիվոնիայի դեմ մզվող պատերազմը սկզբում բավական հաջող եր Իվան Ահեղի համար: Ռուսական զորքերը գրավեցին մոտ 200 վերստ տարածությամբ տերիտորիա, իսկ 1558 թ. ապրիլից թնդանոթային ուժեղ պաշարման յնթարկեցին Նարվան: Նարվան այն ժամանակ առևտրական խոշոր նավահանգիստ եր գրեթե

Ֆիննական ծոցի ամբին, այստեղ եյին դալիս վաճառականները  
Ֆրանսիայից, Հուանդիայից, Անգլիայից, գերմանական քաղաք-  
ներից: Բայց ամենազլիալորն այն եր, վոր Նարվան հանդիսա-  
նում եր Շալթիկ ծովի Ֆիննական ծոցի բանալին: Ծուսներն ամեն  
որ միքանի հարյուր յերկաթե ու քարե սումբեր եյին բաց թող-  
նում քաղաքի վրա: 1558 թ. մայիսի սկզբին Նարվան անձնատուր  
յեղալ: Իվան Ահեղն առաս ավար ստացալ—ուկելյան, հանդա-  
յան և այլ վաճառականների ապրանքները:

Նարվայի առումից հետո իվան Ահեղը ցնծում եր: Նա անհա-  
պաղ ամբացրեց Նարվան, վորովհետեւ հրաշալի հասկանում եր,  
վոր այն կսկսեն հետ առնել:

Նարվայում ուռւների հեղինակությունն ամբացնելու համար  
անցկացվեցին քաղաքական բնույթի միջոցառումներ: Իվան Ահե-  
ղը Նարվայի բնակիչներին իրավունք տվեց ազատ, անմաքս առև-  
տուր անելու ամբողջ Ծուսաստանում, Նարվան ազատեց զինվո-  
րական ոթեանումներից, արգելեց զորքերին կողոպտել բնակիչ-  
ներին: Զորքը պետք ե պաշտպանել Նարվայի բնակիչների շա-  
հերը: Նարվայի շուրջն ապրող գյուղացիներին իվան Ահեղը տվեց  
հացահատիկ ցանքի համար, հաց՝ ապրուստի համար և ձիեր՝  
դաշտերը մշակելու համար: Այդ պատճառով ել Նարվա քաղաքի  
«հասարակ մարդկեկ» պաշտպանում եյին իվան Ահեղին և բոլորո-  
վին չեյին ուղում նորից անցնել գերմանական տիրապետության  
տակ: Այդ հեռատես քաղաքականությունը ցույց ե տալիս իվան  
Ահեղի պետական ու դիվանագիտական մեծ ընդունակություննե-  
րը:

1558 թ. հուլիսին իվան IV-ը յերկրորդ հաղթանակը տարավ:  
գերպատը, կամ այլ կերպ՝ Յուրեկը, Լիվոնիայի խոչոր առևտրա-  
կան քաղաքն ու քաղաքական կենտրոնն, անցավ ուռւների ձեռ-  
քը: Ծուսներն այստեղ գրավեցին մեծ քանակությամբ հրետա-  
նի—ավելի քան 500 թնդանոթ:

Այստեղ իվան Ահեղը նույն քաղաքականությունն եր անցկաց-  
նում, ինչ վոր նաև Նարվայում: Դերպատի բնակիչները ստացան  
ինքնափարություն, ազատ առևտրի իրավունք: Կողոպտել փորձող  
զինվորները յենթարկվում եյին պատժի, ընդհուպ մինչև մահա-  
պատիժը: Բնակիչների մեջ հեղինակություն նվաճել, վարպետի  
իր իշխանությունն ամբացնել Լիվոնիայում, —ահա թե ինչի յեր  
ձգուում իվան Ահեղն իր զորավարների միջոցով:

Մենք ունենք ստարերկրացիների մի շարք հաղորդապետու-  
թյուններ Լիվոնիայի դեմ Ծուսաստանի մղած պատերազմի առ-

թիվ։ Ֆրանսական մի հայոնի գրող, յեկեղեցական նշանավոր ռե-  
ֆորմատոր Կալվինին ուղղած նամակում հազորդում եր, վոր  
մոսկովյան թագավորը շուտով կդրավի ամբողջ Լիվոնիան։ Նա  
պրում եր, վոր Իվան Ահեղը—ուղղմատենչ ու քաջարի մարդ է։  
«Յեթև Յելրոպայում վորեւ մի տերության վիճակված և ածել,  
ապա հենց սրան և վիճակված»,—մատնավորապես արտաքին ակուխ քաղաքա-  
կան մեջ, նկատի ունենալով Թուսատանը։

Յելրոպական տերությունները հասկացան Մոսկովյան պե-  
տության նշանակությունը, նրա ուժն ու հզորությունը, վորն  
արտահայտված եր մատնավորապես արտաքին ակուխ քաղաքա-  
կանության մեջ։

Լիվոնական տարեգիբ Բարբազար Ռյանսկը իր ժամանա-  
կագրության մեջ նշում եր, թե ինչու ուսոններին հաջողվեց մի  
չարք հաղթանակներ տանել Լիվոնիայում։ Ռյանսկը, չնայած  
վոր Ռուսաստանի քաղաքական թշնամին եր, ընդդում եր ու-  
ստկան զինվորների առանձնակի քաջությունը։ «Ուաշին, ուսո-  
ները աշխատող ժողովուրդ էն։ Ոնհրաժեշտության գեպօւմ  
ուստն անխոնջ և ամեն տեսակ վատնգավոր ու ծանր աշխատան-  
քում . . . նրանք բերդում գիմանում են մինչեւ վերջին մարդը,  
ամելի շուտ կհամաձայնեն, վոր առանց բացառության ամենքն  
ել մեռնեն, քանի ուղեկցությունի ոտար յերկիր դնան»։ Նա ընդ-  
դում և ուսւական զինվորների քաջությունը, տոկունությունը  
և անխոնջությունը և ասում, վոր Ռուսաստանի՝ Լիվոնիայի գեմ  
ժղած պատերազմի հաջողությունների պատճառն այլ եր։ Նա  
ինքն ել համեմատում է ուսոններին գերմանացիների—Լիվոնիայի  
տերերի հետ . . . «Իսկ գերմանացիների համար բոլորովին միենալուն  
և, թե վորուել կապեն, միայն թե հնարավորություն լինի լիա-  
ռատ ունել ու խմել»։

Լեհական Շլյախտիչներից մեկը, պատմարան Գեյդենշտեյնը  
(լեհական թագավոր Ստեփան Բատորիի անձնական քարտուղա-  
րը), նույնպես Ահեղի յերդվյալ թշնամին, 1584 թվին գրեց «Հու-  
շելներ Լիվոնական պատերազմի մասին»։ Այդ հուշելներում նա  
ընդդում եր, վոր Ահեղը ստեղծեց վիթխարի մի տերություն։  
Նա նշում եր, վոր ուսու ժողովուրդը պատերազմի ժամանակի ան-  
հայտալի հաստատակամություն և ցույց տվել բերդերը պաշտ-  
պանելիս և պահպանելիս, իսկ փախստակներ ուսոնների կողմից  
ընդհանրապես շատ քիչ են յեղել։ Նույնիսկ ինքը լեհական թա-  
գավոր Ստեփան Բատորին, ինչպես պատմում է ոտարերկրացի

Պոսեվինը, զարմանում եր ոռւսական դինվորների քաջության վրա:

Ամբողջ Յեվրոպան և ամենից առաջ Ռուսաստանի՝ Բալթիկ ծովի կողմից մերձավորագույն հարևանները, այսինքն՝ Գերմանիան, Շվեյցարիան, Դանիան և Լեհ-լիտվական պետությունը մեծ յերկուուրագ եյին նայում ԱՀեղի հաջողությունների վրա, վորով-չեակ Շվեյցարիան ու Դանիան, ինչպես և Լեհ-լիտվական պետությունը իրենք եյին շահագրգությամբ լիվոնիայի զալթմամբ։ Այդ պատճառով նրանք ԱՀեղի նկատմամբ վարում եյին ակնհայտորեն անբարյացակամ քաղաքականություն։

Լիվոնիան 60-ական թվականների սկզբին «կովախնձոր» եր հյուսիս-արևելյան Յեվրոպայի խոշոր տերությունների միջև։ Նա, ով իշխում էր լիվոնիային, իշխում էր Բալթիկ ծովի վրա, նա իր ձևորումն եր պահում ֆիննական ծոցը։ Տարբեր պետությունների շահերը խճճվում եյին լիվոնիայում, և պատահարար չե, վոր լիվոնական հարցը—այդ ԽVI դարի յերկրորդ հետի Յեվրոպայի համար դիմանագիտական հիմնական հարցն եր։

Վախենալով Բալթիկ ծովում Ռուսաստանի ձեռք րերած հա-ջողություններից, գերմանական վաճառականներն ու ֆեոդալները սկսեցին մասձել Ռուսկադայի յենթարկելու մասին։ Նրանք արդիեցին կայսերական քաղաքների առետուրը նարգայի հետ։ Ճիշտ է, գրանից ավելի շատ առևժում եյին իրենք կայսերական քաղաքները, քան ոռոսականները, բայց այդ՝ գերմանացիների կողմից Ռուսկադայի յենթարկելու բա-ցահայտ փորձ եր։ Այդ—պատերազմի մեջ խառնվելու և Մոոկովիայի պետության արտաքին քաղաքականությանը դիմադրություն ցույց տալու փորձ եր։

1560 թ. ողոնասուին Վալիս քաղաքի մոտ տեղի ունեցավ լի-վանական որդենի վերջին ճակատամարտը ոռոսական զորքերի հետ։ Լիվոնացիները ջախջախվեցին։ Ռուսական բանակին հաջող-մեց բավական արագ գրավել Լիվոնական պետության խոշոր բերդերց մեկը՝ Ֆելլին քաղաքը և զալթել միքանի ավելի մասը բերդեր էս։ Նարգայի, Դերսամի ու Ֆելլին բերդի գրավումից հետո Լիվոնիայի հիմնական մասը ոռոսների ձեռքն անցավ։

Ռուսական զորքերի հաղթությունների հետեւագով տեղի ունեցավ հենց իրեն որդենի քայլայումը։ Այն ժամանակ Հպորդարձած Շվեյցարիան իր տիրապետության տակ է առնում Ռեվելը—Լիվոնիայի խոշորագույն ծովային նավահանգիստներից մեկը։ Լեհաստանն իր տիրապետության տակ է առնում Միգան։

Դանիան վերցնում և Պերնովը: Լիվոնիայից մնում և միայն վոք-  
րիկ Կուրլանդիան: Նա Հայտարարվեց Լեհաստանից ֆեոդալական  
կախվածության մեջ գանվող զքություն:

Սկսվեց Լիվոնիայի համար մղվող պայքարի նոր ետապը:  
Ինուները ստիպված եյին արդեն պայքարել վոչ թե մենակ Լի-  
վոնիական որդենի գեմ, այլ միքանի պետությունների՝ Լեհաստա-  
նի, Շվեդիայի ու Դանիայի գեմ: Շվեդիան այն ժամանակ  
բռնում եր վոչ միայն այժմայն Շվեդիայի տերիտորիան, այլև  
Ֆինլանդիայի տերիտորիան և ամենահզոր պետությունն եր Յել-  
րովայի հյուսիսում: Լեհաստանն այն ժամանակ դաշն եր կապել  
Լիտվայի հետ, սարկացրել եր Բելոռուսիան և Ռուսական: Նա  
Ռուսական պետության ամենաուժեղ թշնամիներից մեկն եր և  
ձգում եր նոր տերիտորիաներ զավթել:

Հենվելով երենց գաշնակիցների վրա, լիվոնցիները 1561 թ.  
առբից կոխվ սկսեցին Մոսկվյան պետության դեմ: Հենց 1561 թ.  
Լեհաստանը պատերազմ Հայտարարեց Ռուսաստանին:

1562 թ. դեկտեմբերին իվան Ահեղը վիթխարի քանակու-  
թյամբ զորք կենտրոնացրեց Մոժայսկի տակ (մինչև 80 հազար):  
Բայց միացյալ զորքերից ոռուները մի շարք պարագաներ  
կրեցին: Յերբ գլխավոր հրամանատար Կուրբուկին Նեկելի տակ  
ջախջախվեց, Ահեղի մեջ կասկած ծագեց գլխավոր հրամանատա-  
րի և մյուս զորավարների գալաճանության մասին: Նա վճռեց ան-  
ձամբ գլխավորել ոռուսական զորքը: 1563 թ. փետրվարին Իվան  
Ահեղին հաջողվեց առնել Պոլոցկը, վոր այն ժամանակ հանդի-  
սանում եր բելոռուսական խոշոր քաղաք, գրաված Լեհաստանի  
կողմից, և հասնել մինչև Վիլն: Այսպիսով, Ահեղը տիրեց Լեհ-  
աստանի պետության բավականին զգալի տերիտորիային:

Շուտով բացվեց խոշոր վոտչինիկ-բոյարների գալաճանու-  
թյունը: 1564 թ. հունվարին ոռուսական զորքի աչքի ընկնող պե-  
տերից մեկը—Անդրեյ Կուրբուկին, վորը Դերպտի ոռուսական կա-  
յազորի հրամանատարն եր, փախակ վորպես գալաճան լիհական  
թագավորի մոտ: Նա փախակ վոչ մենակ, այլ 12 ուրիշ դավա-  
ճան-բոյարների հետ, վորոնք առաջ ոռուսական բանակի խոշոր  
հրամանատարներն են յեղել: Կուրբուկին անհապաղ իր ոգնու-  
թյունն առաջարկեց լեհական թագավորին, սկսեց հրամանատա-  
րությունն անել 15 հազար մարդուց բաղկացած լեհական զօրքերի  
ջոկատին, հարձակվեց ոռուսական տերիտորիայի վրա, թալանից  
վերիկից լուկին և հետ զնաց: Կուրբուկին լեհական թագավորից  
որպահնում եր անհապաղ հարձակվել Մոսկովյայի վրա: Նա գլո-

գեց նաև Ղրիմի խանին հարձակվել Մոսկովիայի վրա, այսինքն  
պայքարի ակտիվ դավաճանական քաղաքականություն եր վարում  
Մոսկովիայի գեմ:

Անձամբ իվան ԱՀեղին հասցեազբած նամակում Կուրբակին  
խիստ սուր կերպով եր հանդես գալիս ԱՀեղի քաղաքականության  
գեմ, հարձակվում եր Մոսկավյայի իշխանների ամբողջ ցեղի վրա,  
հայտարարելով, վոր նա յեղել և յեղայրասպան, արյունախում  
ցեղ, «ի ծնե գաժան որինազանցության ու հեշտասիրության  
մեջ»; ԱՀեղին նա անվանում եր տիրան և առանձնապես նրա վրա  
հարձակվում եր այն բանի համար, վոր նա իրեն ողնականներ եր  
հավաքում վոչ թե ազնվազարմ բոյարությունից, այլ քահանա-  
յորդիներից, հասարակ ժողովրդից: Դրանով Կուրբակին արդա-  
րացնում եր իր գավաճանությունը: Նամակը վերջանում է մի  
հաղորդագրությամբ, թե այն գրված և «Վորմերում, իմ թագա-  
վոր Ավգուստի քաղաքում»:

Ի պատասխան այդ լիտի նամակին իվան ԱՀեղը 105 եջից  
բազկացած մի յերկար գրություն և շարադրում: Այդ՝ իշխան  
կուրբակուն ուղղված այն նշանավոր գրությունն ե, վորի մեջ  
իվան ԱՀեղը «հաճոյախոսություններ» եր փոխանակում իշխանի  
հետ, կոչելով նրան շուն ու դավաճան:

Իվան IV-ն ընդդում եր, վոր ազնվատոհմ իշխանների մա-  
հապատիմներն արդարացի յեն, վորովհետև դավաճանների հետ  
այլ կերպ չի կարելի վարովել:

Կուրբակու և մյուս զորավարների գործած դավաճանությունը  
լիլոնիայի գեմ մղած պատերազմում խթան հանդիսացավ, վոր  
իվան IV-ն ալելի վճռական պայքարի անցներ խոշոր վոտչիննիկ-  
րոյարների գեմ, մյունք ձգտում ելին նրա ինքնակալ իշխանու-  
թյունը ստհմանափակել:

## Ո Պ Ր Ի Զ Ն Ի Ա Ն

1564 թ. գեկանեմբերին իվան IV-ն ընտանիքով անսպասե-  
լիորեն մեկնեց Կոլոմենսկոյ գյուղը, իսկ այսուհետեւ ուղևորվեց  
ավելի հեռու—Սլեքսանդրովսկայայ ավանը, վորը Մոսկվայից 115  
կլիոմետրի վրա յի (այժմ Ալեքսանդրով քաղ.): Այսուղից նա  
նամակ գրեց բոյարներին, թե այլու չի կարող հանդուրժել այն  
գրությունը, վորը գոյություն ունի Ռուսիայում:

Իվան IV-ը նամակ դրեց նաև Մոսկվայի պոսաղին, վոր բո-  
յարները գալաճանում են նրան ու ինքնազլիսություն անում, իսկ

վաճառականներից ու ժողովրդից նա գծուհ չի, «Նրանց գեմ  
դայրույթ չի տածում»:

Մոսկվայի պոսադը պաշտպան կանգնեց իշխանին: Նամակի  
ընթերցման ժամանակ հրապարակում զոռում ելին, վոր ցարը  
վերադառներին չեն պաշտպանում և իրենք կվոչնչացնեն նրանց:  
Յարի մոտ ուղարկվեց բոյարներից, բարձր հոգեորականությու-  
նից, պրիկազների մարդկանցից ու վաճառականներից կազմված  
մի գելեգացիա: Նա համաձայնվեց վերադառնալ ու թագավորել  
այն պայմանով, վոր լիակատար ազատություն ունենա դատաս-  
տան տեսնելու դավաճան-բոյարների զվարի: Բոյարները համա-  
ձայնություն տվին դրան ել: Իվան Ահեղը վերադարձավ 1565 թ.  
հունվարին և սկսեց անցկացնել ոպրիչնինայի իր քաղաքականու-  
թյունը:

Ոպրիչնինան պայքարի միջոց հանդիսացավ այն կալվածա-  
տեր ազնվականության համար, վորի վրա հենվում եր իշխանը,  
պայքար, վորը մզգում եր հողին և ճորտ գյուղացներին տիրե-  
լու: Համար, կենտրոնացված ինքնակալ իշխանության հետազա-  
մբապնդման համար ընդդեմ իրենց վոաշխնաներում վորպես  
փոքրիկ թագավորներ նստած բոյարների, ընդդեմ ինքնակալ իշ-  
խանությունը սահմանափակելու նրանց ձգտման:

Պետության մի մասը (հիմնականում պետության կենտրոնա-  
կան և հյուսիսային՝ չըջանները, նախկին ուղևացին իշ-  
խանությունները և այդ իշխանությունների կենտրոնները՝ Մո-  
ժայսկը, Սուզդլը, Շույան, Գալիչը, Վոլոդյան, Ստարայա  
Ռուսան, Բելեկը, Վյազման, Կոզյոլսկը և ուրիշները) Ահեղի կող-  
մից զատվեց վորպես ոպրիչնինա: Այդ մարդի բնակիչները կոչ-  
վում ելին ոպրիչինեցներ, այսինքն՝ հատուկ մարդիկ, իսկ այդ  
մարդի ծառայող գինորականները կոչվում ելին ոպրիչնիկներ  
(ոպրիչնինան ծագում և սուսական օբրիչ բառից, այսինքն՝ բա-  
ցի):

Ի՞նչ ելին ներկայացնում իրենցից ոպրիչնիկները: Դրանք  
իշխան Ահեղի ջնկովի մարդիկն ելին Ապրիչնինայի մեջ զասվեց  
ընտիր ազնվականության մի հազարյակը: Այսուհետեւ ալիլացվեց  
ելի հինգ հազար: Այսպիսով, մոտ վեց հազար ոպրիչնիկներ  
տուանձնացվեցին վորպես ազնվականության հատուկ արտօնյալ  
խումբ, վորը Ահեղից ստացավ կալվածքներ և կաղմեց նրա զին-  
ված հետարանը: Այդ գորքի շեֆը և զավագրության գետը Մալ-

յուստա Սկուբատովին եր (Պլէչէյել-Բելոկեն), վորը Աչեղի աջ ձեռքն եր հանդիսանում:

Ի՞նչպիսի աղնվականներ առանձնացվեցին ուղրիչնինայի համար: Այն աղնվականները և բոյարության այն մասը, վոր ցարն առնում եր իր պաշտպանության տակ, վորպես իր հավատարիմ սպասալորների: Նա ամեն կերպ ձգտում եր, վոր իրենց հարըստությամբ ու սպառազինությամբ նրանք գերազանցեն բոլոր մնացյալներին: Ուղրիչնիները ցարին հավատարմության հատուկ յերգում եյին տալիս: Նրանք յերգվում եյին, վոր կհազորդեն ամենքի մասին, ովքեր կփորձեն ցարի գեմ վորնե վատ բան մտածել, նրանք յերգվում եյին ուզածդդ միջոցներով պայչարել պետության ու թագավորի դավաճանների դեմ:

Ուղրիչնիները նույնիսկ արտաքուստ տարբերվում եյին գեմսկի մարդկանցից: Նրանք հատուկ համազգեստ եյին կրում—սովորաբար ու կաֆտան շքեղ ու գույնզգույն հագուստի վրայից և թամրին կից շան գլուխ ու ցախավել: Այդ խորհրդանիչն եր այն բանի, վոր նրանք պետք ե հոտոտելով իմանան, Հետախուզելով գտնեն ցարի թշնամիներին և ավելին-թափեն բոլոր դավաճան-բարեներին:

Իվան Աչեղն ուզածդդ պայմաններում պաշտպանում եր իր հավատարիմ սպասավոր-ուղրիչնիներին, պաշտպանում եր նույնիսկ այն ժամանակ, յերբ նրանք անարդարացի եյին: Այդ մոմենտն ե արտացոլված Լերմոնտովի Հայտնի «Յերդ Վաճառական Կալաչնիկովի մասին» ստեղծագործության մեջ: Ցարի կողմից սարքված բռնցքամարտի ժամանակ վաճառականը սպանում ե ուղրիչնիկին: Իվանը մարտից առաջ պարզ խոստացավ Հաղթողին: «Ով հաղթի, ցարը նրան կպարդեատրի, իսկ ով կհաղթի, աստված նրան թողություն կտա»: Մակայն, յերբ վաճառական Կալաչնիկովը սպանեց ուղրիչնիկին, Իվան Աչեղն Հաղթողին մի փոքր այլ տեսակի պարզեց և տալիս:

Я топор велю наточить - навострить,  
Палача велю одеть - нарядить,  
В большой колокол прикажу звонить,  
Чтобы знали все люди московские,  
Что и ты не оставлен моей милостью<sup>1</sup>...

<sup>1</sup> Կըրտմայեմ կացին սրեւ-սպացնել,  
Կէրտմայեմ զահնին հաղցնել-զարդարել,  
Կէրտմայեմ մեծ զանգակը հնչեցնել,  
Վոր մոսկովյան բոլոր մարդիկ իմանան,  
Վոր իմ շնորհին դու ել ես զարձել արժան...

ԱՀա թե ցարական ինչպիսի ջնորհ եր սպասում հաղթող-  
վաճառական Կալաշնիկովին այն բանի համար, վոր նա համար-  
ձակվեց սպանել ուղրիչնիկին:

Պետության մյուս մասը, վորը չեր մտել ուղրիչնինայի մեջ,  
կոչվում եր դեմքչինա:

Ջեմսիկի մարդիկ—այդ բոյարների ու աղնվականների այն  
մասն եյին, վորոնք զրկված եյին Ահեղի պաշտպանությունից,  
վորոնց գեղալի մասն աչքից ընկած եր: Դրանք, գլխավորապես,  
ուղելային իշխանների սերունդներն եյին, իշխանիկները և այն  
բոյարները, վորոնք անց եյին կացնում ինքնառվլսության քաղա-  
քականություն, վորոնք պայքարում եյին Ահեղի ստեղծած կենտ-  
րոնացված ինքնակալ պետության դեմ:

Ջեմչինան կառավարում եյին իվան Բելոկին ու իվան  
Ստիլավալսկին: Իվան Ահեղը նրանց գլմէն թաղավոր դրեց թա-  
թարական նախկին արքայուրդի Սիմյոն Բելուղատովիչին:

Պետության աերիտորիայի մի մասն առանձնացվեց ուղրիչնի-  
նայի համար այն նպատակով, վորպեսդի այնտեղից վտարեն բո-  
լոր բոյարներին, ուղելային իշխաններին և նրանց լավագույն հո-  
գերը հանձնեն ուղրիչնիկներին: Բոյարներից ու իշխանիկներից  
խում եյին դույքը և ուղարկում ծայրամասերը, յեթե չեյին  
սպանում տեղն ու տեղը: Ընդամենը վտարվեցին մոտ 12 հազար  
ընտանիք:

Իվան Ահեղի առաջարկությամբ աչքից ընկած իշխանների  
ու բոյարների կալվածքները հարքունիս եյին գրավվում: Ուղրիչ-  
նինայի մեջ առնված քաղաքների յեկամունները գնում եյին ուղ-  
րիչնիկների ռոճելի վրա:

Հենց բուն Մոսկվայում կային աչքից ընկած փողոցներ: Ար-  
տոնյալ դրության մեջ եյին Արբատը, Սիվցև Վրաժյոկը և Նի-  
կիսուկայա փողոցի մի մասը: Վողդվիթենիկայում, Արբատի մոտ,  
վորտեղ այժմ Լենինի անվան գրադարանի նոր շենքն և, կառուց-  
վեց ուղրիչնային պալատ իշխան Ահեղի համար, վորը հրաժար-  
վեց ասլըել Կրեմլում:

Իվան Ահեղը ուղղակի հայտարարում եր, վոր ուղրիչնինայի  
սպատակը—այդ «մարզուկներին անտղելը», ստուդելն և, և վոչ  
միայն անտղելը, այլև վոմանց ջարդելը:

Բուրժուական միքանի պատմաբաններ ուժգնորեն ապացու-  
ցում են, վոր Ահեղը—այդ կիսահիվանդ, խելացնոր մարդ և, վո-  
րը տառապում եր հալածվելու ու կասկածության մանիսով: Այդպիսի պնդումը չի համապատասխանում պատմական իրակա-

նությանը, վորովհետեւ դավաճանությունն իրոք բռյան եր դըել բոյարների մեջ։ Զուր չե, վոր ժողովրդական մի յերգում ճիշտ կերպով յերգվում ե, թե դավաճանությունը նստած ե ցարի կողքին, «միենույն սեղանի շուրջը, ուտում-խմում ե միենույն տեղից, հաղուստ ե հաղնում միենույն մահուդից»։ Սիալը ում ե նաև Պոկրովսկին, վոր կասկածում եր դավաճանության առկացության մեջ։ Դավաճանների զլսին դաժան դատաստան տեսնելը միանդամայն անհրաժեշտ եր ու ճիշտ։ Դավաճաններին հարկավոր եր վոչչացնել, վորսպեսզի ստեղծվեր ու ամրացվեր կենուրունացված հղոր պիտություն։

1566 թ. կայացավ Զեմսկի ժողով։ Այդ ժողովում կային 374 մարդ։ Նրանց մեջ կային 29 բոյար, մոտ 200 ազնվական, 32 արքակիսկոպոս, 12 «Հյուր» (խոշոր վաճառականներ), միքանի տասնյակ մարդ պրիկազների ծառայող անձնակազմից։

Հիմնական հարցը, վոր քննարկում եր Զեմսկի ժողովը, Լիվոնական պատերազմի հարցն եր։ Ի՞նչպես վարչել այսուհետեւ, շարունակել պատերազմը, թե՞ վոչ։ Յեվ ահա թե ինչ պարզվեց։ Վաճառականներն ու ազնվականները կողմնակից եյին պատերազմին։ Որինակ, ազնվականները պարզ ու վորոշ հայտարարեցին։ «Մեղ թվում ե, վոր պետությունը պետք ե պաշտպանի այն քաղաքները (այսինքն՝ լիվոնցիներից իւլվածները), իսկ մենք, նրանուրեք, նրա պետական դործի համար պատրաստ ենք»։

Իսկ բոյարներն այսպես հայտարարեցին. «...պատերազմը շարունակել հարի կլիներ... բայց յեթե թաղալորն ուղենաց ցարի հետ անձամբ հանդիպել ու համաձայնության դալ, ապա կտրելի յե այդ գործում իրար միջև պայմանագիր կատել»։

Իվան Ահեղը այդ ժողովի որինակով համոզվեց, վոր բոյարությունն իսկապես դավաճանների բույն եր։ 1567 թ. բոյարների շրջանում հայտարերվեց դավադրություն իվան Ա-ի և նրա քաղականության դեմ։

Բատարերկրացի Շլիմակնուցը իր գրքում հարորդում ե, վոր 1567 թ. 30 մեծաղարմ անձեր իվան Շույակու զլսավորությամբ գրալոր պարտավորություն վերցրին իվան Ա-ին ուղիւնիկների դեկապարների հետ մեկտեղ մատնել լինական թագավոր Սիգիրտունդ Ավգուստուժեռքը, յեթե միայն նա շարժվեր Մոսկվայի վրա։

Իվան Ա-ի կատարած հետաքննությունը ցույց տվեց, վոր դավաճանությունը խոր արմատներ եր գցել բոյարության մեջ։ Մասնավորապես պարզվեց, վոր նովզորոդի հողեւոր իշխանություններն ել, դաշնակցած ցարին մոտիկ միքանի ուղրիչնիկների

Հետո, ինչողես իշխան Վլյազեմսկին և ուրիշ՝, դավադրության ակտիվ ժամանակակիցներն եյին: Դավադրության հայտարերութից հետո մահապատճի յենթարկվեցին միքանի հազար բոյարներ ու աչքից ընկած ազնվականներ: Մահապատճի յենթարկվեցին նաև դավաճանության մեջ մերկացված միքանի ոսլրիչնիկներ: Գլխավոր դավադիր իվան Շույսկուն Ահեղն ինքն սպանեց գանակով:

Իվան Ահեղը բոյարներից յերգում եր առնում, վոր նրանք չեն փախչի Ահաստան կամ Լիտվա: Յերդմանն ի համելում պահանջվում եր վճարովի առողիք 15 հազար ռուբլու գումարով վոսկի իվան Ահեղի ժամանակի փողով (1913 թ. կուրսով՝ մոտ մեկուկես միլիոն վոսկի ռուբլի):

Հարկավոր ե կրկին ընդդեմ, վոր բուրժուական ու աղնվականական պատմաբանները, Կարամզինից սկսած, այդ թվում Կոստոմարովն ու Կյուտչեվսկին, միարերան հայտարարում եյին, թե ոսլրիչնեան—այդ անմիտ սպանությունների արյունահեղ եպոսից յե: Հարկավ, նրանց համար խիստ ցավալի յեր, վոր Իվան Ահեղը բոյարական «կապույտ» արյուն եր թափում: Նրանց համար անհարմար եր գրել բոյարների՝ ցարիդմի դարաշըջանում կատարված մասսայական մահապատճինների մասին:

Ահեղի՝ Դավաճան-բոյարների գլխին գատաստան տեսնելը չեր ներկայացնում ինչ-վոր գերբնական մի բան, վորը հակամեան պնդելու բուրժուական պատմաբանները, այլ արվում եր աղնվական-կալվածատերների ոգտին և հանդիսանում եր մի միջոց, վորն ամրացնում եր շահագործող-Փետողալների դասակարգի ավելի առաջավոր մասի տիրապետությունը: Իվան Խ-ը, լիկվիթացիայի յենթարկելով յերկրում յեղած բոյարական արտոնությունները, «կարծես թե ալարտում եր կալիտայի սկսած ուղելային ցաքուցըի իշխանությունները մի հզոր պետության մեջ հավաքելու գործը» (ԽՍՀՄ պատմության համառոտ դասընթաց, Շեռակովի խմբագրությամբ, Հայ. Հրատ., էջ 58):

ԽՎ դարի Յեվրոպայում իշխող դասակարգի մի մասի արյունահեղ դատաստաններ տեսնելը մյուսի գլխին ել ալիկի մասապահական մասշտաբներով եյին անցկացվում, քան Ռուսաստանում: Այս պատճառով այն հայտարարությունները, թե Ահեղը հոգեկան հիմանդ եր, բուրժուական պատմաբանների դատարկ հնարանքն ե:

Հետաքրքրական ե, վոր արևմտա-յեվրոպական պատմաբաններից վոչ մեկը չի ընդդեմ իվան Խ-ի այդ առանձնահատկությունը: Ահեղը, իհարկե, հոգեկան հիմանդ չեր, բայց նա հո-

պեղես անհայտապակշխո մարդ իր: Այդ բացատրվում է ժանկության տարիներին ստացած նրա դաստիարակությամբ և նրա Հետագա անրարոյական անձնական կյանքի առանձնահատկություններով: Մենակ պաշտոնական նա յոթ կին ուներ: Նրա հոգեկան անհայտապարակչության ամենացայտուն որինակներից մեկը Հանդիսանում է զայրույթի մոլուցքի ժամանակ կատարված իր աշխադ վորդի Խվանի սպանությունն իր ձեռքով: Այդ մոմենտն արտասովոր վառ կերպով պատկերված է ռուսական մեծ նկարիչ Ռեմբինի Հոչակալվոր նկարում:

Անհրաժեշտ է նշել ոպրիչնինայինակ հակառակ կողմը: Ռուբիչնինան գոչնչացքեց Խուսաստանի բոյարության նշանակելի մասը: Բայց բոյարության դեմ մղվող կոփիլը գնում եր գյուղացիության հաշվին: Բոյարների քայլայումն ու վոչնչացումը իր հետեւց բերեց գյուղացիության մասսաների քայլայում, վորովհետեւ բոլոր բոյարներն իրենց անտեսական հղորությունը խարսխում ենին դյուղացիական ճորտական աշխատանքի վրա: Յերբ նրանց տիրապետությունները քայլայլում ենին, քայլայլում եր նաև գյուղացիական տների գդալի մասը: Ոպրիչնիները թալանում ենին գյուղացիներին և ամեն կերպ ծաղրուծանակիրում նրանց: Բոյարական վոչնչացիուղ վուաշինաների գյուղացիական ընակչությունն որենքից գուրս եր հայուարարվում:

Ռոտարի կերպացի Շլիֆտինզն Խվան Ահեղի ժամանակվա Ռուսաստանի մասին դքած իր պատմության մեջ զրում և Խվան IV-ի՝ գյուղացիության դպիին տեսած դատաստանների մասին: «Եալվածքներն ու Հացի զեղերը նա այրում ու մոփիր եր դարձնում: Իսկ ինչ վերաբերում է շինականների կանանց, ապա նա հրամայեց նրանց մերկացնել ու անտառները քշել, վորպես տավար, ըստ վորում ծածկաբար տեղավորված ենին դարան մտած մարդապանները, վորպիսդի տանջին, սպանին ու Հոշուեն անտառներում թափառող ու փախուստ տվող կանանց»:

Ոպրիչնիներն իրենց դիրքը հաճախ ողտագործում ենին անձնական շահերի համար: Հենրիխ Շտադենը, վորի մասին մենք արդեն տաել ենք, միաժամանակ ոպրիչնիկ ե յեղել, մասնակցել է բոյարության դեմ դործող պատիչիչ արշավախմբերից մեկին: Նա արշավախմբի գնաց մենակ իր ձիով, իսկ վերադարձավ ամեն տեսակի բարիքներով լի 22 օալիբրով: Շտադենն ոպրիչնիկի գիրքն ոգտագործեց թալանի համար: Այդպես եր հարստանում նաև մրւս ոպրիչնիների նշանակելի մասը:

Դավաճանության դեմ իշխան ԱՄ-ի մղած կովում շատ կամաց ականություն ու բռնություններ կային աշխատավոր բնակչության նկատմամբ:

Վորսկես որինակ հանդիսանում և Նովգորոդի ավերումը 1570 թ.: Ամբողջ քաղաքը դրվեց ուղրիչնիկների տրամադրության տակ և հրի ու կողոպուտի մատնվեց, այն ինչ գավաճանները հարուստ և ուժեղ բոյարներն եյին:

Ազնվական-ուղրիչնիկները դյուդացիներին եւ ավելի մեծ չափով եյին շահագործում, քան բոյարները: 60—70-ական թվականներին դյուդացիների պարաույթները ԽVI դարի հետին համեմատությամբ մերքանի անդամ ավելացան: Ազնվականները ձգտում եյին դյուդացիներին ամեն կերպ ամրացնել իրենց, և մասնավորապես՝ նրանց առմիջու ամրացնել իրենց հողին: Լիւրնական պատերազմը և նախորդ նվաճումները վիթխարի միջոցներ եյին պահանջում: «Պատերազմները, — դրում եր անգլիացի Չենկինսոնը, — իրենց հետ քիչ ծախսեր չեն բերում զարի համար, բայց ամրող ծանրությունը ընկնում է չքալոր բնակչության վրա»: Ճիշտ և, պետությունը մեծ յեկամուտներ ուներ հացի վաճառքից: Հացի վաճառքը ցարի մենաշնորհն եր: Հացն առաջ վաճառում եր ցարը, իսկ հետո՝ մնացած բոյարները: Հացի վաճառքից նա ստանում եր մոտավորապես 200 հազար ռուբլի այն դարաշրջանի փողով՝ այսինքն մոտ 20 միլիոն վոսկի ռուբլի: Բայց այդ փողը չեր բավականացնում: Իշխան Ահեղը, բացի պատերազմի վրա կատարած ծախսերից, ուներ անձնական չափազանց մեծ ծախքեր: Նա անձնապես իր համար ուներ 10 հազար ձի: Թանկ եյին նստում նրա բոլոր խնջույքներն ու տոնախմբությունները:

Անգլիացի Չենկինը այսպես եր նկարագրում ցարի հանդիպականը ճաշը. «...ամեն ինչ մատուցվում եր վոսկե սկուտեղներով վոչ միայն հենց նրան, այլև մեղ բոլորիս, և սկուտեղները մասսիլ եյին. գավաթները նույնակետ վոսկյա եյին ու շատ մասսիլ»:

Իշխան Ահեղը նմանապես յեկամուտ ուներ ողետներից: Ողետները ցարական մենաշնորհ եյին: Յուրաքանչյուր ողետուն տարեկան մոտավորապես 2—3 հազար յեկամուտ եր տալիս: Ի միջիայլոց, գոյություն ուներ մի հետաքրքրական սովորություն: Մարդկանց չեր կարելի ողետնից գուրս կանչել: Յեթի կինը փորձում եր ամուսնուն ողետնից դուրս կանչել, նրան չեյին թողնում: Գտնում եյին, վոր մարդը, նստելով ողետանը, պետական գործ և կատարում: Մինչև վոր նա այնտեղից ինքը դուրս չգար

մերկ ու բորբիկ, վոչ վոք իրավունք չուներ նրան դուրս կանչելու:

Բայց վոչ մի յեկամուտ չեր բավականացնում ցարին, և այս պատճառով կիրառվում եյին զանազան ապորինի տուրքեր:

Հարկերը, զյուղացիության վրա գործադրվող ուժեղ ճնշումը քայլայում եյին նրան, ջլատում եյին յերկը տնտեսական հզորությունը: Այդ քայլայման հետևանքով բնակչությունը փախչում և Ռուսական պետության կենտրոնական շրջաններից: Նա փախչում է դեպի Դոն, դեպի Վոլգա, դեպի Դնեսլը: Այսեղ փախած ճորտ զյուղացիներից կազմվում և աղատ կազմկությունը:

Մոսկվյան պետության կենտրոնի ամայացումը զյուղացիների քայլայման հետևանքով առանձնապես ուժեղացավ իվան Ահեղի թագավորության վերջերին: Ահա, որինակ, Մոսկվայի դավառում 50 հազար դեսյատին վարելահողից իվան Ա-ի թագավորության վերջերին 40%-ն ամայացել եր: Կային շրջաններ, վորտեղ ամայացել եր հողի 90%-ը:

1553 թ. Ռուսաստանի կենտրոնով ճանապարհորդող անգլիացի Ջենսորն ապշում եր Վոլոդուայի ու Մոսկվայի միջև խիտ բնակված կետերի շատության վրա: Նույն ճանապարհորդ, բայց արդեն 1588 թ., անցնող անգլիացի Ֆլետչերը զարմանում եր, վոր այդ շրջանում այդքան շատ ավերված և բոլորովին ամայի գյուղեր են գտնվում:

Իր՝ «Ռուսական պետության մասին» դրքում Ֆլետչերը խոսում է ուստի ժողովրդի սուրկական ու խղճուկ դրության մասին: Նա դրում է. «Բացի հարկերից, տուրքերից, կոնֆինկացիաներից և ցարի կողմէց դրվող հանրային այլ բոնադանձումներից ժողովուրդն այնպիսի թալանի և այնպիսի հարկահանությունների յիշներկված ազնվականների, զանազան իշխանությունների և հասարակական դորձերով ուղարկված ցարավան սուրհանդակների կողմէց... վոր ձեզ պատահում ե տեսնել շատ գյուղեր ու քաղաքներ կես մղոն կամ ամբողջ մեկ մղոն յերկարությամբ բոլորովին ամայի, ամբողջ ժողովուրդն իր նկատմամբ ցուցաբերվող վատ վերաբերմունքից ու բոնություններից ցաք ու ցրիվ և յեղել այլ վայրեր»:

Պահպանվել են ԽVI դարի այսպես կոչված հաշվեհամարային մատյանները, այսինքն՝ հարկերի չափերը սահմանելու նպատակով կատարված առանձին շրջանների տնտեսական նկարագրությունները: Եթե՛ համեմատենք ԽVI դարի 70-ական և 80-ական թվա-

կանոների մեկ շրջանի հաշվեհամարային մատյանների տվյալները, ապա ստացվում ե, վոր բնակչությունը նվազել ե 20—30%-ով:

Առաջ իր բոլոր պարտքերը տալու դեսպօնմ գյուղացին կարող եր աշնանը (Յուրիի որը) մի սեփականատիրոջից մյուսի մոտ անցնել: Այժմ գյուղացիներին Յուրիի որն ել արգելեցին անցնել: Փողովրդական հիշողությունն այդ փաստի մասին պահպաննել ե գեռ մինչեւ այժմ ել գործածվող առածը. «Բոտ տես, բայց և յօրեւ դեն» (Այ քեզ, տատիկ, և՛ Յուրիի որը):

Գյուղացիության քայլայումը, հիմնական արտաքրական ուժի քայլայումը խախտեց պետության հղորությունը:

Այդ ժամանակ Ծուռաստանի համար արտաքին շատ ծանր իրադրություն և կաղմակորվում 1571 թ. Դրիմի խան Դեվլետ Դիրեյի. Մոսկվայի վրա Հարձակվելու կապակցությամբ: Դեռ 1558 թ., յերբ Ծուռաստանը տարված եր Լիվոնական պատերազմի պկզրով, նա փորձում եր անակնկալ կերպով հարձակվել Մոսկվայն պետության վրա: 1571 թ., դրդված դաշտաճան-բոյարների կողմից, վորոնք նրան ստացին, թե սովո՞ւ ու անողորմածությունները թուրացրել են ուռատիան զորքին, Դեվլետ-Դիրեյը Հարցուր Հազարանոց զորքով շարժվեց Մոսկվայի վրա: Յարական զորավարները փորձում եյին պաշտպանվել Մոսկվայի արվարձաններում: Խանը մոտեցավ Մոսկվային և հրամայեց այրել արվարձանները: Ծուռով այրվել սկսեց և քաղաքը: Պոստովները, Կիտայգորուովը, Արբատի վրա գանգող իվան №-ի սիրելի պալատը-բոլորը վոչնչացան Հրդեհից: Բոցերի ճարակ դարձան մեծարակ զինվորներ ու խակիչներ: Այսպիսի իրադրության մեջ Դրիմի խանը հեշտությամբ ջախջախեց Մոսկվայի սակագաթեվ կարաղորը: Դրանից հետո խանն ավելից Մոսկովյան պետության Հարավ-արեւելյան մարզերի մեջ մասը-և վիթխարի ավարով վերաբարձավ իր Տալլիկան: Նա գերի տարավ ավելի քան Հարյուր հազար ուռու: Այսպիսի ծանր իրադրության պայմաններում Իվան IV-ը ձգուում և բոլոր Փետդալներին (բոյարներին ու ազնվականներին) միավորել արտաքին թշնամու դեմ: Այս պատճառով 1572 թ. ուղրիչնինան վերացվեց, մանավանդ, վոր ուղրիչնինայի հիմնական խնդիրներն արգեն իրադրժվել եյին: Ուղրիչնինայի բաղադրականության հետևանքով ինքնակալությունը հաստատվեց թուռաստանում:

Վ. Ի. Լենինը իր մի շաբաթ հոդվածներում ընդգծում եր, վոր ինքնակալությունը հանդիսանում և ճորտատեր-կալվածատերերի

գառակարգի դիկտատուրան։ Լենինյան այդ կարևորագույն թեղիսի խեղաթյուրումը Պոկրովսկու կողմից հասցըն նրա՝ ԽՍՀՄ պատմության մի շարք հարցերի հակալենինյան, հակապատմական մեկնաբանմանը։ Պոկրովսկու հակալենինյան մեկնաբանուեներն ուղարկությունների ժողովրդի թշնամիների կողմից վորագես ծխածածկույթ նրանց՝ ԽՍՀՄ պատմության հիմնական հարցերի իրենց հակահեղափոխական խեղաթյուրումը պատմական գրականության մեջ անցկացնելու փորձի ժամանակ։

Ոպրիչնիկների կողմից զյուղացիության և Դրիմի խանի կողմից գրեթե ամրող յերկրի խիստ քայլայումը թուլացրին Մոսկովյան պետությունը։

Այդ եր պատճառը, վոր Լիվոնական պատերազմը 1578 թվից ծագալվում եր այսպես, վոր Իվան IV-ը հարկադրված եր մի շարք քաղաքներ հետ տալ։ Հարկավ, այսուեղ զեր խաղաց նոր պետությունների—Լեհաստանի, իսկ այնուհետև 1571 թ. Շվեդիայի միջամտությունը։ Բայց այդ անհաջողությունների հիմնական պատճառները պետք ե վնասուել բոյարների դավաճանության մեջ, զյուղացիության՝ պատերազմից և ոպրիչնիկներից կրած քայլայման մեջ, Ռուսական պետության ամրող տնտեսության այներման մեջ։

Իսկ այդ հասցըն այն բանին, վոր լեհերը նոր թագավոր բառորի գլխավորությամբ 1579 թ. Աշեղից հետ խեցին Պոլոցկը և նրա կողմից նվաճված բերուուսական մյուս հողերը, իսկ 1580 թ. գրավեցին ուռուսական միքանի սահմանամերձ բերդեր։ 1581 թ. նրանք փորձեցին հափշտակէլ Պոկովը, բայց Պոկովի հերոսական պաշտպանությունից հետո հետ շարուվեցին ուռուսական սահմաններից, և նրանց հետագա առաջախաղացումը գեղի Ռուսաստան կասեցվեց։

Լիվոնական պատերազմը մզվում եր 24 տարի։ 1582 թ. Լեհաստանի հետ կնքած հաշտությունից հետո Իվան Աշեղը վոչինչ չստացավ, բայց և վոչինչ չտվեց, ինչից սկսեց, նրանով ել վերջացրեց։ Բալթիկ ծովի ափերին տիրելու փորձը հաջողությամբ չպսակվեց։ Նույնիսկ Իվանովորովը, վորը ուռուսական բերդ եր, 1583 թ. Շվեդիայի հետ կնքած հաշտությունից հետո անցավ շվեդների ձեռքը։

Բայց Արևմուտքում կրած անհաջողությունները փոխառուցվեցին ուռուսական պետության նոր ընդարձակումով Արևելքում։ Մոսկովյան պետությունը նվաճեց Արևմտյան Սիբիրի տերիտորիան, Սիբիրի թաթարական թագավորությունը։

## ԱՐԵՎԱՏՅԱՆ ՍԻԲԻՐԻ ՆՎԱԶՈՒՄԸ

ԽՎ դարի վերջում տեղի ունեցավ իրտիշ և Տոբոլ գետերի շուրջը, Բարսրինյան տափաստաններում ապրող թաթարների միավորումը մի միասնական թագավորության մեջ: Այդ թագավորությունը Սիբիրական անունը առացավ զլիսավոր քաղաք Սիբիրից, վորը ընկած եր այժմյան Տոբոլսկ քաղաքից 16 վերստ հեռավորության վրա: Սիբիրի թագավորության սոցիալական իրակարգը նույն եր, ինչվոր նաև թաթարական մյուս խանություններում: իշխանությունը պատկանում եր խանին և խոչոր Փեռքալներին-և մի բներին, մուրզաներին և այլն: Եմիրները, մուրզաները խանի զլիսավորությամբ ճնշում եյին թաթարական կիսամորտ բնակչությանը, ինչպես և թաթարների կողմից նվաճված տեղական ժողովուրդներին՝ խանուերին, մանսիներին և ուրիշ:

ԽՎ դարի 60-ական թվականներին այդ թագավորության գլուխ կանգնեց Քուչում խանը, վորը փորձում եր պայքարի ակտիվ քաղաքականությունն վարել ընդդեմ իր ոուս հարևանների, ընդդեմ Պերմի մարդի:

Այսուեղ Պերմի մարզում դեռ ԽՎ դարում հիմնավորվեցին վաճառական Ստրոգանովները: Արդեն ԽՎ դարի առաջին կեսին Ստրոգանովներն այնքան հարուստ եյին, վոր կարողացան գերություններ փրկանել Մոսկովիայի մեծ իշխան Վասիլի Տյամնուն: Նրանց ժառանգներ Յակով ու Գրիգորի Ստրոգանովները մեծ արտոնություններ եյին վայելում իվան Ահեղի մոտ:

1558 թ. Գրիգորի Ստրոգանովը իվան Խ-ից ստացավ մոտ 150 վերստ յերկարությում զիթիխարի տիրապետություններ: Իվան ցարը հատուկ հրավարտակներ տվեց Ստրոգանովներին տիրելու այն հարուստ հողերին, վորոնք գտնվում են Կամա գետի հոսանքուն դեպի ցած՝ Պերմի յերկրից մինչև Չուսովյայ գետը: Իվան Խ-ը Ստրոգանովներին մեծ իրավունքներ տվեց իրենց նոր տիրապետություններում՝ հարկեր հավաքել, այդ հողերը ձորտ զյուղացիներով բնակեցնել, ամրոցներ կանգնեցնել ու զորք վարձել պաշտպանության համար: Ստրոգանովները կառուցեցին իրենց ամրոցները՝ Կանկարը (1558 թ.) և Կերչեգանը (1564 թ.): Վարձու զորքի ողնությամբ Ստրոգանովները հնազանդության մեջ եյին պահում խանուերին ու այդ հողերի վրա բնակվող մյուս ժողովուրդներին և գիշատիչ կերպով շահագործում եյին տեղական յերկրի հարսաւթյունները: Նրանք Սոլիխէգոդսկի մոտ կա-

առցեցին աղի յեփարաններ, մորթիների առևտուր ելին անում, այսինքն՝ թալանում ելին տեղական բնակչությանը, խլելով նրանից հողը, թանգագին մորթիները—ամույրի, կուլը և այլն:

1572թ. Ստրոգանովներն իրավունք ստացան կազակներ հավագրել՝ պաշտպանելու համար իրենց տիրապետությունները իրենց կողմից կեղեցվող տեղական բնակչությանը անընդհատ հարձակումներից և թաթարական Քուչում խանի հարձակումներից: Վերջինս իր զաղոնի գործակալների միջոցով բազմիցս փորձում էր ճնշված խանակերին ապստամբեցնել Ստրոգանովների գեմ և այլն: Ստրոգանովները վորոշեցին դատաստան տեսնել խանի գրիմին, ընդարձակել իրենց տիրապետությունները և զավթել նոր, մորթեղենով Հարուստ յերկրներ: Նրանք զորք Հավաքեցին կազակներից: Կազակները—ազատ մարդիկ ելին, փախած ճորտերից, քաջարի, կարողանում ելին լավ տիրապետել զենքին: Ալորայի վրա բազմաքանակ կազակային ազատ բնակչություն եր ապրում: Հոչակալիոր Ժիգուլյանը, անտառներում ու կիրճերում թագնվում էլին նրանք ցարական զորքերից, կողոպառում ելին կալվածատերերին և վաճառականական քարավանները: Վորդայի վրա զբաղմունք ունեցող Դոնի կազակների ամենաանվանի առամաներից մեկը, վորք հետո Պերմի յերկիրը փախալ, Յերմակ Տեմփեյի վեհիչն եր: Նա «Ճակումով անհայտ հոդով հոչակալիոր եր», ինչպես ասում ե նրա մասին Ժողովրդական ավանդությունը: Այդ խիզախ առամանին իր ընկերներ իվան կողցոյի, Նիկիտա Պանի և այլ քաջ կորիների հետ Ստրոգանովներն իրենց մոտ ծառայության Հրավիրեցին: «Ունենք ամրոցներ ու հող, բայց զբուժինան քիչ ե: յեկեք մեզ մոտ պաշտպանելու Մեծ Պերմը», գրեցին նրանք Յերմակին ու իր ընկերներին: Յերմակը 800-ից ավելի կազակներից կազմված զրուժինայով 1581թ. ամառն արշավանքի գուրս յեկավ Քուչում թագավորի գեմ: Կազակները լոգում ելին սրբնիքաց ու քարքարոտ Զուսովայա գետով: Զնայած իրենց փոքրաթիվ լինելուն, նրանք իրենց ճանապարհին միքանի անդամ ջախչախնցին թաթարական բազմաքանակ ջոկատների: Տոբոլ գետի ամին տեղի ունեցավ առաջին մեծ ճակատամարտը Քուչումի ազգականի—արքայորդի Մահմեդովուլու թաթարական բազմաքանակ հեծելազորի գեմ: Թնդանոթների ու պիշչալների կրակով կազակները ջախչախնցին հեծելազորը: Մահմեդովուլին փախալ: Իրավիշի վրա յեղած յերկրորդ ճակատամարտում թաթարներն ավելի համառորեն ելին կրվում, բայց Հրազներ կազակներին այստեղ ել հաղթություն բերեց: Թնդանոթների, Հրացանների ու

սիշչալների ձեռքից փախած թաթարներն իրենց թագավոր Քու-  
չումին հայտնում ելին. «Զինվորներ են յեկել այսպիսի աղեղնե-  
րով, զոր կրակ և նրանցից ժայթքում, իսկ յերբ թրվկում ե—  
կառես յերկնքից խփող կայծակ լինի: Նետը չես տեսնում—  
բայց վիրավորում եռ մահացնում, և զոչ մի միջոցով չի կա-  
րելի պաշտպանվել»:

Թաթարներն Հրազեն չունելին: Բայց, այնուամենայնիվ, յերկ-  
որդ հաղթանակը թանգ նստեց կաղակներին: Նրանցից շատերն  
ընկան կովում: Կաղակներից միքանիսը ուզում ելին հետ դառ-  
նալ՝ թաթարները շատ են, իսկ մենք քիչ առում ելին նրանք:  
Յերմակը հաստատուն կերպով ասաց. «Մեր ճանապարհը միայն  
գեպի առաջ ե»: Այժման Տորոտկի մոտ Յերմակին հանդիպեց  
ինքը Քուչումը գլխավոր զորքով: Կաղակներն համարձակորեն ափ  
դուրս յեկան և յերեք կողմից հարվածեցին թաթարներին: Կա-  
տաղի կոմից հետո կաղակները հաղթեցին: Քուչումը փախափ  
իշմի տախաստունները:

1581 թ. Հոկտեմբերին Յերմակը գրավեց թաթարական թա-  
գավորության մայրաքաղաքը—Սիրիր քաղաքը: Կաղակային ատա-  
ման Յերմակ Տիմոֆեյիկիչը դարձակ վիթիսարի յերկը կա-  
ռավարիչ:

Թաթարների դեմ մղած մշտական կոխիներում Յերմակի ջո-  
կառը հալվում եր: Նա իր ոգնականներից իվան կոլցոյին  
ուզարկեց Ստրոգանովների մոտ զեկուցում տալու և ոգնություն  
խորելու: Ստրոգանովներն ու Կոլցոն 1583 թ. ընծա առած  
գնացին Մոսկա իվան Ահեղի մոտ «Հովնանին նվիրելու Սիրիրի  
թագավորությունը, թանգագին սամույրներ, սեազորչ սոլիսներ  
ու կուղրեր»: Իվան Ա-ը Սիրիրն առավ իր «բարձր հովանավո-  
րության» տակ և Ստրոգանովներին առատորեն նոր կարվածքնե-  
րով պարզեատրեց:

Յերմակին իվան ցարը ընծայեց արծաթե կանթափոր թա-  
գինի խմելու, իր հազի մուշտակը և այլ առարկաներ, մասնավո-  
րապես յերկու ծանր զրահ:

Հետագայում Յերմակի ջոկատը մաս-մաս ջարդվեց թաթա-  
րական զորքերի կողմից: Յերմակը մնաց միքանի հարյուր կա-  
ղակներով, իսկ Ռուսաստանից ոգնություն չկար: Թաթարների՝  
նրա բանակատեղի վրա հարձակմելու ժամանակ, ըստ ավանդու-  
թյան, 1584 թ. ոգոստոսին, ազատվելով թաթարներից, Յերմա-  
կը նեազեց Խրտչի մեջ և խեղդվեց: Քուչումը նորից վերա-  
կանգնեց իր իշխանությունը Սիրիրի թագավորության մեջ: Սա-

կայն վոչ յերկար ժամանակով։ Արդեն իվան Ահեղի մահից Հետո, Ֆյուզոր իվանովիչ ցարի որով Ռուսաստանից նոր գորքեր ուղարկվեցին, և Սիբիրը վերջնականապես նվաճվեց։ Կառուցվեցին շատ քաղաքներ՝ Տորոլսկը (1581 թ.), Տյումենը (1586 թ.), Տոմսկը և ուրիշ։ 1598 թ. ցարական զորավարները Քուչումին գուրս քշեցին Սիբիրից, իսկ XVII դ. սկզբին՝ Արևմտյան Սիբիրը գարձակ ուստական ընդարձակ պետության բաղկացուցիչ մասը։ Մկանից այդ հետամնաց, սակավաբնակ յերկրի յուրացումը, — նրա արտադրողական ուժերի գարգացումը։ Բայց ցարական իշխանությունը յասակ (մորթեղենով տրվող հարկ) դրեց տեղական բնակչության վրա, վորն անհավատալի կողոպուտների ու բռնությունների յեր յինթարկվում նվաճողների կողմից։

Այսպես իր թագավորության ժամանակաշրջանում իվան Ահեղը նշանակելիորեն ընդարձակեց ուստական սեհությունը, ուստական ազգային պետությունը վերածեց բազմազդ պետության։

## ԻՎԱՆ ԱԶԵՂԻ ԺԱՄԱՆԱԿԻ ԿՈՒԼՏՈՒՐԱՆ

Կուլտուրական տեսակետից XVII դարի Ռուսաստանը հետամնաց յերկիր եր։ Նույնիսկ տարբերական գրադիտություն ունեցող մարդիկ այդ ժամանակ շատ քիչ կային։ Ճնշված գրուղացիությունը գլխովին անդրագետ եր։ Թևական և իվան Ահեղը յերիտասարդ բոյարներին ու ազնվականներին սովորելու յեր ուղարկում արտասահման «զանազան լեզուների ու գիտությունների մեջ վարժվելու համար», բայց ցարական պալատում դանվող բոյարների ու ազնվականների մեջ շատ անդրագետներ կային։ Մասկայում արդ ժամանակ կառավարական վոչ մի գպրոց չկար։ Գոյություն ունեցին միայն մասնավոր վուքրիկ ուսումնարաններ՝ յեկեղեցիներին կից։ Նրանցում դասավանդում ելին հոգեռորականության ներկայացուցիչները և հազվագյուտ գեպքում աշխարհիկ մարդիկ։ Այդպիսի ուսումնարաններում սովորաբար ուսունում ելին միքանի յերիտաներ։ Մեկ ատանյակից ամելի աշակերտ ունեցող ուսումնարանները շատ հազվագյուտ ելին։ Սովորում ելին 2—3 տարի։ Սովորեցնում ելին յեկեղեցական գրքերի (ժամագրքի ու ուղմոսի) ընթերցանություն, գրել և յեկեղեցական յերգեցողություն։ Մինչև անդամ հոգեռորականությունն իր մեծամանությամբ սակավ գրակետ եր։

XVII դարի առաջին կեսում գրքերը բացառապես ձեռադրեր

Եյին։ Հոգեորբականության շատ ներկայացուցիչներ ու կուսակրաներ զբաղվում եյին «գրությամբ գրյանց փոքունց», վորքվասնուառցման մանկանց փոքրիկանց», այսինքն՝ ձեռքով այլքենարաններ եյին գրում։ Միայն ԽVI դարի յերկրորդ կեսին Ռուսաստանում յերեան և գալիս գրքերի տպագրությունը։

Իվան Ահեղը, վորպեսզի փառարանի իր ինքնակալ իշխանությունը և կովի բոյարների ու իշխանիկների գեմ, 1553 թ. հրամացեց տպարան ստեղծել և կառավարական մենաչնորհ սահմանց գրքերի հրատարակման վրա։ Գրքերի տպագրության դլուխ դրվեց Իվան Ֆյոդորովի ողնական Գյուրը Տիմոֆեյեվի (Մատիսյացու) հետ։ Ֆյոդորովը Մոսկվայի յեր։ Նա կրեմի յեկեղեցիներից մեկի սարկավագն եր։ Պյուրը Տիմոֆեյեվը ծաղումով Մատիսյավլ քաղաքից եր (այժմ Բելոոռուսական ԽՍՀ)։ Մինչեւ Մոսկվա գալլ նու ծանոթ եր տպագրական գործին։ Նա այն հիմնավորապես սովորել եր Հարավ-արևմտյան մոռսիայում, վորտեղ գրքերի տպագրությունը յերեան եր յեկել՝ XVII դարի առաջին կեսին։ Ֆյոդորովին ու Տիմոֆեյեվի տասը տարի առաջին կետովյան պետության մեջ առաջին տպարանը ստեղծելու վրա։ Այն ստացավ «Տպագրատուն» անունը։ Կրօնական բովանդակության առաջին գիրքը («Առաջյալ») նրանք տպել սկսեցին 1563 թ. ապրիլին և վերջացրին 1564 թ. մարտի մոտեբքը։

Ռուսական արտագրության այդ առաջին գրքի սակեղծման մեջ զիմանքը գերը պատկանում եր Իվան Ֆյոդորովին։ Նա ինքն եր ձուլում տառերի կաղապարները և հենց տառերը։ Նա ինքն եր առաջին գրաչարը, յերես կազող և նույնիսկ սրբագրիչը։ Այս թե ինչու մեր Հայրենիքի պատմության մեջ նա մտել և վորպես ուռական նախատպագրիչ։ 1909 թ. կանգնեցրին նրա հուշարձանը, վորը ներկայում ել կանգուն և Մոսկվայում, Սվերդլովի Հրապարակից Զերժինսկու Հրապարակը տանող մուտքի մոտ, վոչ հեռու այն տեղից, ուր մի ժամանակ «Տպագրատուն» եր գլուխություն։ Ֆեոդորովին իր գործի սքանչելի մասնավետ եր և գրատպությունն իր կյանքի միակ նպատակն եր համարում։

«Տպագրատունը» գոյություն ունեցավ մինչև 1568 թ.։ Հրատարակվեցին կրօնական բովանդակությամբ միքանի տպագրի դրեր։ Բայց տողագրի գրքերի յերեան գալլ խախտում եր «դըրքեր ընդորինակուների», ասինքն՝ արտագրող-կուսակրոնների շահերը։ Ռեակցիոն Հոգեօրականությունն ու բոյարությունը նույնպես Հայուսակ եյին որատադրիլած այլ նորմուծությանը։ «Մոսկվայում մենք գրատպարան սարքեցինք, — գրում ե ինքը

Ֆեոդորովը հետագա հրատարակության վեքերից մեկի վերջառանում, —բայց հաճախակի մենք սկսեցինք դաժանագույն դաղման յենթարկվել վոչ թե իրեն ցարի կողմից, այլ շատ պետքի, սրբազն-պետքի ու ուսուցիչների կողմից, վորոնք դեպի մեզ տածած նախանձից, կասկածեցին մեզ զանազան հերետիկոսությունների մեջ, ցանկացան բարիքը չարիքի փոխել և ասուծու զործը ի վերջո կործանել, վոչ այն պատճառվ, վոր նրանք շատ գիտուն եյին կամ լցուն հոգեուր բանականությամբ, այլ հենց այնպես զուր տեղը մեր մասին չար խոսք տարածեցին»:

Ուեակցիոնների կողմից կազմակերպված ու գրգռված ամրութ 1568 թ. տպարանն այրեց: Նախատպագրիչն իր ոգնականի հետ ստիպված յեղավ Մոսկվայից փախչել: «Այդ նախանձն ու ատելությունը, —գրում և Ֆյոդորովը, —մեզ հարկադրեցին թողնել մեր յերկիրը, աղջն ու հայրենիքը և փախչել ոտար, անձանոթ կողմեր»:

Նույն 1568 թ. Իվան IV-ի հրամանով տպարանը վերականգնվեց: Յերկու վարպետներ, վորոնք առաջ վորպես վարպետացուներ ոգնում եյին նախատպագրիչին, ձեռնամուխ յեղան նոր զրբքերի հրատարակմանը: Բայց Մոսկվայի 1571 թ. հոգեհի ժամանակ տպարանն այրվեց:

Յեվ միայն 1577 թ. Իվան Ա. հեղը իր մոտ՝ Ալեքսանդրովոկայա ավանում կազմակերպեց մի փոքր տպարան, բայց այդ տպարանը չեր կարող բարպարել գրքերի ամբողջ պահանջը: 1582 թվին Ռուսաստան այցելած մի ոտարերկրացու վկայությամբ «ոռուններն իրենց լուրու գրքերն արտադրում են և վոչ թե տպագրում, միայն քիչ-քիչ բան տպելու յև արվում իրեն թագավորի չամար Ալեքսանդրովոկայա ավանում, վորտեղ նա իր տպարանն ունի»:

Ֆյոդորովն անակնկալ կերպով ընկալ Լեհաստան, հետման Խոգեկելիչի մոտ: Բայց վերջինս շուառվ հրաժարվեց ոգնել նրան զրքեր հրատարակելու և Ֆյոդորովին առաջարկեց թողնել սիրելի զբաղմունքը և զբաղվել յերկրագործությամբ: Մեծ գժվարությամբ հաջողվեց Ֆյոդորովին աշխատանք գտնել իշխան Կանոանանին Ռուսութեալու մոտ, վորը բազմաթիվ կարվածքներ ուներ Վոլինում, Գալիցիայում և Պոգոլիայում:

Աստրոգ քաղաքում 1581 թ. Ֆյոդորովը տպագրեց հռչակագոր «Ռուսութի աստվածաշռունչը»: Այդ գարաշը թանում նա հանդիսացավ տպագրական արվեստի վերջին նվաճումը: Բոլոր

ըրեմաները, զարդանկարները և այլն ինքը Ֆյոդորովը պատրաստեց և ձուլեց: Այդ հրատարակությունից հետո նա այնուամենայնիվ չկարողացավ նոր աշխատանք դանել իր համար: Լեհական մագնատները ամենենին չելին հետաքրքրվում վոչ-անհայտ տպագրիչի վիճակով, և քիչ ելին հոգ տանում գրատպության վիճակի մասին: Ֆյոդորովը միջոցներ չուներ նույնիսկ այն բանի համար, վոր հետ գներ ինչ-վոր մի վաճառականի մոտ գրավ դրած իր տպագրական պիտույքները: Կյանքի վերջին տարիներին ոռու հոչակալվոր նախատպագրիչը նույն վիճակի մեջ ընկավ, ինչ վիճակի մեջ ընկել եր քառասուն տարի առաջ բելոռուսական գրատպագրիչ Ֆ. Սկարինը: Իվան Ֆյոդորովը մեռավ 1583 թ. գեկտեմբերին Լվովում (Գալիցիա), մոռացության ու անուշադրության մատնված, սարսափելի աղքատության մեջ: Այն գերեզմանաքարի վրա, վորի տակ հանգչում և նրա աճյունը, պահպանվել և հետեւյալ արձանագրությունը. «Հոհան Ֆյոդորովիչ, Մոսկովյանի տպագրիչ, վորն իր ջանացողությամբ տպագրությունը լրումից վերանորոգեց», այսինքն այս տպագրիչը՝ Գալիցիայում մինչ այդ լրիած տպագրական գործը վերանորոգեց: Արձանագրության վերջում մեկ անգամ ևս ընդգծվում ե, վոր նա յեղել և «մինչև այդ շտեսնված գրքերի տպագրիչ»:

Ուռւսաստանի կուլտուրայի զարգացումը ԽVI դարում չեր սահմանափակվում միայն գրատպագրության ծնունդով:

ԽVI դարը ուռւսական ազգային ճարտարապետության ծաղկման դարն էր: Ի հիշատակ Կազանի նվաճման Իվան IV-ը 1555—1559 թ. թ. Մոսկվայում կառուցեց Պոկրովսկի մայր յեկեղեցին, վորը կոչեց Վասիլի Յերանելու մայր յեկեղեցի: Այն կառուցել են ոռու ականավոր ճարտարապետներ Բարբանն ու Պոստնիկը: Մայր յեկեղեցու կառուցման ժամանակ յերեվան բերին վոչ միայն իրենց ճարտարապետական տաղանդը, այլ և ցուցաբերեցին ճարտարագիտական փայլուն ընդունակություններ: Նրանց սարսածածկերն ավելի քան 300 տարով կանին են վերածածկերի ժամանակակից տեխնիկան: Վասիլի Յերանելու մայր յեկեղեցին մինչև այժմ հանդիսանում է հին ոռուսական աղքային ճարտարապետության ամենահոյակապ հուշարձանը: Այն ժամանակ այդ տաճարի հոյակապությունը զարմացնում եր Մոսկվյան պետություն յեկող բոլոր ոտարերկրացիներին: Ուռւսական ճարտարապետության գլուխ գործոց ե հանդիսանում նմանա-

պես Աղոսկվայի մոտի Կոլոմենսկոյի գյուղում մինչև այժմ պահպանված յեկեղեցին:


XVI դարում Ռուսաստանում գեղանկարչության մեջ գլխավոր տեղը բռնում էր պատկերանկարչությունը, բայց XVI դարի կեսից զարգանում է աշխարհիկ նկարչությունը: Պարատների, դրեթի միջի մանրանկարների նախշազարդումը մեծ հաջողությունների յի հասնում: Աշխարհիկ գեղանկարչությունը զարգուրում էր ցարական Գրանովիտայա, Վոսկե և մյուս պալատները. պատկերվում ենին տարվա չորս յեղանակները, չորս հոգմերի դեմքերը, առաջինություններն ու մոլությունները:

Իվան IV-ի որով բայնորեն զարգանում է զբականությունը: Ճիշտ և, նրանում գերիշխում են յեկեղեցական մոտիվները, բայց արդեն նկատվում է շըջագարձը նաև գեսի աշխարհիկ գրականության կողմը: Աներկրայի լիորեն աշխարհիկ սուլդագործություն և հանդիսանում հոչակալոր «Դոմօստրօյ»-ը («Ծննդարարություն»): Այն աբացոլի և այն ժամանակի ուսուկանքի կենցաղագլին բոլոր կողմերը: «Դոմօստրօյ»-ում զուցումներ կան, թե ինչպես դատիքաբակել յերեխաներին, ինչպես վարել տնտեսությունը, ինչպես պահել տունը և այլն: «Դոմօստրօյ»-ը, արտացոլելով ինքնակալության ամրապնդումը Բուսաստանում այն ժամանակաշրջանում, ամուսին-հոր անսահմանափակ իշխանությունն էր հաստատում ընտանիքում: «Դոմօստրօյ»-ը XVI դարի գրադիտ մարդկանց ընթերցանության սիրելի գիրքն էր: XVI դարի ուսունականություններից մեկը մետրոպոլիտ Մակարին էր: Նա հեղինակեց հոչակալոր «Степенная книга»-ն («Ծննդարարություն»), վորի մեջ շարադրված էր ուսուցարերի պատմությունը Խյութիկից մինչև 1559 թ.:

Իվան Ահեղը մեռավ 1584 թ.: Մոսկվյան պետությունն այդ ժամանակ արդեն խռորապես ու ամենաուժեղ բազմազդ պետություններից մեկն էր վոչ միայն այն ժամանակվա Յեկառապայում, այլև ամբողջ աշխարհում: Դրա հետ մեկտեղ գյուղացիության մասսաների շահագործման ու հետագա ճորտացման ուժեղացման քաղաքականությունը, ինքնակալ ցար Իվան Ահեղի ազնվականների մնալու ճորտ գյուղացիության վրա, ժողովրդական մասսաների քայլացումն XVII դարի ոկզում առաջացնում են աշխատավորների ուժեղացրած դիմակրությունը ճորտատիրական կեղեքմանը և հացնում են Բուսաստանի պատմության ժեղ առաջին խոշոր գյուղացիական ապատամբության ընդդեմ

բոյտըների ու կալվածատերերի ֆիզան Իսայելիչ Բոլոտնիկովի  
ղեկավարությամբ։ Գյուղացիական այդ ապստամբությունն ընդ-  
դեմ իրենց կողեքիչների և ռուս մեծ ժողովրդի հերօսական պայ-  
քարը լեհական ինտերվենտների գեֆ XVIII դարի սկզբին ԽՍՀՄ  
պատմության մեջ մտել են վորպես մեր մեծ հայրենիքի ժողո-  
վուրդների հերոսական անցյալի ամենավառ եջեք։







## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

67

Առաստանի եկամուճիան XVI դարի առաջին կետում	3
Թոյարական ինքնիշխանության տարիները	12
Մուկվայի պատուի ապօտաբռությունը 1547 թ. և Խան IV-ի ուխամներ	18
Կազմի և Առարախանի նյանամբ	28
Կայերի ընդարձակումն արտասահմանի հետ	27
Հիվանդանության պատերազմը	42
Սպրիչնինա	49
Արևմույն Արքիրի նվաճումը	60
Խյան Ահեղի ժամանակի կալառացն	63

**Թորգմանոց Հ. Հայրարյան**

**Խմբագիր Բ. Կ. Դավթյան**

**Տեքստ. Խմբ. Ա. Խաչատրյան**

**Սրբագրիչ Վ. Զիգեզյան**

**Գումարու պրազրիչ Շ. Աբովյան**

**Գլամիկուր լիազոր № 9—2525, հրատ. № 727.**

**Գամալիլ № 193, տիրած 5000**

**Քայլի չափավ 60×92<sup>10</sup> (88.400 տպ. նիշ. 1 տպ. մասնակում)**

**4 1/2 տպ. մասնաւ, 2 1/4 թիրթ թուղթ.**

**Հանձնված և տրամադրության 8/IX 1939 թ.**

**Ստորագրված և տպագրելու 10/X 1939 թ.**

**Դինը 1 ռ. 50 կ.**

**Քայլարարական գրականության պետական հրատարակչության  
տպագրուն, Եկրանի, Ալլանդերյան № 65**

ఎక్స్‌ప్రై




ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



220032615

ԳԻՒԾ 1 Ո. 50 Կ.



Б. ВЕРХОВЕНЬ  
РОССИЯ В ЦАРСТВОВАНИЕ  
ИВАНА ГРОЗНОГО

Государственное издательство полит. литературы  
Ереван ● 1939